Գեւորգ Պողոսյան
Ռուբեն Նաղդյան



Աճը փոխակերպվող հասարակությունում

32
Պ-79

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

4108

ԱՆՁԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2008

ՀՏԴ 159.9:1/14
ԳՄԴ 88.5+87

Պ 797 Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Պատասխ. խմբագիր՝ փիլ. գիտ. թեկն.
Մ.Ա. Հարությունյան
Գրախոսներ.
սոցիոլոգ. գիտ. դ-ր, պրոֆեսոր Յու.Ա. Գասպարյան,
հոգեբ. գիտ. դ-ր, Ս. Ֆ. Հարությունյան

Պողոսյան Գ.Ա., Նաղդյան Ռ.Մ.

Պ 797 Անձը փոխակերպվող հասարակությունում: -Եր.: «Մարվարդ» հրատ., 2008.- 112էջ:
(Հայաստանի Հանրապետության Գիտ. Ազգային Ակադեմիա, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ):

Այնպես, ինչպես զարգացման ցանկացած գործընթաց, հասարակության զարգացումը ևս ունի իր կայուն և անկայուն, փոխակերպվող, անցումային շրջանները: Այսօր մենք հենց փոխակերպվող հասարակության մեջ ենք ապրում և այդ փոխակերպման գործընթացն անդրադառնում է մեզանից յուրաքանչյուրի հոգեբանության վրա: Հենց այդ ազդեցության վերլուծությանն է ավիրված այս աշխատությունը: Այն նախ և առաջ ուղղված է սոցիալական հոգեբաններին, սոցիոլոգներին, անձի հոգեբանությամբ զբաղվող մասնագետներին, փիլիսոփաներին, կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են անձ - հասարակություն փոխհարաբերության ու փոխազդեցության հարցերով:

ԳՄԴ 88.5+87

ISBN 978-99941-999-7-6
© Պողոսյան Գ. Ա., Նաղդյան Ռ.Մ. 2008 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք ---------- 4

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1.1. ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ---------- 5
1.2. ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ---------- 32
1.3. ԱՆՈՄԻԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ---------- 45

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ԱՆՁԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2.1. ԱՆՁ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ---------- 49
2.2. ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ---------- 51
2.3. ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ---------- 68
2.4. ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԸ ---------- 76
2.5. ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐՋԱՆՈՒՄ ---------- 80
2.6. ԱՆՁԻ ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ---------- 83
2.7. ՍԱՍՆԱՏՎԱԾ ՍՈՑԻՈՒՄ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՎԻՃԱԿՆԵՐԸ ---------- 91
2.8. ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐՋԱՆՈՒՄ ---------- 105

ՄՈՒՏՔ

«Հասարակություն» հասկացությունը լայն իմաստով սահմանվում է որպես «...մարդկանց համախմբման այն բոլոր ձևերի և փոխազդեցության միջոցների ամբողջություն, որում արտահայտվում է մարդկանց՝ միմյանցից համակողմանի կախվածությունը»[1]: Անձը հասարակական հարաբերությունների մեջ ընդգրկված, համատեղ գործունեություն և շփում իրականացնող մարդն է, սոցիալական հարաբերությունների և գիտակցական գործունեության սուբյեկտը:

«Անձ» և «հասարակություն» երևույթների միջև գոյություն ունեցող հարաբերությունները կարելի է բնութագրել որպես փոխկապվածություն, փոխպայմանավորվածություն: Անձն ու հասարակությունը միմյանցից անկախ գոյություն ունենալ չեն կարող, չի կարող գոյություն ունենալ «հասարակական ռոբինզոն»՝ անձ առանց մարդկային հասարակության: Ցանկացած անձի գոյություն, ցանկացած անձի կյանք, թեկուզ միայնակ, ոչ խմբում այնուամենայնիվ հասարակական կյանքի դրսևորում ու հաստատում է: Մյուս կողմից անձը հանդես է գալիս որպես հասարակության «ատոմ», «աղյուս», որով կառուցվում են մարդկային խմբերն ու հասարակությունն ամբողջությամբ: Անձ - հասարակություն փոխհարաբերությունների, փոխազդեցությունների հարցը, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր շարունակում է մնալ որպես բարդագույն հիմնախնդիր: Այդ հիմնախնդրի պահերից մեկն է մեր հետազոտության առարկան՝ այն, թե հասարակական մի գոյանձնից մյուսին անցումը, ինչպես է անդրադառնում անձի վրա, ինչ հոգեբանական հիմնախնդիրների առաջ է կանգնեցնում անձին: Այս հետազոտությունը կարելի է դիտել որպես յուրահատուկ ներհայեցողություն ու ռետրոսպեկցիա այն հոգեբանական գործընթացների, որ տեղի էին ունենում մեր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներիս մեջ, երբ փլուզվում էր խորհրդային հասարակարգն ու ձևավորվում էր կապիտալիզմը:

[1] *Современная западная социология: Словарь. М., Политиздат, 1990, с. 233.*

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1. 1. ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասարակությունը, որպես համակարգ, քարացած վիճակում չի գտնվում, այն անընդհատ զարգացում է ապրում՝ ունենալով իր կայուն շրջանները, յուրահատուկ ճգնաժամերը, վերելքներն ու վայրէջքները: Հասարակության պատմական ընթացքի դիտարկումներն ու վերլուծությունները հանգեցրել են փիլիսոփայության ու սոցիոլոգիայի մեջ զարգացման երկու տարբեր՝ պարբերաշրջանային (ցիկլիկ) և գծային, տեսությունների ձևավորմանը: Կարելի է ասել, որ երկուսի հիմքում էլ աստվածաշնչյան կամ հին արևելյան փիլիսոփայական դրույթներ են: Ըստ առաջին մոտեցման՝ ամեն ինչ կրկնվում է, ոչ մի նոր բան չի առաջանում. աստղաբաշխական, կենսաբանական, առօրյա կյանքի փուլերի նմանությամբ գոյություն ունեն նաև քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային կյանքի պարբերական փուլեր, որոնցով էլ բացատրվում է կառավարությունների, պետությունների զարգացման ու անկման փուլերի, միջազգային ու ներպետական լարման փուլերի ու կայուն շրջանների հերթագայումը: Սա, իհարկե, չի նշանակում, թե փուլերն իրար կրկնում են նույնությամբ. յուրաքանչյուր հաջորդ կրկնություն այլ մակարդակի վրա է գտնվում՝ պարույրի նմանությամբ:

Ըստ երկրորդ տեսության՝ մարդկության պատմությունը շարժվում է դեպի որոշակի նպատակ, իսկ յուրաքանչյուր պատմական փուլ ու իրադարձություն այդ նպատակի իրականացման ճանապարհին իր դերն է կատարում: Այս տեսությունն ի վերջո հանգեցնում է անընդհատ զարգացման մտքին: Սոցիալական ու պատմական զարգացումը կարելի է դիտարկել որպես տիեզերքի, Արեգակնային համակարգի, Երկրի զարգացման հսկայական գծի մաս: Ընդ որում, զարգացման պրոցեսներն ուղղված են ամբողջի բոլոր մասերի ներդաշնակացմանը, կառուցվածքային ու ֆունկցիոնալ համապատասխանեցմանը:

Սակայն չպետք է մոռանալ, որ «ցանկացած համակարգի զարգացում իրենից ներկայացնում է համակարգի կառուցվածքի բարդրացում և բարդացում: Բայց զարգացման ընթացքում անհամապատասխանությունների ու աններդաշնակությունների կուտակումը կարող է հանգեցնել համակարգի անկմանը»[2]:

[2] Социология. Курс лекций. Ю.Г. Волков, В.Н. Нечипуренко, А.В. Попов, С.И. Самыгин. Феникс, Ростов-на-Дону, 1999, с. 161.

Ձրևէ սոցիալ-տնտեսական համակարգի անցումը մեկ այլ համակարգի տեղի է ունենում սոցիալական հեղափոխությունների՝ հասարակական կյանքի արմատական հեղաշրջման միջոցով: Իսկ պատճառը հիմնականում լինում է հասարակության արտադրական ուժերի աճման և հնացած, պահպանողական արտադրական հարաբերությունների համակարգի միջև կոնֆլիկտի խորացումը, որն արտահայտվում է սոցիալական բշնամանքի ուժգնացումով:

Այս երկու տեսություններից ոչ մեկն էլ ակնհայտ առավելություն և գերակայող հավաստիություն չունի, և «մաքուր» վիճակում երկուսն էլ քննադատվում են: Սակայն դրանց միջև մենք հակասականություն չենք տեսնում, կարևորում ենք այն փաստը, որ զարգացման այս երկու տեսություններն էլ հասարակության զարգացումը չեն դիտում որպես այն կազմող անհատների զարգացումից անկախ երևույթ: Նույն ձևով էլ վերջիններիս զարգացումը հասարակության զարգացման անմիջական ազդեցության տակ է գտնվում: Հասարակությունը բազմաչափ երևույթ է, իսկ դրա համար որպես նախադրյալ հանդես է գալիս մարդու համակողմանի բազմաչափ էությունը, որը նրան թույլ է տալիս իր մեջ ամփոփել ու ներդաշնակ կերպով միավորել երբեմն իրար հակասող կենսաբանական, մշակութային ու սոցիալական երևույթները: Սինհնույն ժամանակ մարդը հակասական էակ է. նրանում անընդհատ պայքար է գնում այդ հակասական երևույթների (օրինակ՝ ոացիոնալի և իռացիոնալի) միջև: Նրա հակասականությունը զգալի է նաև հասարակության մեջ. անընդհատ անկախության ու ազատության ծգտելով՝ նա միաժամանակ նաև փոխադարձ կապերի ու կախվածությունների մեջ է մտնում: Անհատների անկախության կամ կախված լինելու երևույթը հանդես է գալիս որպես պատմական տեսանկյունից ելակետային, բարձր ու իումանիստական չափանիշ հասարակության տարբեր ձևերի ու զարգացման աստիճանների դասակարգման համար: Մարդ էակի՝ ազատության հանդեպ ունեցած հակասական այս ծգտումն էլ հենց ընկած է պատմական ու հասարակական զարգացումների ու անցումների հիմքում:

Հասարակական զարգացումներն ու անցումներն իրենց հետ բերում են հասարակական կյանքի բազմաթիվ փոփոխություններ: Իսկ հասարակական կյանքի այն հիմնական կողմերը, որոնք իրենց վրա են կրում այդ փոփոխությունները, տարբեր կերպ են բնորոշվում տարբեր հեղինակների կողմից: «...Կարելի է առանձնացնել մարդկային կյանքի երեք հատուկ ձևեր. հասարակության, որպես ամբողջական համակարգի մեջ մարդու վիճակը՝ անկախ կամ կախյալ, երա ստարված լինելը; մարդու գործունեության որակը, մարդկային մշակույթի բնույթը, որպես գործունեության արդյունքների ու միջոցների ամբողջություն՝ վերաբտադրողական, առօրյա կամ հակառակը՝ նորարարական ու արդյունավետ գործունեությունը (համապատասխանաբար՝ ավանդական կամ ժամանակակից հասարակություններ); հասարակարգային տիպը՝ աշխատանքային գործունեության ընթացքում մարդկանց միջև սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնույթը՝ ...նախնադարյան-համայնականից մինչև սոցիալիստական հարաբերություններ: Ամբողջականության մեջ սրանք կազմում են մարդկային եռաչափ տարածությունը»[1]:

Մարդկային կյանքի այս ձևերից բացի, առանձնացվում են նաև մարդկային կյանքի բնական-հասարակական չափորոշիչներ՝ հասարակական-էկոլոգիական տարածությունը, որպես կենսագործունեության միջավայր ծառայող հասարակական ծանրաբեռնվածությամբ տարածություն, և հասարակական ժամանակը, այսինքն, մարդկանց անհատական ու կոլեկտիվ կյանքին հատուկ տևողությունն ու ոիթմերը, դրանց հարաբերությունը բնության ու տիեզերքի ոիթմերի հետ:

Տարբեր հասարակություններում տեղի ունեցող մարդկային կյանքի այս բոլոր կողմերի փոփոխությունները տարբեր ժամանակաշրջաններում օրինաչափ կերպով ընկալվում են միմյանց: Մարդկանց մոտ միևնույն սոցիալ-հոգեբանական գծերի կամ հոգեբանական հիմքեր ունեցող միևնույն վարքի ձևերի ի հայտ գալը հնարավոր չէ բացատրել միայն այդ երևույթներն առաջ բերող պատճառների նույնությամբ կամ ընկալությամբ. անհնար է անտեսել հասարակական շփումը, հաղորդակցությունը, որը միշտ առկա է: Իհարկե, այնպիսի հոգեբանական վարքի ձևի մասին, ինչպիսին ինքնասպանությունն է, հնարավոր է ասել, որ դրա պատճառները հիմնականում միևնույն բնույթի են լինում, իսկ ինքնասպանություն գործող անձինք միմյանց հետ չեն հաղորդակցվում, միություններ չեն կազմում, սակայն ինքնասպանությունների օրինակը բացառիկ դեպքերի շարքին է դասվում, չնայած նույնիսկ այս դեպքում է հնարավոր ասել, որ նման դեպքերի մասին լսած լինելը ևս կարող է ազդեցության իր բաժինն ունենալ, հատկապես որ հայտնի են մասսայական, մի տեսակ վարակիչ բնույթ ունեցող ինքնասպանությունների դեպքեր: Ամեն դեպքում, գրեթե միշտ միասնման սոցիալ-հոգեբանական երևույթները միմյանցից լրիվ մեկուսացած ոլորտների մեջ չեն գտնվում: Սակայն նրանց փոխհարաբերությունները հանդես են գալիս ոչ թե միաժամանակ, այլ ժամանակի մեջ ծգված յուրահատուկ շղթա-

[1] *Наше общество в трех измерениях. В авторской редакции член-корреспондента РАН Н.И.Лапина, канд.филос.наук Л.А.Беляева. М., 1994. с. 9-10.*

յական բնույթ են կրում: Հենց «շղթայի»՝ հաղորդակցության միջոցով են ձևավորվում հասարակական տրամաղրության այս կամ այն տարրերը, իսկ ավելի ընդհանուր, լայն իմաստով՝ հասարակական զարգացումների հիմքերը:

Ինչպիսի էլ լինեն հասարակական զարգացումների պատճառներն ու հիմքերը, որպես համակարգ հանդես եկող ցանկացած հասարակություն, ժամանակ առ ժամանակ իր զարգացման մեջ մի փուլից մյուսին է անցնում, կայուն շրջաններին փոխարինում են անկայուն շրջանները: Ըստ որում, ինչպես իրավացիորեն նշում է Օ.Ա. Անդրեևան[4], անկայունության բացասական իմաստը միայն մեր գիտակցության մեջ է, իսկ իրականում այն զարգացման նորմատիվ գործընթաց է, որի իմաստը իրեն սպառած համակարգի վերակառուցումն է: Այլ խոսք է, որ այդ վերակառուցումը կարող է տեղի ունենալ շատ սահուն ու աննկատ կերպով, և ընդհակառակը՝ կարող է վերածվել ճգնաժամի, ընդհուպ միմչև արյունալի հեղափոխությունների: Ըստ որում, առանձնացվում են հասարակության մասնակի և ընդհանուր ճգնաժամեր: Մասնակի ճգնաժամերը սահմանափակվում են երկրի որոշակի հատվածով, ռեգիոնով կամ հասարակության որոշակի ոլորտներով, այն դեպքում, երբ ընդհանուր ճգնաժամն ընդգրկում է երկիրն ամբողջությամբ, վերաբերում է հասարակության բոլոր շերտերին:

Ինչպիսի ընթացք էլ ստանան այդ փուլային անցումները, ճգնաժամերը, ժամանակագրական ու հասարակարգային իմաստով ինչպիսին էլ լինեն նախորդող ու հաջորդող փուլերը, միևնույն է՝ անցման շրջանները բոլոր դեպքերում մեծ ընդհանրություններ ունեն և կրում են «անցումային հասարակություն» անվանումը:

Որոշ ժամանակից ի վեր մարդկությունը սկսել է ոչ այնքան հարմարվել շրջակա բնական միջավայրին, որքան ակտիվորեն կերպարանափոխել, հարմարեցնել այն իր կարիքներին ու ձգտումներին:

Կան մի խումբ երկրներ, որ գտնվում են զարգացման տարբեր փուլերում, և այդ պատճառով էլ դրանից ոմանք ստիպված են հարմարվել այն սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական պայմաններին, որոնք զարգացած երկրների ջանքերի ու գործունեության շնորհիվ են ձևավորվել աշխարհում: Այլ կերպ ասած, մարդկային հասարակության մի մասը հարկադրված է հարմարվել «արտաքին պայմաններին», որոնք առավելապես ստեղծված են

[4] Андреева О.А. Стабильность и нестабильность в контексте социокультурного развития. Таганрог: ТИУиЭ, 2000.

մարդկային հասարակության մյուս մասի ուժերով: Այդ յուրատեսակ «ավտոդապատացիան» իրականում ոչ մի տարօրինակ բան չի պարունակում իր մեջ: Էկոլոգիական համակարգերին նույնպես հատուկ է նման ռեժիմով զարգանալը: Էկոհամակարգի որոշակի տարրեր կյանքի ու գործունեության պայմաններ են ստեղծում նրա մյուս տարրերի համար: Էկոհամակարգն այդպիսով ավտոդապատացիայի (ինքնահարմարման) շրջափուլ է իրականացնում:

Մարդկային հասարակության սոցիալական համակարգերը, իրենց հերթին, մտնում են մոլորակի գլոբալ էկոհամակարգի մեջ: Այդ երկու համակարգերի փոխկապակցվածությունը կանխորոշված է պատմականորեն և պայմանավորված է նրանց զարգացմամբ: Զարգացման անհամամասնությունները, համակարգում «առաջատար» և «հետամնաց» տարրերի առկայությունը բնութագրական են ցանկացած համակարգի կենսագործունեության պրոգրեսիստական հայեցակարգի համար: Հիրավի, կենդանի համակարգերի պրոգրեսիստական հայեցակերպը ամենատարածվածն է, բայց ոչ միակը: Դարվինից սկսած, էվոլյուցիոն զարգացման և էկոհամակարգերի առաջընթացի տեսությունը գերիշխում է աշխարհընկալման գիտական մոդելներում: XX դարը բերեց իր հետ աշխարհի վերջի, «քաղաքակրթության մայրամուտի», դեգրադացիայի և համաշխարհային քաղաքակրթության այլասերման վերարերյալ բազմաթիվ աշխարհավերջնական տեսություններ: Մալթուսականությունը նոր՝ առավել ժամանակակից ձևեր ընդունեց: Ընդսմին, մի շարք հետազոտողների կարծիքով Մալթուսի տեսությունը «պրեդիկատիվ առապատացիայի» ակնառու օրինակն է, երբ մարդկությունը գերբնակեցման գործընթացների նեգատիվ կանխատեսման ահազանգն ստանալով, սկսեց ծնելիության սահմանափակման մեխանիզմներ կիրառել (քնազդաբար կամ գիտակցաբար): Մալթուսի մեծ կանխատեսումը չիրականացավ շատ առումով հենց այն բանի շնորհիվ, որ տարփողվեց լայնորեն:

Ժամանակակից քվանտային տեսության մեջ ներմուծվում է քվանտային հավանականության հասկացությունը, որը տարբերվում է դասական կամ մաթեմատիկական հավանականությունից նրանով, որ կառուցված է՝ հաշվի առնելով կանխատեսվող օբյեկտից եկող «արձագանքը» կամ պատասխանը: Ցանկացած իրադարձության հավանականությունը կարող է կանխատեսված լինել այս կամ այն աստիճանի ճշգրտությամբ: Բիլիարդի գնդի կամ երկնային մարմնի շարժման հավանականությունը հաշվարկվում է ճշգրտության բավական բարձր աստիճանով: Գնդի շարժման վրա, օրինակ, ազդում են մակերևույթի հետ շփման ուժերը, որով այն գլորվում է, և միջավայրի դիմադրությունը, որով այն շրջապատված է: Հավա-

նակաւնության հաշվարկի ճշգրտությունը այստեղ կախված է բոլոր այդ գործոնների հաշվառման աստիճանից: Գնդի շարժման վրա, օրինակ, ազդում են մակերևույթի հետ շփման ուժերը, որով այն գլորվում է, և միջավայրի դիմադրությունը, որով այն շրջապատված է: Հավանականության հաշվարկի ճշգրտությունը այստեղ կախված է բոլոր այդ գործոնների հաշվառման աստիճանից: Միանգամայն այլ է իրավիճակը քվանտային հավանականությունը հաշվարկելիս. այստեղ օբյեկտի հավանական վարքագիծը կախված է նաև այն բանից՝ տարվո՞ւմ է նրա նկատմամբ գիտական դիտարկում, թե՝ ոչ: Էլեկտրոնային մասնիկը ալիքը կամ սոցիալական համակարգը գտնվում են նմանատիպ իրավիճակում: Այստեղ միայն քվանտային «պատասխան» հավանականության օրենքներն են գործում, քանզի երկու համակարգերն էլ անտարբեր չեն իրենց վարքագծի դիտարկման և կանխատեսման բուն փաստի նկատմամբ: Մարդկային հասարակությունում լայնորեն հայտնի դարձած ցանկացած կանխատեսում անմիջականորեն ազդում է համակարգի վարքագծի վրա, ուղղում-ճշտում է այն, ու դրա համար էլ կանխատեսումները հաճախ չեն իրականանում:

XX դ. վերջին տասնամյակները բնութագրվում են բնական և պատմական գործընթացներին մարդու առանձնապես ակնառու միջամտության օրինակներով: Այդ միտումն այնքան ցայտուն է ուրվագծվում ժամանակակից ռեալ իրականության ֆոնի վրա, որ շատ գիտնականների համար առիթ և ազդակ հանդիսացավ՝ ձևակերպելու հասարակական զարգացման նոր հայեցակարգային հիմքեր, այն բնութագրելով որպես սոցիալ-պատմական գործընթաց: Վ.Ա. Յադովը ուղղակիորեն նշում է, որ պատմությունը դադարել է քնապատմական գործընթաց լինելուց, հինչպես դա մինչ այժմ շեշտվում էր, հատկապես մարքսիզմի մեջ[3]: Ի տարբերություն բնության կամ բնական գործընթացների, որ նկարագրում են մակրո- և միկրոաշխարհի օբյեկտների վարքագիծը, հասարակության և հասարակական օբյեկտների վարքագիծը նկարագրվում էր քնապատմական գործընթացի կատեգորիաներով: Այլ կերպ ասած, զարգացման բնական գործոնից զատ, հասարակական շարժման մեջ հսկայական դեր են կատարել պատմական իրադարձությունները: Դրա համար էլ հասարակական զարգացումը, Հեգելից սկսած, ավանդաբար քնութագրվում էր որպես քնապատմական գործընթաց: Սակայն մեր ժամանակներում «որոշիչ դեր են սուաւմում սուբյեկտիվ գործոնները (ներառյալ գիտությունը), այսինքն՝ ունակությունը սոցիալական սուբյեկտների (շարքային քաղաքացիներից մինչև

[3] *В.А. Ядов. А все же умом Россию понять можно - В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс-Ц., 2001, стр. 10.*

ազգային կառավարություններն ու ժամանակակից պատմության միջազգային դերակատարները) արձագանքելու ներքին (տվյալ հասարակությունների շրջանակներում) և արտաքին (աշխարհահամակարգի) մարտահրավերներին, կանխելու կամ զսպելու քնական, սոցիալական, տնտեսական, քաղաքական տեղաշարժերի անցանկալի ու վտանգավոր միտումները և օժանդակելու ցանկալիներին»[4]: Այսպիսով, «սոցիալական դերակատարների» ջանքերը ընթում են լուրջ (սպասելի կամ անսպասելի) հետևանքների: Շատ սոցիալական իրողություններ հանդիսանում են այդ «սոցիալական դերակատարների» գործունեության պտուղը, ինչը հիմքեր է տալիս հասարակական գործընթացները անվանելու՝ սոցիալ-պատմական:

Մարդկային պատմությունը այժմ կարող է ներկայանալ ու նկարագրվել արդեն ոչ թե քնապատմական, այլ, ավելի շուտ, սոցիալ-պատմական գործընթացի կատեգորիաներով: Պատահական չէ, որ վերջին տասնամյակների «ընդհանուր սոցիալական տեսություններում հասարակությունների համակարգային-կառուցվածքային և կառուցվածքային-գործառութային պատկերումները իրենց տեղը սկսում են զիջել սոցիալական փոփոխությունների դինամիկայի վերաբերյալ սոցիալ-մշակութային և սուբյեկտիվ-գործունեական պատկերացումներին»[5]:

Ընթացող բարեփոխումների պատմական սկիզբը, կամ ավելի ճիշտ, դրանց նախապատմությունը թվագրվում է ձախորդ հարյուրամյակի 80-ականների կեսերից: ԽՄԿԿ-ի քաղաքական վերնախավում հանկարծակի փոխատեղումներն իշխանության գլուխ բերեցին մի մարդու՝ Միխայիլ Գորբաչովին, որի անվան հետ է կապվում ԽՍՀՄ-ի վախճանման սկիզբը: Հիրավի, խորհրդային ավանդույթներով մեծացած և կուսակցական նոմենկլատուրայում սրընթաց կարիերա արած Մ. Գորբաչովը, անսպասելիորեն գալով իշխանության, լուրջ բարեփոխումների մտադրվեց՝ ինչպես կուսակցությունում, այնպես էլ երկրի տնտեսական կյանքում, որն արդեն վաղուց էր արտադրության անկում և տնտեսության լճացում (ստագնացիա) ապրում: Սկզբնապես գորբաչովյան բարեփոխումները մտահղացվել էին որպես համակարգի մասնակի կարկատան՝ նրա օպտիմալացման նպատակով: Արտաքին աշխարհից բավական մեկուսացված խորհրդային համակարգը ժամանակակից քաղաքակրթական մոդելներին ներդաշնակեցնելու համար ծրագրվում էր այն դույզն ինչ կերպարանափոխել: Գաղափարախոսության ոլորտում դա նշանավորեց սոցիալիզմի զարգացման մի նոր շրջափուլ, այն է՝ «սոցիալիզմը՝ մարդկային դեմքով»:

[4] *В.А. Ядов. А все же умом Россию понять можно - В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс-Ц., 2001, стр.11.*
[5] *Նույն տեղում, էջ 10:*

Նորացման հայեցակարգն ամբողջությամբ կանխամտածված էր տիրապետող սոցիալիստական գաղափարախոսության շրջանակների համար: Տնտեսությունում առաջ քաշվեց արագացված զարգացման սկզբունքը, կամ «արագացումը»: Սոցիալական ոլորտն ու կուսակցական-քաղաքական հարաբերությունների ոլորտը, բարեփոխիչների մտահաղացմամբ, պիտի դառնար առավել թափանցիկ ու բաց: Այստեղից էլ զանգվածային շրջանառության դրվեց «հրապարակայնության» կարգախոսը: Այն ժամանակ, բրեժնևյան «լճացման» շրջանի տասնամյակներից հետո, կուսակցական Օլիմպոսից ժողովրդին ներված «արագացման», «հրապարակայնության», «վերակառուցման» նոր գաղափարները պայթող ռումբի ազդեցություն գործեցին: Հասարակությունը ակնթարթորեն արթնացավ շնորհիվ «փոփոխությունների թարմ հոսանքի» և ուրախությամբ այն ընկալեց:

Գորբաչովյան «վերակառուցումը» աջակցություն գտավ խորհրդային հասարակության լայն զանգվածներում և աննախադեպ խրախուսանքի ու համակրանքի արժանացավ Արևմուտքում: Բարեփոխման համարձակ գաղափարն առաջին անգամ ընդհատեց «լճացման» տարիների միօրինակ «զարգացումը»: Այդ այսօր, ԽՍՀՄ-ը փլուզվելուց հետո է, որ ով հասցնում՝ քննադատում և մեղադրում է «վերակառուցման ճարտարապետին»՝ մահացու բոլոր մեղքերի մեջ: Բայց ևս այն ժամանակ, հեռավոր 1985-ին, տեղապատյուղի մեջ ընկած սոցիալիզմի լոկոմոտիվը փրկելու եկած «մեսիա» էր, և մի որոշ ժամանակաընթացք՝ մոլորակի ամենահասրահայտ քաղաքական առաջնորդը: «Գորբաչովյան դարաշրջանը» թեև կարճատև էր, բայց սկզբնավորեց վերափոխությունների մի ամբողջ շարք, որոնք լիովին փոխեցին հասարակության քաղաքական դիմագիծը՝ ցամաքի մեկ վեցերորդ մասի վրա: Եվ ավելին, ետխորհրդային բարեփոխումների վիթխարի մեխանիզմում «վերակառուցումը» բաց արձակված զսպաձողի դեր կատարեց: Կարո՞ղ էր այն ժամանակ կռահել «վերակառուցման ճարտարապետը», թե ի նչ հետևանքներ կունենան իր նախածեռնած բարեփոխումները կամ գիտե՞ր համակարգում թաքնված այն ուժերի մասին, որոնք կյանքի էին կոչվելու այդ ձեռնարկումներով:

Այսօր շատ հետազոտողներ գորբաչովյան «վերակառուցումը» ամբողջապես գիտակցված, ծրագրված և մանրամասն հաշվարկված չեն համարում: Նրանք գտնում են, որ բարեփոխումները շատ շուտով սկսեցին զարգանալ իրենց սեփական տրամաբանությամբ կամ «դոմինոյի սկզբունքով»: Վերակառուցման ջինը դուրս էր թողնվել շշից և ոչ ոք արդեն չէր կարող նրան զսպել:

Փորձելով ի մի բերել բարեփոխումների երկարատև ու բարդ շրջանը, ռուս հետազոտող Ա.Գ. Մակուշկինը գալիս է եզրահանգման, որ դա իրադարձությունների մի շղթա էր, «որը համակարգային ճգնաժամի էսկալացիայի ամեն մի նոր փուլն էր որոշում». նա պաշտպանում է մի դիրքորոշում, որը «հիմնված է վերակառուցման քաղաքականությամբ կյանքի կոչված փոփոխությունների գործընթացի անվերահսկելիության և նույնիսկ ավելին՝ չգիտակցված բնույթի վերաբերյալ վարկածի վրա»[8]:

Դրական նյթ գտնելու համար անհրաժեշտ է «տեղի ունեցածի այնպիսի պատկեր, որը թույլ կտար հետագայում կորզել, խլել նախածեռնությունը տարերային գործընթացից»[9]: «Վերակառուցումը», կամ ինչպես դրան այն ժամանակ էին անվանում «վերածնունդը» մի հասարակության, որն ընդամին երկար տարիներ լճացում էր ապրել և նույնիսկ անցել իր «կիսատրոհման շրջանը»՝ 60-ականների կեսերին, հեշտ գործ չէր:

Սոցիալական համակարգն իրրև այդպիսին, ի տարբերություն բնության և բնական կամ ֆիզիկական համակարգերի՝ բարդության լրացուցիչ աստիճանով է օժտված: Բազմաթիվ տարրերից և նրանց անթիվ փոխադարձ կապերից բաղկացած ֆիզիկական ցանկացած համակարգի վերակառուցումը ծրագրավորելը՝ նախագծելն ու հաշվարկելը, չափազանց բարդ գործ է: Բայց շատ ավելի բարդ է՝ սոցիալական համակարգերի վերակառուցման հաշվարկը: Դրանք, ի տարբերություն մեխանիկական և ֆիզիկական (բնական) համակարգերի, ինչպես և նշվել է վերևում, ակտիվորեն արձագանքում են առաջացող փոփոխություններին և ի պատասխան դրանց՝ իրենց հերթին չծրագրված (և դրանով էլ՝ անվերահսկելի) փոփոխությունների ալիք են առաջ բերում այդ նույն համակարգի ներսում: Այստեղ է թաքնված սոցիալական համակարգերի գաղտնիքն ու սկզբունքային տարբերությունը մնացյալներից: Դրա համար էլ սոցիալական համակարգերի ներում գործնականում բոլոր փոփոխությունները սոցիալական էքսպերիմենտի բնույթ են ստանում՝ ունենալով թերևսմիատեսնելի, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես անկանխատեսելի նյթ: Սոցիալական համակարգի բարդության աստիճանն այնքան բարձր է, այնքան շատ գործոններ է հարկավոր հաշվի առնել՝ նրա հնարավոր վարքը կանխատեսելիս, որ դա գործնականում անիրագործելի է դառնում: Բացի այդ, որպեսզի պատկերը ամբողջովին պարզ դառնա, նշենք, որ սոցիալական սիստեմներն օժտված են փոփոխությունների «ավտոգենեներացիայի», ինքնակազմակերպման բացառիկ ունակությամբ և «ինքնագործունեության» բավական բարձր աստիճանով:

Պատահական չէ, որ շատ մասշտաբային սոցիալական երևույթներ տարերա-

[8] *Макушкин А.Г. Последовательность реформ — путь к катастрофе. — В. жур. Мир России. Том IV, М., 1995, N2, с.37.*
[9] *Նույն տեղում.*

չին բնույթ են կրում և արդեն իսկ դուրս են մարդկանց վերահսկողությունից: Պատահական չէ նաև այն, որ սոցիալ-պատմական գործընթացների վրա ներգործելու կամ դրանք փոխակերպման ենթարկելու որևիցե որոշակի տեխնոլոգիա մարդկությունը գայթօր չի մշակել: Իր ծագման ժամանակից սկսած, երկար հազարամյակների ընթացքում մարդը գիտակցաբար միջամտում է սոցիալական համակարգերի փոխակերպումներին՝ եղբափակում է հներն և ստեղծում սոցիալական կազմակերպման նոր ոլորտներ: Այդուհանդերձ, նա այդպես էլ չի կարողացել հասարակությունում դրական փոփոխությունների ներմուծմանն ուղղված որևիցե՝ քիչ թե շատ համոզիչ սոցիալական տեխնոլոգիայի տեսություն կառուցել: Դարեր ի վեր սոցիումը մշտապես ենթարկվել է գիտակցված միջամտության ու փորձարարության, դրա հետ մեկտեղ մնալով մարդու ստեղծագործական ակտիվության բերնս միակ աստպարեզը, որտեղ տրամաբանության համակարգը դեռևս մուտք չի գործել:

Սոցիալական փոխակերպումները՝ դա գործունեության և գիտելիքի մի ասպարեզ է, որը դեռ բավականաչափ տրամաբանականացված, օրինակարգված չէ, դեռևս չկան մանրամասն մշակված սոցիալական տեխնոլոգիաներ: Սոցիալական համակարգերի վարքագծային անկանխատեսելիությունն այնքան մեծ է, որ ժամանակակից գիտության տրամաղրության տակ գտնվող մեթոդաբանական ապարատը պիտանի չէ այդ ոլորտի բավարար տեխնոլոգիականացման համար: «XIX-XX դդ. տրանսֆորմացիաները աչքի էին ընկնում նրանով, որ բնակչության ճնշող մեծամասնության համար անսպասելի էին վրա հասնում. դրանք համընդգրկուն լինելով՝ տարածվում են կյանքի բոլոր կողմերի վրա անկտիր՝ տնտեսության, քաղաքականության, արժեքային համակարգի, բոլոր սոցիալական ինստիտուտների և քաղաքացիների առօրյա ապրելակերպի վրա. դրանք, որպես կանոն, հանկեցնում են անկանխատեսելի հետևանքների և կորուկ փոխում են բնակչության տարբեր շերտերի հասարակական կարգավիճակը՝ նրանց նախկին կենսավտրը վերածելով փոփոխությունների հարմարվելուն խոչընդոտող անիմաստ բեռի»,- նկատում է Վ.Ա. Յադովը[10]:

«Ռուսաստան. տրանսֆորմացվող հասարակություն» գրքի առաջաբանում նա գրում է. «Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային գործընթացների դինամիզմն ու բազմազանությունն այսօր այնպիսին է, որ դրանք ալարգապես հնարավոր չէ ինչ-որ մի որոշակի տեսական-մեթոդաբանական դիրքորոշմամբ բավարար չափով իմաստավորել»[11]: Այստեղ էլ նա կարծիք է հայտնում, որ սոցիալական երևույթների և գործընթացների ընկալման միանգամայն տարբեր մոտեցումների ու մեկնողական սխեմաների բազմազանությունը «ժամանակակից տեսական սոցիոլոգիայի տարբերակիչ առանձնահատկությունն է»[12]:

Մեթոդաբանական մոտեցումների նման բազմազանությունը ընութագրական է XX դ. վերջի սոցիալ-պատմական գործընթացների ընկարագրման և ընկալման համար, որ տեղ գտած և նախկին Խորհրդային Միության տարածքում: Սկզբնապես մտահղացված լինելով որպես խորհրդային սոցիալիստական կարգի «վերակառուցում», դրանք չատ շուտով անվերահսկելի դարձան և բերեցին համակարգի լիակատար փլուզման: Հետագա ողջ շրջանը, սկսած ԱԽՊԿ-ի ջանքերով՝ «ԽՍՀՄ-ի ռեստավրացիայի» փորձերից, իսկ այնուհետև Բելովեժյան համաձայնագրով և ԱՊՀ-ի կազմավորմամբ, տեսաբանների կողմից դիտարկվում են որպես անհաջողության մատնված գորբաչովյան «վերակառուցման» անկանխատեսելի հետևանքներ: «Մեր օրերի տեսական միտքը ռուսաստանյան բարեփոխիչների ճամբարում և արևմտյան դիտորդների շրջանում մեկ խորհրդանշական հարցի շուրջ է պտտվում. Ռուսաստանի տնտեսական բարեփոխումների ակնհայտ անհաջողությունը՝ դա ի սկզբանե ընտրված կուրսի արդյո՞ւնք էր, թե՞ հետևանքը նրա, որ ճիշտ ձեռնարկումները բողնվեցին կեսճանապարհին և չհասցվեցին իրենց ավարտին: Սակայն հարկ է խորհրդածել նաև րուն առարկայի մասին, որն արտահայտվում է հետևյալ հարցի տեսքով. պե՞տք է արդյոք բարեփոխումները (կամ այն, ինչն այդպես անվանում էին) դիտարկել այն տրամաբանական մոդելի լույսի ներքո, որին ցանկանում էին հետևել կամ ինչ-որ մի ժամանակամիջոց իսկապես հավատարիմ էին քաղաքական գործիչները: Եղե՞լ է դա արդյոք, վերջին հաշվով, գիտակցված բարեփոխություն: Արդյո՞ք մենք հանգամանքների անկասելի տրամաբանության ինքնաձավալման վկաները չենք եղել, որտեղ մտքի վրա իշխողների յուրաքանչյուր նոր ծրագիր վերածվում է միայն թղթի վրա հերթական կոնտրապունկտի արձանագրության: Փորձել ըմրռնել այդ տրամաբանությունը, դրա հետ համակրել ներկայիս սեփական հնարավորություններն ու հաստատել առաջնայնությունները, որոնց շրջանակներում է հնարավոր իմաստավորված քաղաքական գործողությունը,- ահա թե ինչն է մեզ համար կարևորություն ներկայացնում» (16, էջ 36): Նույն հեղինակը նշում է. «Վերակառուցման և տնտեսական արմատականացման տասը տարիների ընթացքում տնտեսական քաղաքականությունում գործվեցին բոլոր սխալները, որ հնարավոր էր գործել, և որոնք էլ անհնարին դարձրին ԽՍՀՄ-ի և

[10] *В.А. Ядов. А все же умом Россию понять можно - В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс-Ц., 2001, с. 9.*
[11] *В.А. Ядов. Введение — В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс—Ц, 2001, с. 5.*
[12] *В.А. Ядов. Введение — В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс—Ц, 2001, с. 4.*

Ռուսաստանի, որպես ամբողջական անկախ պետությունների գոյությունը»[13]:

Այսօր շատ տեսաբանների ընդունում են, որ ԽՍՀՄ-ի փլուզումն անխուսափելի էր, բայց և չեն ժխտում քաղաքակիրթ բաժանման հնարավորությունը, ինչը չձեռնարկվեց և ինչն էլ հենց կոմունիստական ղեկավարության գլխավոր, հանցավոր սխալն է համարվում: Այդպիսով, սկսված վերակառուցմանը փոխարինեց նախկին հանրապետությունների տուժերնեցման քանիդ գործընթացն ու «խորհրդային կայսրության» խորտակումը:

Դրան հաջորդած շրջանը կնքվեց «անցումային» անվամբ: Վ.Ա. Յադովն այսպես է բնութագրում տվյալ ժամանակահատվածը. «Այսպես կոչված անցումային շրջանի՝ ուշացած մոդեռնիզացիայի կամ հետևից վազող մոդեռնիզացիայի տասնամյակ»[14] :

Գիտական գրականությունում կարող ենք գտնել «անցումային շրջանի» տեսական ընկալագրությանը ցվիրված հայրուրավոր աշխատություններ: Նույնիսկ նոր տերմին է ի հայտ եկել՝ "Transition" – անցումային շրջանն ապրող երկրների տնտեսությունը, քաղաքականությունը, սոցիալական ոլորտը մատնանշելու համար: Իսկ տեսական-մեթոդաբանական հնարների ողջ համալիրը անվանակոչել են «տրանզիտոլոգիա» գիտական տերմինով: Ըստ էության, «անցումային շրջան» կամ «անցումային հասարակություն» բառ տերմինը կոչված էր բնորոշելու «սոցիալիզմից» «կապիտալիզմ» անցում ապրող հասարակությունը: Ինչի՞ց՝ ինչի՞ն անցնելուն պիտի ծառայեր «անցումային շրջանը», եթե ոչ՝ սոցիալիզմից կապիտալիզմին: Սակայն և՛ առաջարկված նոր տերմինների հեղինակները, և՛ դրանք օգտագործող սոցիոլոգները հետևողականորեն խուսափում էին այդ պարզորոշությունից և նախընտրում էին շրջանն անցումային անվանել՝ առանց ճշտելու այդպիսի սոցիալ-պատմական անցման սկզբնակետն ու վերջակետը: Հատկանշական է, որ վերակառուցման սկզբնակետին կամ ելակետային հասարակությանը «տոտալիտար», «վարչահրամայական», «կոմունիստական կայսրություն», «համահարթեցնող», «պարտոկրատիա» ու նման այլ կարգի բնորոշումներ էին տրվում: Դրանով ցանկանում էին ընդգծել նեգատիվ բնույթն այն հասարակական համակարգի, որից հյուծարվել և մի կողմ էին քաշվել՝ մտնելով անցման ծանր ու երկար տակ: Ամենահավատարիմ հանդիպող բնորոշման տեսակն էր՝ «անցում սոցիալիզմից՝ դեպի...»:

[13] *Макушкин А.Г. Последовательность реформ — путь к катастрофе. — Мир России. Том IV, М., 1995, N2, с.52.*

[14] *В.А. Ядов. А все же умом Россию понять можно - В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс-Ц., 2001, с.9.*

Մեր հայեցակետով, դա բացատրելի է երկու պատճառներով. առաջին՝ հասարակությունը, որ կազմում էին նախկին ԽՍՀՄ հանրապետությունները, չէր կարելի ամբողջապես համարել «սոցիալիստական»՝ բառիս դասական մարքսիստական բնկալմամբ: Մենք այստեղ կանգ չենք առնի խորհրդային սոցիալիստական համակարգի թերությունների, բացթողումների և սխալների վրա, համակարգ, որը հավաստելով «սոցիալիզմի վերջնական հաղթանակը», այդպես էլ չկարողացավ հասնել «զարգացած սոցիալիզմի» սահմանագծին կամ էլ վերածել՝ «մարդկային դեմքով սոցիալիզմի»:

Երկրորդ՝ զարգացա՞ծ սոցիալիզմ էր դա, թե՝ «թերզարգացած», բոլոր դեպքերում այն սոցիալիստական արժեքների կրողն էր, որը մարդկային առաջադեմ մտքի՝ հարյուրամյակներով կուտակած հսկայական գաղափարական դրակաճն էր պարփակում իր մեջ: Նման հարուստ ժառանգությունից հրաժարվելն ու մի կասկածելի «անցման» ուղևորվելն այդքան էլ հաճելի գործ չի թվում: Այդ պատճառով էլ գործի դրվեց «վատ», ստալինյան, ամբողջատիրական սոցիալիզմի հայեցակարգը, որից հրաժարվելն էլ բոլորովին ափսոսալի չէր:

Մյուս կողմից, «անցումային շրջանի» տեսաբանները երբեք չեն նշել «կապիտալիզմը» որպես այդպիսի անցման վերջնակետ: Դրա համար էլ անցումային շրջանի ծանրությունների տակ կքած շատ ու շատ քաղաքացիների համար այդպես էլ անհասկանալի մնաց՝ ինչի՞ց ինչի՞ն անցնելով են, ըստ էության, զբաղված իրենք: Անցման վերջնակետը եթե անվանեին «կապիտալիզմ»՝ այդ գաղափարն արդեն այնքան էլ հրապուրիչ չէր թվա բազմամյա հակակապիտալիստական քարոզչությամբ «իմաստնացած» խորհրդային մարդուն: Դրա համար էլ անցման վերջնակետ սահմանվեց դեմոկրատական հասարակությունը, քաղաքացիական հասարակությունը:

«Անցումային շրջանը» մեկնվում-պարզաբանվում էր տերմիններով, որ վերաբերում էին անցմանը՝ ամբողջատիրական հասարակությունից՝ դեմոկրատականին և քաղաքացիական հասարակությանը: Սակայն իրականում դա անցում էր կապիտալիզմին. նույնիսկ այն դեպքում, եթե դա պատկերացնենք որպես անցում՝ «այլմանական սոցիալիզմից» «այլմանական կապիտալիզմին»: Ներկայումս արևելաեվրոպական գիտնականների ուղեղներում քննադատական հայեցակետ է հաստնանում տրանզիտոլոգիայի և համակարգային անցման պրոբլեմների շատ տեսական մեկնությունների նկատմամբ:

2001 թ. մայիսին Պրահայում կայացավ սոցիոլոգների համաեվրոպական միջազգային կոնֆերանսը՝ «Կառուցվածքային փոփոխությունները եսոցիալիստական Կենտրոնական Եվրոպայում և արդիականացման նոր մարտահ-

բավերները»[15]: Ացնման (տրանզիտոլոգիայի) տեսության սկզբնական բովանդակությամբ ենթադրվում էր արևմտյան մոդելների գրեթե ինքնաբերական ներմուծումը եռխորհրդային իրականություն (այսպես կոչված՝ եռսոցիալիզմի արդիականացման հայեցակետ): Բայց այսօր նույնիսկ դրա ջորացված, վերջին մեկնակետերը՝ «վազքահաս արդիականացումը» կամ մյուսը՝ «ռեֆլեքսիվ արդիականացումը» հիմնավոր քննադատության են ենթարկվում այն պատճառով, որ չեն կարողանում ներընդգրկել անցումային շրջանի գործընթացների բազմաչափությունն ու բազմաճանությունը, այն պատճառով, որ դրանք մնալով մեխանիստական՝ անցումային հասարակությունների կառուցվածքային ու հատկապես մշակութային ֆենոմենների ընկալման առումով սահմանափակ հնարավորություններ են ընձեռում: Այս մեթոդաբանական մոտեցումն ընդգրկում է Կենտրոնական Եվրոպայի երկրների կոնֆլիկտային զարգացման ողջ պատմամշակութային համերանգը, անցումային գործընթացի ողջ դրամատիզմը՝ տվյալ հասարակությանը հատուկ արժեքների և ավանդույթների ներքին կոնֆլիկտով հանդերձ:

Ընդամին անցումային շրջանի շատ ցավոտ հիմնախնդիրներ ծնունդ են բուն կառուցվածքային բարեփոխումների, որոնք հաճախ արտաքին են, դրսից պարտադրված են և միշտ չէ, որ բխում են զարգացման օբյեկտիվ տրամաբանությունից[16]: Հասարակական կարգի փոփոխության համեմատական փորձն Արևելյան Եվրոպայի երկրներում շատ բանով ցույց տվեց «թավշյա հեղափոխության» զարգացողական բնույթը, որը՝ «ոչ այնքան նոր շրջափուլի սկիզբն էր տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրում, որքան՝ նախորդի եզրափակումը»[17]:

Արևելյան Եվրոպայի նախկին սոցճամբարի երկրները նախորդ դարի ետպատերազմյան կարճատև ժամանակաշրջանում փաստորեն երկու հայելային հեղափոխություններ տեսան. 1949-1953 թթ.՝ իրագործելով արագացված անցումը՝ «կապիտալիզմից՝ սոցիալիզմին», և այնուհետև, 80-ականների վերջին՝ հակառակ անցումը՝ «սոցիալիզմից կապիտալիզմին»: Ռուսաստանի հետ միասին նրանք ունեցան երկու մեծ ռեֆորմացիա՝ «սոցիալիստական և լիբերալ-դեմոկրատական»[18]:

[15] *Макушкин А.Г. Последовательность реформ – путь к катастрофе. – Мир России. Том IV, М., 1995, N2, с.52.*
[16] *Тощенко Ж.Т. Вступительное слово – "Социологические исследования", 2002 г., М., Наука, N5.*
[17] *Коровицина Н.В. Сравнительный опыт общественных преобразований в постсоциалистических странах. – "Социологические исследования", 2002, М., Наука, N5, 9.*
[18] *Նույն տեղում, էջ 12.*

Վերջին «թավշյա հեղափոխությունը» նրանց մոտ փոխաբերվեց «շոկային թերապիայով» (ցնցումնաբուժությամբ) և տնտեսությունում հապճեպ սեփականաշնորհմամբ՝ կտրուկ շրջադարձմամբ՝ դեպի շուկայական հարաբերությունները: Տնտեսական և մշակութային արդիականացման գործընթացներն անցած տասը տարիների ընթացքում հասցրին իրենց նպատակին. անցումային շրջանն այստեղ, կարելի է ասել, ավարտվեց, և կապիտալիզմի հիմքերը դրված են[19]: Այժմ այս երկրները փորձում են ներգծվել-ներդաշնակվել արդի աշխարհի հիմնական միտումների խոշոր համապատկերին. ապրարային, գյուղացիական տիպի հասարակություններից անցում է կատարվում ուրբանիզացված, քաղաքային-արդյունաբերական տեսակին, իսկ այնուհետև՝ եռարդյունաբերական, ինֆորմացիոն հասարակությանը:

«Կապիտալիզմի կառուցման» երկրորդ տասնամյակի սկիզբը Արևելյան Եվրոպայի երկրներում «առանձնանում է հապճեպ լիբերալիզացիայի քաղաքականության արգասիքները վերանայելու փորձերով... 2000-ական թթ. սկզբներին (ինչպես 1960-ականների սկզբի արդյունաբերականացման ու սոցիալիզմին անցման հաջող ավարտից հետո՝ Պրահայի ճնհալի նախաշեմին) կրկին ուժեղանում են հասարակական կարգի հումանիստականացման (հումանիզացիայի) պահանջները՝ այժմ արդեն «կապիտալիզմ՝ մարդկային դեմքով» ծնակերպմամբ: Հայեցակերպի այդ փոխակերպումը շատ քննութագրական և օրինաչափ է այդ տարածաշրջանի երկրների համար:

Խորհրդային ժամանակաշրջանում Արևելյան Եվրոպայի (սոցճամբարի) սոցիալիստական երկրները պահանջում էին կողմնորոշվել դեպի «մարդկային դեմքով» սոցիալիզմի կառուցումը: Այսօր նրանք հասմանման պահանջներ են առաջադրում կապիտալիզմի՝ կառուցմանն իրե՛նց երկրներում: Ակնհայտ է, որ դա խորհրդային սոցիալիզմի կամ արևմտյան կապիտալիզմի յուրահատկությունը չէ, այլ տվյալ հասարակությունների սոցիալական հյուսվածքին սերտաճած խորքային պատմամշակութային և ազգագրական խորք ունեցող ավանդույթների յուրահատկությունը:

Լինի սոցիալիզմ, թե կապիտալիզմ, մեկ է, այդ երկրներում դրանք կոնկրետ-պատմական մարմնավորման այնպիսի ձևեր են ձեռք բերում, որ տեղի հասարակությունները, ելնելով ավանդական արժեքային պատկերացումներից, սոցիալական փոխակերպումների հումանիստականացման նույն պահանջներն են դնում պետության առջև: Պահանջում են իրականացվող փոփոխությունների ուղղորդում, հարկաճը և ընդլայնվող ճանապարհ՝ բարեփոխումների մարդկային չափման արժեքի ներդրման:

[19] *Նույն տեղում, էջ 10-11.*

Արևելյան Եվրոպայի երկրներում արդիականացման և անցումային շրջանի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրության գիտական դպրոցը վաղուց է արդեն ձևավորվել: Շատ հայտնի ներկայացուցիչներ, մասնավորապես հունգարական դպրոցից (Ռ. Անդորկայի գլխավորությամբ), իրենց հետազոտություններում հենվում են արդիականացման տեսության և մեթոդաբանության ոլորտի հայտնի մասնագետ, Հելսինկիի համալսարանի պրոֆեսոր Է. Ալլարդի աշխատությունների վրա: Մեծ ճանաչում են գտել գերմանացի սոցիոլոգների աշխատությունները՝ Բեռլինի ազատ համալսարանի պրոֆեսոր Վ. Զապֆի գլխավորությամբ: Վերջինս Բեռլինի հետազոտական կենտրոնում գլխավորում է տրանսֆորմացիաների ուսումնասիրության տեսական հիմնախնդիրներին և տրանսֆորմացվող հասարակությունների տիպաբանությանը նվիրված աշխատանքային ծրագիրը (21): Արդիականացման նկատմամբ տարբեր մոտեցումների ողջ բազմազանությամբ հանդերձ տեսաբանների մեծամասնությունը արդիականացման տակ հասկանում են սոցիալական տրանսֆորմացիաների ու փոփոխությունների պրոգրեսիստական տիպ: Ընդ որում, այդ փոփոխություններն արժատներով առնչվում են անգլիական արդյունաբերական և ֆրանսիական քաղաքական հեղափոխությունների հետ[20]:

Արևմտաեվրոպական երկրներում արդյունաբերական հեղափոխությամբ սկսված զարգացման գործընթացը բերնց նրան, որ այսօր արդիականացված հասարակությունների մի ոչ մեծ խումբ է ձևավորվել: Այս առաջամարտիկ-հասարակություններից ետ ընկածները վազում են առջևից գնացողների հետևից՝ իրենց «հետևից վազող արդիականացմամբ»:

Համաձայն Ս. Հանթինգթոնի, 1974 և 1990 թ. միջև ընկած ժամանակահատվածում դեմոկրատականացման «երրորդ ալիքով», մոտ 30 երկիր սկսեցին անցումը դեմոկրատիային[21]: Սակայն տրանսֆորմացիայի գործընթացը դեպի դեմոկրատական հասարակարգ չպետք է պատկերացնել «հետևից վազող արդիականացման» կանոնավոր-ուղղագիծ ծավալման տեսքով: Այսպես, Վ. Զապֆը գրում է. «Դրամատիկական այդ իրադարձություններից վեց տարի անց մենք տեսնում ենք, որ տրանսֆորմացիաները ոչ միայն սպասվածից շատ ավելի ցավոտ են, այլև երբեմն ընդհանրապես հարցականի տակ են դրանք: «Արդիականացման տապալումները» արդիականացման (մոդեռնիզացիայի) տեսությանը վերաբերող շատ աշխատություններում են ճկարագրված և հավաստիորեն փաստագրված XX դ. պատմական

[20] *Bendix R. Modernisierung in internationaler Perspektive. — Theorien des sozialen Wandels. Hrsg.W. Zapf. Koln-B., 1969.*

[21] *Huntington S. Democracy's third wave. — Journal of Democracy. 1991, p. 12-34.*

նյութերով, հատկապես՝ Լատինական Ամերիկայում: Բայց ետկոմունիստական հասարակությունների տրանսֆորմացիայի կապակցությամբ հավիլ թե որևէ մեկը ենթադրեր, թե կլինեն երբեմն նույնիսկ ազգերի և պետությունների գոյությանը սպառնացող տապալումներ ու ետընթացներ»[22]:

Միամտություն է տրանսֆորմացիան որպես չընդհատվող գործընթաց դիտարկելը: Իրականում դա վերելքների ու վայրէջքների, ետընթացների ու կոնֆիգիկտային փուլերի հերթագայություն է: «Մեծ տրանսֆորմացիա» հոդվածում Ջ. Բժեզինսկին խոսում է այն մասին, որ տրանսֆորմացվող հասարակությունների սպասումները չափազանց մեծ էին, իսկ վերակառուցման ծախսերի և ռեսուրսների վերաբերյալ պատկերացումները՝ հեռու ռեալիստական լինելուց: Շատ հաճախ պարզապես անհնար էր ժամանակին քաղաքական նախադրյալներ ստեղծել և իրականացնել տնտեսության բարեփոխումը, ինչը «հանգեցնում էր ահռելամաշափ ցնցումների, և հանուն այդ բարեփոխումների իրագործման՝ պետության դերի ահին» (24): Նրա կարծիքով, 27 ետկոմունիստական պետություններից միայն մի քանիսում դեմոկրատականացումը հաջողվեց (Արևելյան Գերմանիա, Հունգարիա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Էստոնիա):

Արդիականացման համար ամենաէականը ժամանակակից հասարակության չորս հիմնարար ինստիտուտների զարգացումն է: Դրանք են՝ մրցակցային դեմոկրատիան, չուկայական տնտեսությունը, սոցիալական պետությունը, զանգվածային սպառումը (սպառողականությունը). ընդսմին, ընթացիկ հիմնախնդիրները պետք է լուծվեն բարեփոխումների և նորացումների ճանապարհով[23]: Ետկոմունիստական հասարակությունների պարագայում արդիականացումը դիտարկվում է, օրինակ, որպես փորձ՝ այդ հիմնարար ինստիտուտների զարգացման առումով արևմտյան երկրներին հավասարվելու:

Հենց այստեղ հասարակության արդիականացման կամ տրանսֆորմացիայի նորարարական ուղիների վերաբերյալ հարցերի մի ամբողջ շարք է հարուցվում: Եթե հետևենք Սպենսերի, Դյուրքհեյմի և Մարքսի տրամաբանությանը, ապա անհրաժեշտ է ուղղագիծ առաջընթացի մղելն ընտրել հասարակության զարգացման պատմության մեջ: Ի տարբերություն նրանց, ինչպես հայտնի է, Վեբերն այլ կարծիքի էր՝ հնարավոր համարելով արևմտյան կապիտալիզմի առանձնահատուկ

[22] *Цапф В. Теория модернизации и различие путей общественного развития. — "Социологические исследования", М., 1998, N 8с. 15.*

[23] *Цапф В., Хабих Р., Бульман Т., Делей Я. Германия: Трансформация через объединение. — "Социологические исследования". М., 2002, N 5, с.19.*

ուղին: Արևմտյան հասարակության բոլոր ոլորտների այդ առանձնահատուկ, տարբերվող ռացիոնալականացման պատճառները նա տեսնում էր «բողոքականության բարոյագիտության» վրա հիմնված «կապիտալիզմի ոգու» մեջ[24]:

Այսօր զարգացման «պանազգան» ուղիների հայեցակարգերը կրկին տարածում են ստանում, հատկապես տարբեր հասարակությունների փոխակերպումների փորձից ու դրանց համեմատական վերլուծությունից հետո: Երևան հանելով XX դ. վերջին տասնամյակների տրանսֆորմացիաների կլաստերները, հետազոտողներն առանձնացնում են երկրների հետևյալ խմբերը.

Եապոնիան, Իտալիան, Արևմտյան Գերմանիան՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ.: Այս երկրների անցումը դեմոկրատիային և շուկային, բազմամյա դիկտատուրական վարչակարգերից հետո, ընթացավ արևմտյան դաշնակիցների հովանավորչությամբ ու նյութական աջակցությամբ:

Իսպանիան, Պորտուգալիան, Հունաստանը՝ 1974 թ. հետո: Այս երկրներում բաղաքական դիկտատուրաների վերացումը և անցումը դեմոկրատիային ու շուկայական տնտեսությանը տեղի ունեցավ «համաձայնողական գործընթացի» միջոցով: Հին և նոր ընտրախավերը իշխանության փոխանցման հարցում եկան փոխզիջման: Տրանսֆորմացիայի գործընթացը՝ ըստ հասարակության համախմբման աստիճանի, տևեց մոտ տասը տարի:

Լատինական Ամերիկայի երկրները ոչ արդյունավետ շատ տրանսֆորմացիաներով են անցել՝ եղել են վերադարձներ դիկտատուրայից՝ դեմոկրատիային, և հակառակը: Այստեղ եղրնթաց է նկատվել նույնիսկ տնտեսական աճի երկարատև ժամանակաշրջանից հետո: Այս կապակցությամբ տեղին է հիշել ռուսական ծագումով ամերիկացի սոցիոլոգ Պ. Սորոկինի նկատառումը՝ «տոտալիտար կոնվերգենսիայի» մասին: Դեռ անցյալ դարի սկզբում նա գրում էր, որ բույլ դեմոկրատիաներում տեղի է ունենում վերածնունդ՝ վերադարձ ավտորիտար իշխանությանը:

Հարավային Կորեան, Հոնկոնգը, Տայվանը, Սինգապուրը, այս շորս «փոքրիկ վագրերը», դեմոկրատական բարեփոխումների ուշացող շարանով կապիտալիստական համակարգի շրջանակներում ինքնուրույն տնտեսական աճի զարմանալի օրինակներ են ցուցադրում: Ոչ վաղ անցյալում այդ երկրների բնակչությունն ապրում էր աղքատության մեջ: Հիմա նրանք բարգավաճող երկրների շարքին են պատկանում և, անկասկած, հասարակության դեմոկրատական բարեփոխումներն այստեղ հետզհետե մեծ թափ կհավաքեն:

[24] *Вебер М. Протестантская этика и дух капитализма. — В кн. Избранные произведения. М., Прогресс, 1990.*

Ետկոմունիստական երկրներից բարեհաջող կերպով տրանսֆորմացվածների թվին, ինչպես արդեն նշվեց վերը, կարելի է դասել Հունգարիան, Լեհաստանը, Չեխիան, Սլովենիան և Էստոնիան: Միանգամայն այլ է պատկերը Արևելյան Գերմանիայում, որտեղ արդիականացումը իրագործվում է Արևմտյան Գերմանիայի ֆինանսական և վարչական ուղղակի միջամտությամբ: Այստեղ մենք միմյանցից տարբեր քաղաքական և տնտեսական կառույցներ ունեցող՝ էրնիկապես միատեսակ հասարակությունների վերամիավորման առանձնահատուկ դեպքի հետ գործ ունենք: Մասնագետները Գերմանիայում գտնում են, որ կարգավորվող հավասարեցման գործընթացը կծգվի նս տասը տարի և կպահանջի հսկայական ֆինանսական ներդրումներ (Արևմուտքից՝ Արևելք):

Ընդհանուր առմամբ, համարվում է, որ հասարակությունների ազատականացման և ժողովրդավարացման կուրսը հաղթել է ամենուր: Այդուամենայնիվ, «համաշխարհային մասշտաբով դեմոկրատիայի և շուկայական տնտեսությանն անցնելու երկու այլընտրանք գոյություն ունի: Առկա է ՉԺՀ-ի «սոցիալիստական շուկայական տնտեսությունը»: Չինաստանը առաջին կոմունիստական երկիրն է, որն ակտիվորեն պայքարում է հանուն կապիտալիստական ներդրումների և նրանց յայն տարածվածություն է տալիս՝ ի տրիտուր ատանալով ածի բարձր տեմպեր: Սակայն կուսակցությունը պահպանում է քաղաքական վերահսկողությունն ու ճնշում է դեմոկրատականացման և զանգվածային մասնակցության ծավալման փորձերը. երկրորդ այլընտրանքը իսլամական արմատականության երկրներն են, որոնք ճշակութային ինքնակայությունն ու կրոնական էքսպանսիան բարձր են գնահատում տնտեսական զարգացումից[25]:

Նկատենք, որ «իսլամական արմատականությանը հարող որոշ երկրներ բոլորովին էլ չեն մերժում տնտեսական զարգացումը և նույնիսկ բարձր կենսապայմաններ ունեն՝ շնորհիվ վիթխարի նավթային պաշարների: Ավելի շուտ, Արևմուտքն ի դեմս ԱՄՆ-ի, չի կարողանում համակերպվել այն բանի հետ, որ մուսուլմանական ոչ-դեմոկրատական երկրներն իրենց բարձր կենսամակարդակն ապահովում են «խողովակի վրա նստած» զուտ նավթաարտահանման ճանապարհով: Որպես կանոն, այդպիսի երկրները խիստ տնտեսական պատժամիջոցների և արտահանման ու ներմուծման արգելքի են ենթարկվում՝ արևմտյան տերությունների կողմից:

Համաշխարհային քաղաքական համակարգերի միասնականացումը մեծ դժվարությամբ է առաջ ընթանում և, ըստ ամենայնի, հեռանկար չունի:

[25] *Цапф В. Теория модернизации и различие путей общественного развития. — "Социологические исследования", М., 1998, N 8, с.17.*

Դեռևս 1996 թ. Ս. Հանթինգթոնն առաջ քաշեց «քաղաքակրթությունների բազմակիության» իր գլուխավոր հայեցակետը[26]: Աշխարհը ոտք է դրել գլոբալ անհավասարակշռության և տարբեր քաղաքակրթությունների առճակատման դարաշրջան: Միաբևեռ աշխարհի հայեցակարգին Ս. Հանթինգթոնը հակադրում է ժամանակակից աշխարհում միաժամանակ գոյություն ունեցող տարբեր քաղաքակրթությունների գաղափարը: Դրանք են՝ «դասական» Արևմտյան քաղաքակրթությունը, որ ներառում է Հյուսիսային Ամերիկան, Ավստրալիան և Եվրոպան. Լատինաամերիկյան քաղաքակրթությունը. Սլավոնա-ուղղափառ քաղաքակրթությունը, որի հետ է ևս կապում նախկին ԽՍՀՄ-ի տարածաշրջանների մեծ մասը. Իսլամական քաղաքակրթությունը. Աֆրիկյան քաղաքակրթությունը. Կոնֆուցիականե քաղաքակրթությունը. Ճապոնական քաղաքակրթությունը. Հինդուիստական քաղաքակրթությունը: Այսպիսով, Ս. Հանթինգթոնը, որին խիստ քննադատեցին Արևմուտքում, առանձնացնում է ութ՝ միաժամանակ գոյություն ունեցող քաղաքակրթություններ, որոնցից միայն չորսը չունեն արևմտամետ կողմնորոշում: Դրա համար էլ հաճախ ապագա համաշխարհային հասարակարգը կախման մեջ են դնում Արևմուտքի և մնացյալ աշխարհի հակամարտության ելքից[27]: «Վերջին դարերի ընթացքում միջազգային հարաբերություններն ընթացել են երկու իդեալներին մշտապես մոտենալու ուղիով՝ դեմոկրատականացմանն ու այն բանին, ինչը կարելի է անվանել «միջազգային ազատականացում»: Առաջին սկզբունքը ենթադրում է պայքար միջազգային քաղաքականության մասնակիցների, առաջին հերթին պետությունների միջև՝ միջազգային կարևոր որոշումներն ընդունելու իրավահավասարության համար:

«Միջազգային ազատականացման» սկզբունքը ենթադրում է միջազգային հարաբերությունների սուբյեկտների ինքնուրույնության և անկախության իրավունքի ճանաչում: Գործնականում այդ սկզբունքն իրացվել է՝ ազգային սուվերենիտետը որպես միջազգային քաղաքականությանը մասնակցողների առաջնային և անկապտելի իրավունքը ճանաչելով»[28]: Մենք գիտենք, որ հազվադեպ բացառություններով (Վատիկան, Մալթայական ուխտ), փաստացիորեն պետություններն են միայն, որ միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների սուբյեկտներ են ճանաչվում: Սինհույն ժամանակ մենք ևան տեսնում ենք, որ գլոբալականացման գործընթացները փոխում են պետության դերը՝ ժամանակակից աշխարհակարգում: Առանց դույզն իսկ կասկածի կարելի է կանխատեսել, որ երրորդ հազարամյակը՝ աշխարհի երկրաքաղաքական և տնտեսական վերաբաժանումներով, կվերածվի գերազանցապես վերպետական և ապապետական կազմավորումների դարաշրջանի:

Երեք պատմական խոշոր միտումներ են խորհրդանշում արդի դարաշրջանը: Մի կողմից ևոր՝ ազգային պետությունների կազմավորման գործընթաց է տեղի ունենում, ինչի մասին մենք շարադրեցինք վերը. մյուս կողմից՝ գուգահեռաբար իրագործվում է ազգային պետությունների միավորման գործընթաց՝ դաշինքների, բլոկների, միությունների և համագործակցությունների տեսքով, հար և նման Եվրամիությանը կամ ԱՊՀ-ին: Ու վերջապես, այդ անկախ պետությունների ներսում առաջանում են խոշոր անդրազգային կորպորացիաներ (ՏՆԿ-եր), որոնք իրենց հզորությամբ ու ֆինանսական հնարավորություններով արդեն գերազանցում են այդ երկրներին կամ ևույնիսկ երկրների խմբերին: ՄԱԿ-ի տվյալներով, ինչպես գրում է Երկրաքաղաքական հիմնախնդիրների ակադեմիայի փոխնախագահ, գեներալ-գնդապետ Լ.Ի. Իվաշովը, աշխարհի երեք ամենահարուստ մարդիկ տիրապետում են մի կարողության, որը հավասար է աշխարհի մոտ 50 ամենաաղքատ երկրների բյուջեին[29]:

Կազմավորում է գլոբալ ֆինանսական օլիգարխիա, որը գործնականում վերահսկում է համաշխարհային տնտեսությունը, միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների միջոցով իրականացնում է ամբողջ երկրների ոչ-պաշտոնական՝ քաղաքական և տնտեսական ղեկավարումը:

Նույնիսկ ՏՆԿ-ի ծնող-պետություններն են լուրջ տնտեսական անհարմարություններ և կորուստներ զգում նրանց գործունեության պատճառով: Որպես կանոն, ՏՆԿ-ները դուրս են հանում կապիտալը դեպի էժան աշխատուժով երկրներ, դրանով թուլացնելով զարգացած երկրների տնտեսությունը: ՏՆԿ-ների գլոբալ «մայրաքաղաքներն են» այսօր հանդիսանում Նյու-Յորքը, Լոնդոնը և Տոկիոն: ՏՆԿ-ի գաղափարակիրների շրջանում միտք է ծագել, թե իշխանությունը՝ դա ևույնպես յուրօրինակ ապրանք է, շատ թանկ, բայց ապրանք: Հետևաբար, դա՝ իշխանությունը, պետք է որ պատկանի մոլորակի ամենահարուստ մարդկանց:

Տեսանելի ապագայում «գլոբալիզացիան» այն կերպով, ինչպես որ ծավալվում է այսօր, կարող է բերել խոշոր «հակադեմոկրատական» տրանսֆորմացիայի, երբ մոլորակային իշխանությունը կհայտնվի աշխարհի մեկ տասնյակ ամենահարուստ մարդկանց ձեռքում:

---

[27] *Аксенов К. В поисках глобального арбитра. — "Родина", 2002, N 5, с.10-13.*
[28] *Аксенов К. В поисках глобального арбитра. — "Родина", 2002, N 5, с. 40.*

[29] *Интернет.Ru., 2002, сентябрь.*

«Համաշխարհային տիրապետությունը (գերիշխանությունը)» կարող է այնքան էլ հեռու կամ անիրականալի մղձավանջ չլինել, ինչպես հիմա շատերին է թվում: Ու նա չի հայտնվելու աշխարհին չար վհուկի կերպարանքով, որ նստած բարձր ու սև դղյակում՝ հրամաններ է արձակում այնտեղից: Ավելի շուտ, դա համաշխարհային հարստության 50 %-ին տիրապետող և այն ի շահ իրեն տնօրինող ինչ-որ մի «մեծ ութնյակի» խորհուրդ կլինի: Իհարկե, նա շահագրգռված կլինի կայունությամբ ու զարգացմամբ: Անջատողական շարժումները դաժանորեն կճնշվեն միջազգային ցինված ուժերի կողմից (օրինակ՝ ՆԱՏՕ-ի): Երկրները, որոնք չեն ցանկանա հպատակվել նրան, կենթարկվեն տնտեսական պատժամիջոցների, ու հնարավոր է նաև՝ ռազմական հարձակումների:

Ապագա մոլորակային կառավարության համաշխարհային տիրապետությունը պատկերանում է որոշակի ամբողջատիրական կառավարման տեսքով՝ ներերկրային, ներպետական մակարդակում՝ դեմոկրատիայի պահպանմամբ, և ազատականությամբ՝ արտաքին՝ միջազգային հարաբերություններում: Հնարավոր է՝ սա խիստ չափազանցություն է, բայց արդի աշխարհի գլոբալիզացիան իրապես կարող է նման հետևանքներ ունենալ, եթե մարդկությունը չհայթայթի հակազդեցության արդյունավետ միջոցներ: «Մալթուսականությունը» որպես պրեդիկատիվ ֆենոմեն միշտ ծեռք-ծեռքի է ընթացել մարդկային քաղաքակրթության զարգացման հետ՝ նախազգուշացնելով սպառնացող վտանգների և հնարավոր ռիսկերի մասին: Մենք երջանիկ կլինենք, եթե այս կանխատեսումն էլ (ինչպես իր ժամանակին՝ Մալթուսի մոայլ կանխագուշակումները) անհիմն դուրս գա: Տվյալ դեպքում՝ դա կլինի ոչ թե գաղափարական սնահնություն, այլ առաջացնիչ անտիցիպացիա՝ գլոբալ գործընթացի վրա իր հակառարձ ներգործությամբ:

Ընդունված է համարել, որ Հունգարիայում ազատական բարեփոխումները շատ ավելի վաղուց են սկսվել՝ մնացյալ սոցիալիստական երկրների համեմատ: Արդիականացման առաջատար մասնագետ Ռ. Անդորկան առանձնակի ուշադրություն է հատկացնում հասարակության փոփոխվող սոցիալական կառուցվածքի ու ստրատիֆիկացիայի նախամշակմանը[30]: «Դիտարկելով անցումային շրջանի տիպական գծերն որպես սոցիալական փոփոխությունների առանձնահատուկ տարատեսակ, մենք գալիս ենք եզրահանգման, որ փոփոխական համակարգի տրանսֆորմացիան նախ և առաջ ճշանակում է ինստիտուտների լիամասշտաբ, արագ և հիմնավոր վերակառուցում: Դա փաստացիորեն ճշանակում է՝ արմատական փոփոխություն մեր ամենօրյա գործողություններում, հասարակության անդամներին հասանելի միջոցների (ինստիտուցիոնալ գործիքների) վերաբաշխում, և փոփոխություններ՝ դրանց քնույթի, կառուցվածքի և բաշխման ոլորտում»[31]:

Հունգարական սոցիոլոգները հավատում էին, որ կոմունիստական հասարակարգում այնքան թարախապալարներ են կուտակվել, որ նրա արմատական վերացումն ու անցումը նոր համակարգի պետք է ինքնաբերաբար բերեր դրական-արդյունավետ փոփոխություններ՝ նաև հասարակ մարդկանց կյանքում:

Այդուհանդերձ բազմամյա տրանսֆորմացիայի փորձը ցույց տվեց, որ բարեփոխումները տարբեր կերպ են ազդում և տարբեր ձևերով են արտացոլվում սոցիալական մեծ խմբերի կյանքում՝ հասարակական կեցության զանազան ոլորտներում: Ազատական բարեփոխումներով և չուկայական անցմամբ պայմանավորված արտադրության անկումը, գործազրկությունը, կենսամակարդակի անկումը առավելագույնս ազդեցին երկրի հասարակ մարդկանց կենսամակարդակի վրա: Ակայն ազատական բարեփոխումներից դեռ շատ առաջ հունգարական հասարակության ապահամախմբումը հանգեցրել էր օտարվածության աճի, բնակչության լայն զանգվածների շրջանում ձևավորել դժգոհություն և տնտեսության մեջ՝ արմատական փոփոխությունների սպասում- ու դրանով իսկ հող էր նախապատրաստել գալիք տրանսֆորմացիայի համար՝ դառնալով դրա գլխավոր դրդիչներից մեկը: Դուցեն հենց սրա շնորհիվ էր հունգարական հասարակությունը հոգեբանորեն առավել պատրաստված անցմանը, ինչն իր հերթին նպաստեց դրա հաջողությանը:

Ներկայումս արդիականացման ավելի ու ավելի մեծ թվով տեսաբաններ են հակվում համակարգի սոցիալ-տնտեսական բարեփոխումների հաջողությունն այս կամ այն չափով պայմանավորող ներքնաշեր հասարակությանը հատուկ խորքային էթնոմշակութային գործոնների կարևորության ընկալմանը: Հայտնի գերմանացի փիլիսոփա, պրոֆեսոր Պ. Կոզլովսկին գտնում է, որ ըստ էության ամբողջովին ապաքաղաքականացված՝ զուտ չուկայական հասարակությունը արստրակցիա է: Պետության և հասարակության բաժանումը գալիս է բուրժուական հարաբերությունների զարգացման դարաշրջանից, երբ տնտեսությունը սկսում է ազատագրվել քաղաքականությունից և աստիճանաբար որոշակի ինքնավարություն է ձեռք բերում: «Միայն բուրժուական՝ ապաքաղաքականացված և զուտ չուկայի փոխանակման օրենքներով կառավարվող հասարակությունը հակասություն է ծնում պետության և տնտեսվարական հասարակության միջև»[32]:

[30] *Andorka R. Dissatisfaction and Alienation. – Andorka R., Kolosi T., Rose R., Vukovich Gy. A Society Transformed. CEU-Press, Budapest, 1999.*

[31] *Նույն տեղում, էջ 47.*

[32] *Козловски Петер. Общество и государство. М., Издательство "Республика", 1998, с.15.*

Վերջին տասնամյակների արդիականացման բույլ կողմն առհասարակ հենց «ապաքաղաքականացված շուկայի» համոզմունքն է, ինչը գործնականում սխալ, գլխիվայր շրջված խոշոր հաշվարկային սխալների պատճառով, ծախտմամբ է մատնում բարեփոխումները:

Բուլղարիայի այսօրվա ամենահայտնի գիտնականներից մեկը՝ Վ. Մանովը, քննելով համակարգային տրանսֆորմացիաների փորձն ու անհաջողությունները սեփական երկրում, գալիս է եզրակացության, որ գլխավոր պատճառներից մեկը (եթե ոչ՝ ամենագլխավորը) շուկայի բացարձակացումն է: «Բուլղարիան չափազանց կարոտ է շուկայական տնտեսության, բայց ոչ շուկայական ֆունդամենտալիզմի»,- գրում է նա իր «Բարեփոխումներըետսոցիալիստական հասարակություններում: Բուլղարիայի փորձը» գրքում[33]: Վ. Մանովը հետաոտեսորեն նախազգուշացնում է բուլղար բարեփոխիչներին, որ տնտեսական բարեփոխումների ներմուծումը՝ հանուն շուկայական տնտեսության, դեռևս քիչ է: Անհրաժեշտ է «որոշակիացնել այն շուկայական տնտեսության տիպը, որը կարելի և անհրաժեշտ է ստեղծել երկրում»[34]:

Միանգամայն պարզ է, որ զարգացման ու վերակազմավորման ուղուղում, առանց գիտականորեն նախագծված ազգային ռազմավարության, անհնարին են հաջողված բարեփոխումները: Հետևապես, զարգացման և բարեփոխումների ազգային ռազմավարության մշակմանը պետք է նախորդեն գիտական փնտրտուքները: Ու ամենագլխավորը, Վ. Մանովի կարծիքով, «առանց տնտեսական աճի՝ բուլղարական տնտեսությունում չի կարող հաջող տրանսֆորմացիոն գործընթաց տեղի ունենալ»[35]: Այլ կերպ ասած, անցումը շուկայական տնտեսության որոշակի շրջանայացություն է պահանջում, իսկ իրականացվող բարեփոխումների հաջողության երաշխիքը կարող է լինել աղքատության հաղթահարումը: Անցյալ դարի 70-ական թվականների՝ հարաբերականորեն բարգավաճ Բուլղարիան, 90-ականների կեսին հայտնվեց խոր տնտեսական ճգնաժամում՝ շատ բանով հարուցված տրանսֆորմացիոն գործընթացներով: «Բուլղարական տնտեսության և պետության դեգրադացիայի ամենապերճախոս ապացույցը ժողովրդագրական համակարգի ղրությունն է: Ըստ Ադամ Սմիթի, ցանկացած երկրի բարօրության ամենաանվիճելի ապացույցը բնակչության թվի աճն է: Բուլղարական բնակչության թվաքանակի նվազումը, մի կողմից՝ ցածր ծնելիության և բարձր մահացության, մյուս կողմից՝ արտագաղթի հետևանքով՝ պարզապես տնտեսության և պետության դեգրադացիայի մեկ այլ արտահայտությունն է»[36]:

Ժամանակին Պ. Սորոկինը հակադրվում էր կարծրացած այն տեսակետին, ըստ որի լավագույն դատավորը «պատմության դատն է» և որ «գողից ավելի լավ է Երևում», իսկ պատմական իրողություններն իրենց ճշմարիտ գնահատականը ստանում են միայն որոշ ժամանակ անց[37]: Նա պնդում էր, որ ժամանակակցի հայացքը՝ ներված պատմական իրադարձությունների, ոչ պակաս կարևոր է, եթե ոչ՝ առավել կարևոր: Ժամանակակիցները, գտնվելով իրադարձությունների հորձանուտում, հետազոտում են դրանք «ներսից» և անմիջականորեն, այն դեպքում, երբ ապագայի պատմաբանները իրենց հետևություններում հիմնվում են կցկտուր, երբեմն անկատար փաստաթղթերի վրա:

Պ. Սորոկինը կողմնակից էր անմիջական դիտարկման՝ մի մեթոդի, որը լայնորեն կիրառվում է բնական գիտություններում և որը գերադասվում է՝ միջնորդավորված դիտարկման համեմատ: Հենց այս դիրքերից էր նա վերլուծում անցյալ դարի սկզբի ռուսական հեղափոխությունը, որի ականատեսն էր եղել: Նա գրում էր, որ բոլոր փորձերը՝ քնորոշել այն, ինչը կոչվում է հեղափոխություն, անբավարար են, և առաջադրում էր սոցիալական հեղափոխության իր ըմբռնումը, որտեղ առանձնացնում էր չորս հիմնավոր՝ ֆունդամենտալ գործընթացներ. 1) մարդկանց վարքագծի, հոգեբանության, գաղափարախոսության, արժեքների և հավատալիքների վերափոխություն, 2) բնակչության կենսաբանական կազմության, նրա վերարտադրության փոփոխություն, 3) հասարակության սոցիալական կառուցվածքի ձևախեղում, 4) տեղաշարժեր հիմնարար սոցիալական գործընթացներում[38]: Բացի հեղափոխություններից, Պ. Սորոկինը տեսնում էր «սոցիալական կազմակերպման, վերակազմավորման այլ եղանակներ» ևս: Եվ այդ եղանակները կամ միջոցներն ունեն իրենց կանոնները.

- բարեփոխումները չպետք է ոտնահարեն մարդկային բնությունն ու հակասեն նրա հիմնարար բնագրերին,
- կոնկրետ սոցիալական պայմանների մանրազնին գիտական հետազոտությունը պետք է կանխադրված լինի, այսինքն՝ նախորդի բարեփոխման ամեն մի գործնական ղրսևորմանը կամ իրագործմանը:

[33] *Манов Васил. Реформа в постсоциалистическом обществе. Опыт Болгарии. М., Экономика, 2000, с.357.*
[34] *Манов Васил. Реформа в постсоциалистическом обществе. Опыт Болгарии. М., Экономика, 2000, с.98.*
[35] *Նույն տեղում, էջ 255:*
[36] *Նույն տեղում, էջ 8:*
[37] *Сорокин П. Человек. Цивилизация. Общество. М., Изд-во Политической литературы, 1992, с. 269.*
[38] *Сорокин П. Человек. Цивилизация. Общество. М., Изд-во Политической литературы, 1992, с. 269-270.*

• վերակառուցվող յուրաքանչյուր տարրը սկզբնապես պետք է փորձարկել փոքր սոցիալական ծավալով և դրական արդյունքներից հետո միայն տարածել դրանք ողջ հասարակության վրա,

• բարեփոխումները պետք է կյանքի կոչվեն իրավական և սահմանադրական եղանակներով [39]:

Թվարկելով սոցիալական վերակառուցման կամ բարեփոխումների կանոնները, Պ. Սորոկինն իսկույն վերապահում է անում. «...հեղափոխություններն անտեսում են այդ կանոնները»: Տգետները, որոնք հաճախ սոցիալական հեղափոխությունների գլուխ են կանգնած, որպես կանոն՝ անտեսում են այդ օրենքները և այդ պատճառով էլ բռնության են դիմում, և զոհերի առկայությունը սովորական փաստ է դառնում:

XX դ. վերջին մեր հասարակությանը համակած սոցիալական փոփոխությունները դժվար է մտածված «վերակառուցողություն» անվանել: Այդ փոփոխությունները ոչ մի կերպ չէին համապատասխանում վերը թվարկած կանոններից և ոչ մեկին: 90-ական թվականների ընթացքում իրականացված բարեփոխումների մի մասը ռտնահարում էր մարդկային բնությունը ու այն ժամանակ կայացված հասարակական հիմնարար բնագրերը: Ջորջրինակ այնպիսիք, ինչպիսիք են պաշտպանվածության, ինքնապահպանման, մարդկային կյանքի և ընտանիքի արժեքավորության զգացումը: Բացի սրանից, այդ տարիների բարեփոխումները կանխադրված չէին լուրջ գիտական ճախագծմամբ, ու, առավել ևս, չէին փորձարկվել փոքր սոցիալական մասշտաբներով: Միակ սկզբունքը, որին քիչ թե շատ փորձում էին հավատարիմ մնալ «բարեփոխիչները» դա հասարակության վերափոխման իրավական և սահմանադրական եղանակներին հետևելն էր: Թեև այստեղ էլ նրանք շատ հաճախ սայթաքում էին՝ ոտնահարելով սեփական սահմանադրությունը:

Ըստ ամենայնի, մեր հասարակությունում տեղի ունեցած փոփոխությունները, ավելի ստույգ, կարելի է որակել որպես «հեղափոխական»: Եթե հետևելու լինենք Պ. Սորոկինի տված բնորոշումներին, ապա, իսկապես, այդ բարեփոխումները փոխեցին մարդկանց վարքագիծը, գաղափարախոսությունը, արժեքները, փոխեցին հասարակության սոցիալական կառուցվածքը, հիմնավոր փոփոխություններ առաջացրին սոցիալական գործընթացներում: Հասարակության վրա իրենց ներգործությամբ՝ անցկացված բարեփոխումները, անկասկած, հեղափոխական բնույթ էին կրում: Դրանք խորքային կառուցվածքային փոփոխություններ առաջացրին հասարակարգի բուն հիմքերում: Իր ուժով և խորությամբ՝ սոցիալական օրգանիզմի նման փոփոխությունը հավասարազոր է միայն հեղափոխության:

Սակայն այդ «հեղափոխության» պատճառների, դրա առաջմղիչ ուժերի, նրա իրականացման մեջ շահագրգռված և ներքաշված սոցիալական շերտերի մասին վերլուծության ամենափոքրիկ փորձից իսկ արդեն գալիս ենք եզրահանգման, որ դա հասարակության վերակառուցման «վերնախավային» փորձ էր: Մտահղացված էր այն որպես «վերևներից» սկսվող հասարակության մասնակի վերակառուցում, բայց իրականացման գործընթացում հանկարծակիորեն փլուզող-քանդարար բնույթ ընդունեց և բերեց անկանխատեսելի արդյունքների ու հետևանքների: Հսկողությունից դուրս եկած «սոցիալական վերակառուցումը» հասարակության վրա մի հզոր հեղափոխության ներգործություն ունեցավ, որը կարող էր հենց այդպիսին լինել, բայց իրականում այդպիսին չեղավ: Մարդկային զանգվածներն այդ մասշտաբային վերակառուցման մեջ, ավելի շուտ, սկզբում ստատիստների, դիտորդների, իսկ այնուհետև՝ բարեփոխումների զոհերի դեր էին կատարում, և ոչ թե ակտիվ դերակատարի:

Հասարակությունը հայտնվեց մի «փորձամկան» դերում, որի նկատմամբ մանիպուլիացիաները դուրս էին եկել փորձարարի վերահսկողությունից: Հետագան մի ամբողջ շարք հաջորդական տրանսֆորմացիաների բնույթ էր կրում: Պատահական չէ, որ վերջին տարիների հետազոտողները բարեփոխումները անվանակոչել են որպես հասարակության տրանսֆորմացիա: Հենց «տրանսֆորմացիա» տերմինն է, մեր տեսակետից, լավագույնս արտահայտում բնույթն այն գործընթացների, որ ապրում է մեր հասարակությունը: Ո՛չ «բարեփոխումները», ո՛չ մտածված «վերակառուցումը», ո՛չ չմտածված «անցումը» կամ հասարակության վերահսկվող «փոխադրումը» նրա մի վիճակից մյուսին՝ ցանկալիին, և ոչ էլ, առավել ևս, «սոցիալական հեղափոխությունն» առանց զանգվածների մասնակցության՝ չեն կարող բավականաչափ համոզչորեն բնութագրել տեղի ունեցածը: Որովհետև իրականում մեր հասարակությունում մի որոշակի փոխակերպում է իրագործվում, ինչի ականատեսներն ենք բոլորս: Այդ կապակցությամբ Վ.Ա. Յադովը գրում է. «Այսպիսով, համարժեք հասկացությունը, որն ազատ է «վերնտորային ծանրաբեռնվածությունից»՝ «տրանսֆորմացիա» հասկացությունն է» [40]: Այլ կերպ ասած, դա «բարեփոխիչների» վերահսկողությունից դուրս եկած սոցիալական «վերակառուցում»

[39] *Նույն տեղում, էջ 271:*

[40] В.А. Ядов. А все же умом Россию понять можно - В кн.: Россия: трансформирующееся общество. М., Канон-Пресс-Ц., 2001, с. 12.

է, որն արդյունքում հասարակության ինքնահոս, տարերային փոխակերպման կերպարանքն ընդունեց, ձևափոխվեց մի գործընթացի, որը դեռևս չի գտել իր եզրափակումը: Մի գործընթաց, որի վերջնական նպատակակետը նշանակված չէր գործընթացը նախաձեռնողների կողմից, ավելին՝ նրանց անհայտ էր: Գործընթաց, որն արդեն շատ բանով ինքնուրույն բնույթ է կրում և զարգանում է իր ներքին, իմանենտ տրամաբանության շնորհիվ և դրան համապատասխան: Այդ տրամաբանությունը ոչ մեկի կողմից բավականաչափ մեկնաբանված, ու առավել ևս, նախածրագրված չէ:

Սոցիալական տրանսֆորմացիայի գործընթացի վրա ազդող գործոնների քանակն շատ մեծ է: Հաշվի առնել ներգործության ողջ հետևանքները՝ թվում է անհնարին: Տրանսֆորմացիան գոնե ինչ-որ կերպ «սանձելու», հսկողության տակ առնելու փորձեր մշտապես ձեռնարկվում են, բայց դրանք դեռևս լիակատար հաջողության չեն հանգեցրել: Որոշ երկրներում վերափոխություններն սկսելուց տասը տարի անց հաջողվել է դրանք մտցնել ինչ հունի մեջ, սոցիալական կառույցի արդեն հայտնի մոդելների մեջ, որոնք որոշակի կայունություն են երաշխավորում: Այլ երկրներում մինչ այժմ դրան հասնել չի հաջողվել և ընթացիկ փոխակերպումների հետևանքները դեռևս պարզորոշ չեն ուրվագծվել: Այն, ինչ տեղի է ունենում՝ ավելի շուտ հիշեցնում է ճգնաժամ, պատուհաս, տարերային աղետ, քան թե հասարակության սոցիալական վերակառուցման լավագույնս մտածված, հաշվենկշռված գործընթաց: Տրանսֆորմացիան շարժվում-գլորվում է իր ընթացքով, իսկ կառավարիչները հազիվ են հասցնում մաքրել, հարթեցնել, մեղմացնել դրա բռնած ավերածությունների հետևանքները: Գործընթացի կառավարումը ոչ թե կանխում է իրադարձությունների ընթացքը, այլ ընդհակառակը, բարշ է գալիս իրադարձությունների պոչից: «Բարեփոխիչներն» անընդհատ փորձում են «կառչել» խուսանավող գործընթացից: Տեղ-տեղ դա նրանց հաջողվում է, ու տպավորություն է ստեղծվում, որ ահա, ուր որ է, այն կմտնի վերահսկվող բարեփոխումների հուն: Սակայն առաջմ, դա հասարակության ողջ սոցիալական կյանքի մի այնպիսի խորը և մասշտաբային փոխակերպում է, որ թեև մեր աչքի առաջ է ծավալվում, բայց, ըստ էության՝ մեր կամքից անկախ:

1. 2. ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Անցումային հասարակություն» հասկացությունն օգտագործվում է հասարակական համակարգի այն վիճակը բնորոշելու համար, երբ որպես համակարգ հանդես եկող հասարակության նախորդ որակական որոշակիությունն այլևս չի գերակայում, իսկ նորը գտնվում է ձևավորման գործընթացում: Սա հասարակության մի յուրահատուկ վիճակ է, երբ այն գտնվում է անընդհատ կառուցվածքային փոփոխությունների գործընթացում: Սոցիալական համակարգը «անցումային» անունն է կրում այն պատճառով, որ «...նրանում տեղի են ունենում գաղափարաքաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական ու կառուցվածքային-ինստիտուցիոնալ այնպիսի փոփոխություններ, որոնց շնորհիվ համակարգն անխուսափելիորեն կորցնում է իր նախորդ որակական որոշակիությունը՝ ձեռք բերելով որակական որոշակիության նոր հիմունքներ»[41]: Անցումային երկրների տնտեսական, քաղաքական, սոցիալական որտրները բնութագրելու համար օգտագործվում է «արանգիզիոն» (արանգիտ) տերմինը, իսկ տեսական-մեթոդոլոգիական հնարների ողջ համակարգի համար «արանգիտոլոգիա» գիտական հասկացությունն է օգտագործվում: Անցումային հասարակություն մեջ կողք-կողքի միաժամանակ առկա են ավանդական, արդիականացած ու այսպես կոչված «պոստմոդեռն» հասարակության տարրեր: Նախկին ԽՍՀՄ երկրներում ԽՍՀՄ-ի վերջին՝ փոխակերպման շրջանին հաջորդեց անցումային շրջանը, երբ սոցիալիստական համակարգերը իրենց կապիտալիստական զարգացման ուղու հիմքերը դրեցին: Հենց այս փոխակերպման փուլում է, որ նախկին ԽՍՀՄ ժողովուրդների հոգեբանության մեջ վերջնականապես ձևավորվեց բազմաստիճան օտարացման երևույթը: Ն.Ի. Լապինն ու համահեղինակները խոսում են չորաստիճան օտարացման մասին.

- օտարացում իշխանությունից,
- վարձով աշխատողների օտարացում աշխատանքի արդյունքներից,
- արտադրության օտարացում ընակչության իրական պահանջմունքներից,
- օտարացում հավատի ինֆորմացիայից,
- հասարակության օտարացում զարգացման իր ներքին հնարավորություններից,
- հասարակական աշխատանքի օտարացում հասարակության կյանքի օրինական կառույցներից:

[41] Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000, էջ 3:

Այս վերջին աստիճանը «ժամվում է առաջինի հետ (օտարում իշխանությունից): Վրա է հասնում... խորհրդային հասարակության նախաճգնաժամային շրջանը, ապա՝ նրա ընդհանուր ճգնաժամը»[42]:

Անցման գործընթացը բոլորովին էլ հարթ ու ժամանակի մեջ հավասար բաշխված չի ընթանում: Անցման ամենաբուռն շրջանը անցումային ճգնաժամ անունն է կրում: Սա հենց այն փուլն է, որի ընթացքում է հիմնականում տեղի ունենում կայուն հասարակության վերածումը անցումայինի: Այն չպետք է նույնացնել աղետի հետ և կարելի է բնորոշել որպես հասարակական համակարգի գործունեության ընդհատման փուլ, որ կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ելք, իսկ ցանկացած ելքի դեպքում հասարակական գործընթացների վրա թողնում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Մինչդեռ «աղետը» ողջ համակարգի փլուզում ու ավելի վատ որակներով նոր համակարգի ձևավորում է կամ զարգացման լրիվ դադարում: Անցումային ճգնաժամը հասարակության այնպիսի վիճակ է, որի դեպքում մարդկանց ու երկրի համար մեծ դժվարություններով իրականացվում են հասարակական փոփոխություններ, որոնք ուղեկցվում են հակասական ձգտումներով, հակասական հատկություններով, սակայն նաև միջազգային սոցիալիզացիայի իրականացման, կյանքի բոլոր ոլորտներում համաշխարհային ստանդարտներին միանալու ընդհանուր ձգտման առկայությամբ»[43]: Ճգնաժամի հետևանքն այն է լինում, որ տարբեր ոլորտներում գործունեությունն ապարդյուն կամ ծայրահեղորեն քիչ արդյունավետ է դառնում, հասարակական համակարգը հետքնթաց է ապրում դեպի կեցության ավելի վաղ շրջանի ձևեր, դառնում անկառավարելի: Որոշ ոլորտներում մարդիկ նպատակին հասնելու համար սկսում են ավելի պարզ մեթոդներով գործել, որոշ ոլորտներում զուգահեռաբար ավելի բարդ նորագոյացություններ են հայտնվում, որի վրա ծախսված հսկայական էներգիայի կորստի պատճառով բառային վիճակ է ստեղծվում: Քաոսից նոր համակարգի կառուցումն գործընթացի նկարագրությունը դժվարություններ է հարուցում, քանի որ այն ընդգրկում է հասարակության միաժամանակ բոլոր շերտերը:

Անցումային հասարակությունը բնորոշող գծերը ավելի հստակ կերպով դրսևորվում են քաղաքական ու սոցիալ-տնտեսական դաշտերում:

[42] Наше общество в трех измерениях. В авторской редакции член-корреспондент РАН Н.И. Лапин, канд.филос.наук Л.А. Беляева. М., 1994, с. 49.
[43] Катаев С.Л. Позитивные аспекты трансформационного кризиса с. 1.

Քաղաքական դաշտ: Դեպի ժողովրդավարություն, որպես նոր տիպի հասարակարգ անցումը մեր ժամանակների գերակայող խնդիրն է: Նախորդ, ավելի ավանդական հասարակարգը, կարելի է ասել, անհատին կաղապարում էր կոշտ, դոգմատիկ սոցիալական կառույցներով: Նոր ժամանակներում տեղի է ունենում ղրանց փլուզում՝ քաղաքացիական հասարակության կառուցման նպատակով: Լավագույն դեպքում նպատակի իրականացումը պետք է հանգեցնի մի վիճակի, որը Տոկվիլի բնորոշմամբ կոչվում է «ժամընդհանուր հավասարության ֆենոմեն»: Արդյունքում, քաղաքական որոշումների կայացման մեջ ամենամեծ դերակատարությունն ունենում են լայն զանգվածները, որի համար, սակայն բոլորովին էլ պարտադիր չէ դրանց քաղաքական լավ պատրաստվածություն ունենալը:

Անցումային շրջանում շատ կարևոր դեր ունեն ցանկացած ոլորտի ինֆորմացիոն հոսքերը: Քանակության ու նոր ձևավորվող քաղաքական էլիտայի պատրաստված ու իրազեկ լինելը ծանր հետևանքներ է ունենում: Սրա հետևանքներից էր այն, որ միակուսակցական համակարգից դեպի բազմակուսակցականն անցում կատարող երկրներում միանգամից տասնյակ ու հարյուրավոր կուսակցություններ ձևավորվեցին:

Անձնային ու խմբային մակարդակում ամեն ինչի մասին ծայրահեղացված ու հակասական պատկերացումներն ու տեղեկությունները, ծայրահեղացված ընկալումներն ու վարքը տոտալիտար միակուսակցականությունից բազմակուսակցական դաշտի քաոսի մեջ նետեցին հասարակությանը: Պատճառը միանգամից, առանց աստիճանականության դեպի բազմակուսակցական ժողովրդավարությունն ունեցած ձգտումն էր:

Ծայրահեղական լինելու պատճառներից մեկն, ինչպես արդեն նշել ենք, անիրազեկ լինելն էր, ժողովրդավարության մասին միակողմանի, իռացիոնալ պատկերացումները, որոնք նույնականացնում են ժողովրդավարությունը բազմակուսակցականության հետ, հաշվի չառնելով, որ ժողովրդավարական երկրի համար բազմակուսակցական համակարգի առկայությունը պարտադիր պայման չէ (Իսպանիա, Լատինական Ամերիկայի որոշ երկրներ), և որ ժողովրդավարության կերտման համար միայն բազմակուսակցական համակարգի առկայությունն ամենևին էլ միակ ու բավարար պայմանը չէ (նախկին ԳԴՀ, Լեհաստան):

Հայաստանի Հանրապետությունում 2002 թ. առկա 114 կուսակցություններից հիմնական մասի հիմնումը տեղի է ունեցել 1991 թ., որը մի շարք այլ փաստերի հետ ապացուցում է այն հանգամանքը, որ ծայրահեղության հակված մտա-

ծողության, զգացմունքների, վարքի դրսևորումները, հասարակության առավել հեղհեղուկ վիճակները բնորոշ են անցման առաջին փուլին: Այս պատկերը բնորոշում էր ոչ միայն Հայաստանը: Նոր հազարամյակի շեմին ռոչ հետխորհրդային տարածքի երկրներում քաղաքական դաշտի ընդհանուր, գերիշխող պատկերն այս էր: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում 2002 թվականին հիասնինը կուսակցություն, երևսունհինգ քաղաքական կազմակերպություն, հարյուր չորս քաղաքական շարժումներ գոյություն ունեին, Ուկրաինայում 2001 թվականին՝ հարյուր քսանվեց կուսակցություն, Վրաստանում՝ հարյուր քառասունհինգ, Ղրղզստանում 1990 թվականին՝ քառասուն, Էստոնիայում 1998 թվականին՝ քսանութ: Ծայրահեղականությունը «սիմվոլիկ ծևով աստիճանավորող», ներկայացնող այս տվյալների տարբերությունները թերևս պայմանավորված են էթնիկական առանձնահատկություններով (օրինակ, հայերի կոլեկտիվ մտածելակերպին հակված չլինելու փաստով, ավելի շատ դեպի անհատապես արտահայտվելը ձգտումով):

Բնականաբար, այս կուսակցությունների մի մասը միայն թղթի վրա գոյություն ունեցող կուսակցություններ էին, որոնցից շատերը մի քանի անդամներ ունեին: Բավական տևական ժամանակի ընթացքում կուսակցություններից մնացին միայն համեմատաբար բազմանդամ, համեմատաբար ավելի գործող, ավելի կարևոր գործունեություն ծավալած կամ ավելի ճիշտ գովազդվող կուսակցությունները: Մնացածներն այս ընթացքում մաղվեցին ու անհետացան: Չնայած այս մաղման պրոցեսին, այժմ էլ կան այնպիսի կուսակցություններ, որոնք, ինչպես արդարացիորեն նշում է Գ. Պողոսյանը, ընտրությունից ընտրություն են գործունեություն ծավալում՝ դրանց միջև ընկած ժամանակահատվածում ընդհատակ անցնելով. «...նրանց մասին ոչ ոք ոչինչ չի լսում, ոչինչ չի իմանում: Նման կուսակցությունների գլխավոր նպատակը Ազգային ժողովում մեկ-երկու պատգամավորական տեղ ապահովելն է: Քաղաքականությամբ լուրջ չեն զբաղվում, սեփական հստակ ծևակերպված ծրագիր, ինչպես նաև ծևավորված սեփական էլեկտորատ չունեն: Դրանք մեկօրյա կուսակցություններ են, որպես կանոն, պոպուլիստական բնույթի, որ կոչված են իրենց լիդերների հավակնոտ շահերին ծառայելու»[44]:

Մարդկանց մտածողության մեջ կուսակցություններն «աննշանավորված» են, այսինքն կուսակցությունները, նրանց գաղափարախոսություններն ու ծրագրերը չէ, որ ընտրվում են, այլ որոշակի կոնկրետ անձինք, որոնք տվյալ կուսակցության անդամներ են:

Քաղաքական դաշտում առկա մաքիավելիզմն ու կաշառակերությունը մարդկանց մոտ զարգացրել են ակատելի թերահավատություն, որը ստիպում է մտածել, որ ազնիվ, բարեխիղճ, արդար մարդը չի կարող ընտրվել կամ երկիր ղեկավարել: Սա կոպիտ ծևով բնորոշելու դեպքում, կարելի է ասել, որ «լավ» և «վատ» քաղաքական գործիչների կամ պետական պաշտոնյաների տարբերակման չափանիշը ոչ թե «թալանելը» կամ «չթալանելն» է, այլ այդ գործում խղճի ու սահմանների առկայությունը:

Անցումային հասարակության մասնիկ հանդիսացող անձի համար նման պատկերը կարծես սովորական է դառնում: Կուսակցությունների ու նրանց լիդերների մաքիավելիզմի ու «բացահայտ անսկզբունքայնության պատճառով բնակչության մոտ ամրապնդվում է այն կարծիքը, որ քաղաքականությունը բարոյականությունից հեռու ոլորտ է»[45]:

Ժողովրդավարական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են խոսքի ազատությունը, տպագրության ազատությունը, խղճի ազատությունը և այլն, ինչ խոսք, միանգամից ներմուծվեցին հետխորհրդային տարածք: Սակայն հենց այդ միանգամից մուտք գործելը, դրա անսպասելիությունն ու շոկային լինելն էլ հենց պայմանավորեցին վերոհիշյալ իրողությունները ծայրահեղությունների մեջ ընկնելուն ու յուրացնելուն:

Ի տարբերություն առաջադեմ հայացքներով, դարերով ժողովրդավարության կերտած հասարակությունների, անցումային հասարակություններում ժողովրդավարությունը ծուլացնում է ընտրություններին մասնակցելու, մյուսների հետ հավասար ձայն ունենալու հետ, իսկ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքական գործընթացներին անձի մասնակցությունը սինիմումի է ձգտում: Սա, իհարկե, պատմական պատճառներ ունի. դարեր շարունակ ռոջ հետխորհրդային տարածքում բնակչությունը խիստ սահմանափակ մասնակցություն է ունեցել կառավարման մեջ, և ծուլընիկ խորհրդային կարգերի ժամանակ այդ մասնակցությունը խիստ ձևական բնույթ է կրել:

Դարերի ընթացքում ձևավորված այդ «սովորական» վիճակից կտրուկ անցումը ավելի ակտիվ քաղաքական վարքին, խիստ մեծ դժվարությունների առաջ է կանգնեցնում հասարակության ցանկացած անդամի: Այս տեսանկյունից հատկապես դժվար է Հայաստանի Հանրապետության կամ պետականութ-

[44] Погосян Г.А. Современное Армянское общество: особенности трансформации. М., 2005, с. 129.

[45] Նույն տեղում, էջ 129:

յան կերտման նման պատմություն ունեցող երկրների վիճակը: Դարեր շարունակ չունենալով անկախ պետականություն՝ գտնվել է այս կամ այն պետության կազմում, որոնց դեմ պայքար է մղվել պետականության ձեռքբերման համար: Փաստորեն, արդյունքում ձևավորվել է մարդկային մի սերունդ, որի մասը կազմող յուրաքանչյուր անձի պատմական հիշողության մեջ կա «պետությունթշնամի» զուգորդությունը:

Վերոհիշյալ փաստը, անցումային շրջանին բնորոշ օբյեկտիվ դժվարություններին զուգահեռ, հանգեցնում է նրան, որ ցանկացած տեսակի դժվարությունների ժամանակ, այդ թվում նաև անձնական, պետությունը դառնում է մի տեսակ քավության նոխազ:

Ընդհանրապես, այս շրջանի տնտեսական դժվարությունների չափից շատ լինելը հանգեցնում է նրան, որ մարդկանց մոտ ձևավորվում են «էքստրապատիժային դիրքորոշումներ», ամեն ինչի պատճառը դրսից է գալիս՝ պետությունից:

Ակնհայտ է ոչ միայն պասիվությունը տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքային իշխանությունների գործունեության մեջ, այլ նաև ընդհանուր անտարբերությունը նրանց իրականացրած գործունեության նկատմամբ, եթե այն ուղղակիորեն իրենց չի առնչվում: Մինչև իսկ այս դեպքում հնարավոր է ականատես լինել կույր հնազանդության, վատ իմաստով «ճակատագրապաշտության», որը միստիկ մտածողության հետևանքներից մեկն է:

Այսպիսով, մարդկանց մոտ գրեթե բացակայում է սոցիալ-քաղաքական ակտիվությունը, պետական գործերի համար պատասխանատվությունը: Այս բավական տևական քաղաքական ապաթիայի պատճառներից է սոցիալ-տնտեսական ծանր վիճակն ու, հետևաբար, այդ ոլորտի խնդիրների առաջնահերթությունը: Անցումային շրջանի սկզբնական փուլում ապրող մարդու մասին խոսելիս նրան կարելի է բնորոշել որպես ապրուստի տարրական պայմանների ապահովմամբ մտահոգությամբ ապրող մարդ: Բացում անսպասելի փոփոխությունների հետևանքով բնակչության տագնապայնությունը բավական բարձրացած է լինում, գործողությունները՝ ուղղված ինքնապաշտպանության ու գոյատևման խնդիրներին:

Որոշ անցումային հասարակություններում համընդհանուր ապաթիայի պատճառներից է դառնում քաղաքական գործիչների ու պետության ներկայացուցիչների, ողջ բյուրոկրատական համակարգի ու ընտրությունների անարդարությունները: Այսինքն, դրա պատասխանատվության մի մասը իշխանություններ վրա է ընկնում, որի հանդեպ ժողովուրդն անվստահություն է զգում: «Ըստ մեր հարցման արդյունքների, ավելի մեծ վստահության են արժանանում քաղաքական կուսակցությունները, քան կառավարությունը: Հարցման մասնակիցների միջին հաշվով վաթսունութ-յոթանասուն տոկոսը համաձայն է, որ իշխանությունները բավարար չափով ուշադրություն չեն դարձնում հասարակ մարդկանց խնդիրներին ու չեն հետաքրքրվում դրանցով:

Դատախազության ու դատարանների նկատմամբ վերաբերմունքն ավելի վատ է: Հարցմանը մասնակցածների միայն 1.8%-ն է լիովին համաձայն, իսկ տասնութ տոկոսը՝ միայն մասամբ, որ դատարաններում վճիռներ կայացվում են միայն ազնվորեն և օրենքին համապատասխան կերպով: Նույնիսկ մարդկանց միջև վեճեր ծագելու դեպքում 69,2% -ը նշել է, որ իրենց խնդրի լուծումը չեն վստահում դատարաններին»[46]: Սրան նպաստել է նաև ընդհանրապես պաշտոնավորների շրջանում գնալով ավելի ածող կաշառակերությունն ու կոռուպցիան, որն առավել ցայտուն է դառնում ծայրահեղ աղքատության ֆոնի վրա: Հասարակության մեջ գոյություն ունեցող չարիքների նկատմամբ աստիճանաբար արդեն մի տեսակ կոնֆորմիզմ է ձևավորվում:

Անցումային շրջանի մասին խոսելիս, քաղաքական դաշտի բնորոշիչ գեղեցիկ օրինաչափություն են համարում «իմ թիմը, իմ ընկերը, խնամին, բարեկամը, իմ համախոհ-գաղափարակիցը, մենք ենք, մեր դեմ խաղ չկա» սկզբունքը պաշտոնները բաժանելիս և այս հասկացությունները վարկաբեկեց անգամ ազնիվ ցանկություններն ու նկատառումները: Այնուհետև գրավելով իշխանության բոլոր լծակները՝ ՀՀԸ-ի առաջնորդների մի մասը (մյուսը օտարվեց գաղափարական նկատառումներով) անջատվեց, միավորվեց ու դարձավ իշխող քաղաքական կուսակցություն՝ հասկացության իր ամենատխրահռչակ դրսևորումներով: ...Վեհ գաղափարախոսությունը հօդս ցնդեց, որովհետև ժողովուրդն օտարվեց այդ գաղափարից, որը սկսեց աշխատել ի վնաս ազգի ու ժողովրդի»[47]:

Պաշտոնյաների մեծ մասը, մասնագիտական որևէ լուրջ պատրաստվածություն չունենալով, իշխանությունների վերին լծակներից սկսելով, շղթայական ռեակցիայով այլափոխում է ազգի էթնիկական բարոյահոգեբանական նկարագիրը: Կյանքի հորձանքն ընկած այսպիսի մարդը, որը «ներտաճելով աթոռին մեծամտացել ու հոռետել է, զուրկ է ռեֆլեքսիայի ընդունակությունից, ...որպեսզի օրվա վերջին գլուխն առնի ափերի մեջ և վերլուծի իրեն, իր արարքները

[46] Погосян Г.А. Современное Армянское общество: особенности транс-формации. М., 2005, с. 137-138:

[47] Արզումանյան Ս.Ջ. Քաղաքականությունը և անձի քրեականացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները. Հոգեբանությունը և կյանքը. 2000թ, N 3, էջ 27:

ու մոտեցումները, գործողությունները ...շրջապատի, մարդկանց, ազգի համար»[48]: Այսինքն, այստեղ արդեն գործողությունների հիմքում մասնագիտական խորը գիտելիքները, մեծ հմտություններն ու կառավարման ունակությունները չեն, իսկ գործունեության միակ դրդապատճառ հանդիսացող շահը հանգեցնում է պաշտոնի չարաշահման՝ տարբեր ձևերով ու տարբեր ոլորտներում: Այս շարքում հայտնված մարդը շատ շուտ վերածվում է սեփական կյանքն անիմաստ վատնող, հոգեկանում որևէ մնայուն արժեք չունեցող ու որևէ վեհ գաղափարի չհետևող կենդանի օրգանիզմի: Նրա դեպքում կյանքի գոյաբանական իմաստի մասին խոսելն անգամ ավելորդ է:

Անցումային շրջանում խոսքն ու մամուլը դառնում են անձի ինքնարտահայտման աստիճանի չափանիշ: Տասնյակ տարիներով լռության ու քողարկման սովոր դարձած ժողովուրդն այս ընթացքում անցնում է դեմոկրատիայի այս շատ կարևոր ինստիտուտների կառուցման ճանապարհով: Մարդու մոտ սկզբնական շրջանում առաջացած հզոր շոկից այս դեպքում ևս մարդը հակառակ անկառավարելի ծայրահեղության մեջ է հայտնվում: ՁԼՄ-ներից, իմտերնետից «հոսող» ինֆորմացիայի ալիքը իր նորությամբ, բացությամբ տառապագիորեն չշմնցնում է ինֆորմացիայի քողարկվածության սովոր մարդուն:

Սակայն այս «ազատություն» կոչվածն ինչ-որ իմաստով բավական հարաբերականն բնույթ ունի. «թղթի բանկությունն ու ոչ մեծ պահանջարկը խմբագիրներին ստիպում են դռներներ փնտրել և, հետևաբար, ֆինանսավորման արտաքին աղբյուրներից կախվածության մեջ ընկնել: Հաճախ այդպիսի աղբյուրներ են դառնում այս կամ այն քաղաքական կուսակցությունները: Ունևոր և նույնիսկ ոչ այդքան ունևոր քաղաքական կուսակցություններ իրենց պարտքն են համարում տպագիր օրգան ունենալը: Շատ բանով բոլշևիկներից եկող այս ավանդույթը խորապես արմատավորվել է նաև ժամանակակից քաղաքական գործիչների կուսակցական մենտալիտետում»[49]: Սրա պատճառներից է թերևս նաև այն, որ այս կուսակցություններն, ի դեմս իրենց ղեկավարության, քաջ գիտակցում են այն, որ արդի հասարակության մեջ զանգվածային լրատվության միջոցները կարող են վերահսկել անձի ինֆորմացիայի հիմնական մասը:

ՁԼՄ-ներում անընդհատ փոփոխվող ինֆորմացիան հանգեցնում է նաև մտածողության ավանդական ձևերի փոփոխմանը: Դրանցից հատկապես հեռուստատեսությունը հզոր ազդեցություն ունի զանգվածային կարծիքի ձևավորման և նույնիսկ այն մանիպուլյացիայի ենթարկելու համար: ՁԼՄ-ներն ու հասարակական կարծիքն անընդհատ փոխազդեցության մեջ են: Հեռուստատեսությամբ իրական ամբաց, հասարակության իրական անդամների տված հարցազրույցներն իրենց հերթին ձևավորում կամ տարածում են որոշակի կարծիքներ: Շատ հաճախ մարդը կարծում է, թե գործում է իր սեփական որոշումների հիման վրա, մինչդեռ դա ընդամենը ցնորք է, նրա կարծիքը շատ հաճախ դրսից թելադրված է: Արևմտյան սոցիոլոգների ապրելգետիկ ուղղության ներկայացուցիչները համոզված են, որ ժամանակակից հասարակությունները չեն կարող գոյություն ունենալ առանց լայն զանգվածների գիտակցության նպատակաուղղված մանիպուլյացիայի. «ժամանակակից մարդը տառապում է սեփական անհատականությունից և փորձելով դրանից ազատվել՝ սկսում է գործել քոլգի նման»[50]: Հակառակ՝ սոցիալ-կրիտիկական տեսակետի պաշտպանները չափազանց բացասաբար են վերաբերվում մանիպուլյացիային՝ համարելով, որ այն նպաստում է իր վիճակից գոհ, հարմարվողական, միայն զանգվածային գործածության իրերով հետաքրքրվող ու դրանով բավարարվող մարդու ձևավորմանը, ինչը, մեր դիտարկումներով, բավական բնորոշ է հատկապես վերջին շրջանի մեր հասարակական կյանքին:

Առօրյա կյանքում ցանկացած անձ գտնվում է ինֆորմացիայի հզոր ալիքի տակ, որը կարող է տարբեր ձևերով «ներկայանալ»: Անցումային շրջանում դրան պատրաստ չլինելը, նորությունները յուրացնելու ոչ բավարար ընդունակությունը, ոչ բավարար չափով պատրաստ լինելը կարող են հանգեցնել նաև հասարակության մի մասի մյուսից կտրվելուն՝ նրանց միջև հաղորդակցության խաթարմամբ ու մեծ անջրպետի առաջացմամբ:

Սոցիալ-տնտեսական դաշտ: Հետխորհրդային շրջանում, սոցիալ-տնտեսական հեղաշրջումների հետևանքով կտրուկ սկսեց փոխվել նաև հասարակության կառուցվածքը, ի հայտ եկան հասարակության նոր շերտեր, տրանսֆորմացիայի ենթարկվեցին հները: Սկսեցին փլուզվել, տարրալուծվել խորհրդային կարգերի ժամանակ ամրագրված դասակարգերը, ջնջվեցին դասակարգերի միջև սահմանները ու ցանկացած պահի հասարակության մի շերտից մեկ այլ շերտ տեղափոխումը, նոր շերտերի գոյացումը սովորական գործընթաց

[48] Նույն տեղում, էջ 28-29:
[49] Погосян Г.А. Современное Армянское общество: особенности трансформации. М., 2005, с. 146.

[50] Волков Ю.Г., Нечипуренко В.Н., Попов А.В., Самыгин С.И. Социология. Курс лекций. Феникс, Ростов-на- Дону, 1999, с. 308.

դարձավ: Այս ոլորտում մանրազնին հետազոտություններ է իրականացրել Գ. Պողոսյանը: Մեր հասարակության մեջ նա առանձնացնում է հետևյալ շերտերը.

1. Վերին շերտ-ներառում է քաղաքական և տնտեսական էլիտան (5-7%):

2. Միջին շերտ-ներառում է մանր ձեռնարկատերերին, բարձր վարձատրվող մասնագետներին, պետական համակարգի չինովնիկական ապարատը (10-12%):

3. Հիմնական շերտ-ներառում է շարքային ծառայողներին, բանվորներին, գյուղացիներին, մտավորականությանը, մանր առևտրականներին...(65%):

4. Ստորին շերտ կամ հատակում հայտնված մարդիկ-ներառում է թափառաշրջիկներին, տնական գործազուրկներին...(15%)[51]:

Հեղինակը հասարակության ներկա անցումային կառուցվածքը բնութագրում է որպես ամորֆ, անկայուն և անորոշ: Այս իրավիճակը տնական տագնապային վիճակներ է առաջացնում բնակչության մեջ: Ընդ որում, սկզբնական շրջանում ոչ թե առանձին մարդկանց, անհատների մակարդակում է անկում նկատվում, այլ ամբողջ հասարակության:

Անկումն արտահայտվում է կենսամակարդակի, սոցիալական դիրքի ու վիճակի կտրուկ վարընթաց շարժմամբ, իսկ հետագա, թեկուզ դանդաղ ու մասնակի բնույթ կրող վերելքն ավելի ուշ է սկսվում և աստիճանական ու մասնակի բնույթ է կրում:

Խորհրդային շրջանի սոցիալական համակարգի կառուցվածքայնությունը հիմնովին փոփոխությունների ենթարկվեց 90-ականների սկզբին: Այս համընդհանուր անկման ֆոնի վրա ավելի ցայտուն ձևով է արտահայտվում անհավասարությունը:

Ի տարբերություն հասարակության բոլոր շերտերն ընդգրկած, կոպիտ ասած, «բոլորին անկման նույն հնարավորություններն ընձեռած» վարընթաց շարժման, վերընթաց, դանդաղ շարժումն ավելի մասնակի, անհավասար բաշխված բնույթ է ստանում: Նախկին հասարակարգին վերաբերող ամեն ինչի հանդեպ արհամարհական ու ծայրահեղ ժխտողական հեղափոխական տրամադրվածությունները հանգեցրին հասարակության մեջ կրթության դերի թուլացմանը, դրա թեթևամտամոտեցմանը: Այս երևույթը միաժամանակ և պատճառը, և հետևանքն էր այն փաստի, որ անցումային շրջանում պաշտոններ սկսեցին զբաղեցնել մեղմ ասած՝ մասնագիտական կրթություն չունեցող անձինք: «Պա-

[51] Погосян Г.А. Современное Армянское общество: особенности трансформации. М., 2005, с. 146.

տասխանատու պաշտոններ ստացան և մարդիկ, որոնք ոչ մի պատկերացում չունեին ոլորտի մասին, և ավերեցին այն: Բարձրաստիճան սպաներ, գեներալներ դարձան ռեստորանի մատուցողներ, ավտոմեքենա լվացողներ, միջնակարգ կրթություն չունեցողներ՝ նորից նույն հայտնի սկզբունքով: Մասնագիտական ոգիտությունը դարձավ իշխող հոգեբանական գործոն: ...Քաղաքական ու տնտեսական գործունեության մեջ իշխանավորի մասնագիտական, անձնային ու վարքագծային տգիտությունը միշտ էլ ազգակործան է, որովհետև ուղղակիորեն հարվածում է մարդու կենսակերպին, նսեմացնում ու այլափոխում նրա էթնիկական արժանապատվությունը: ...Այսպիսի պայմանները պարարտ հող են դառնում, օրինակ, այս կամ այն պաշտոնյայի համար, որ կամայականորեն ավերի կրթական (կամ այլ) համակարգը իր անմիտ նորամուծություններով»[52]: Իսկ հնի ցանկացած դրսևորման ժխտման ամենածայրահեղ դրսևորումը նախկինի և նոր քրեական տարրերի՝ կառավարման ոլորտ ներթափանցումն էր:

Սոցիալ-տնտեսական ու քաղաքական ոլորտներում այսպիսի վիճակը ժողովրդի կողմից աստիճանաբար սկսեց ընկալվել որպես սովորական, բնական մի բան, իսկ սա իր հերթին հանգեցրեց հասարակության մեջ նախորդ հասարակարգի իդեալների տրամաբանորեն հակառակ որակներն ունեցող իդեալների ձևավորմանը: Եթե նախկին հեղինակությունների դրական որակներ էին համարվում ազնվությունը, արդարամտությունը, պատասխանատվությունը քո և հատկապես ուրիշների հանդեպ, ապա անցումային շրջանում նման մարդիկ պարզապես կործանման դատապարտվեցին, ու հեղինակությունների արժանիքների նոր չափորոշիչներ դարձան քաղաքական ու տնտեսական ոլորտներում ցանկացած, բայց շահավետ ձևով դրսևորվող ճարպկությունը, փողը՝ անկախ այն վաստակելու ճանապարհների բարոյական կողմը հաշվի առնելու: Ընդհակառակը, որոշ առումով խելացի ու հեղինակավոր էին համարվում ժողովրդի մեջ «գցող» հորջորջումն ստացած մարդիկ: Իսկ սրա հետևանքը ազգի համընդհանուր բարոյազրկումն ու քրեականացումն են դառնում:

Տնտեսական ծանր վիճակը, ցածր կենսամակարդակը, շատ հաճախ՝ հանապազօրյա հացի փնտրտուքը, մեծ տոկոս կազմող գործազրկությունը, վաղվա օրվա հանդեպ հավատի բացակայությունը հանգեցրին իր մասշտաբներով ազգային անվտանգության համար սպառնալից հանդիսացող արտագաղթի: Արտագաղթածների թվաքանակի մասին տվյալներն իրարամերժ են, սակայն

[52] Ազգումանյան Ս.Ջ. Քաղաքականությունը և անձի քրեականացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները. Հոգեբանությունը և կյանքը, 2000թ, N 3, էջ 28:

դրա մոտավոր մեծությունը, ըստ տարբեր աղբյուրների, 600 հազարից մինչև մեկ միլիոն 200 հազարի միջև է տատանվում: Ընդ որում եթե սկզբնական շրջանում արտագաղթող կանայք հիմնականում ընտանիքների հետ էին լքում հայրենիքը, ապա հետագայում ինքնուրույն գնացողների թիվն ավելացել է: Սրա պատճառն այն է, որ քնակչության մեծ տոկոսը կազմող գործազուրկների 64 տոկոսը կանայք են: Շատ հաճախ կանայք են իրենց վրա վերցնում ընտանիքի նյութական բարեկեցությունն ապահովելու պարտականությունն ու ծանրությունը: Սակայն սա ավելի քան անսովոր վիճակ է ստեղծում, քանի որ հայ ավանդական ընտանիքներում ընտանիքի նյութական ապահովումն հիմնականում տղամարդկանց ուսերին է ընկած: Այս դեպքում խախտվում են հայ արժեքային համակարգում տղամարդու դերի նկատմամբ հասարակական սպասումները: Հենց արտագաղթն ու երկարատև բացակայությունները, կարելի է ասել, ընտանիքներում միջանձնային հարաբերությունների, ևան ամուսնական զույգերի սեռական հարաբերությունների խանգարման հիմնական պատճառներից են հանդիսանում: Սա հիմնավորվել է ևան որոշ ուսումնասիրություններով, որոնք ցույց են տալիս, որ ընտանիքներում նախկին միգրանտ կանայք նկատելի պայքար են տանում ինքնուրույնության համար. «միգրացիայից հետո կանայք փորձում են ինչ-որ ձևով փոխել ընտանեկան շփման և հաղորդակցության նախկին ձևերը: Հայկական ընտանիքում, որտեղ որոշակի է հարաբերությունների հիերարխիան, նման փոփոխությունը մեծամասամբ անընդունելի է և հանգեցնում է նոր ընտանեկան կոնֆլիկտների առաջացմանը»[53]: Ընդհանրապես, արտագաղթը, որն ինքը դժվարությունների արդյունք է, ծնում է մի շարք այլ դժվարություններ, որոնց թվում «անհատ - միջավայր շրջանակում դրսևորվող հակասություններ, սոցիալ-հոգեբանական անպաշտպանվածության զգացումներ, ...հատկապես ընդգծվում է նյութական դժվարությունների հիման վրա առաջացող հոգեբանական ընկճվածությունը»[54]: Հետաքրքիր է այն, որ ըստ մինչև այժմ հետազոտության, եթե տղամարդկանց արտագաղթի դեպքում հիմնական պատճառների թվում հաստատապես կարող ենք նշել քաղաքական դաշտի խնդիրները, ապա կանայք ապաքաղաքաբնացած են, նրանց միգրացիայի հիմնական պատճառները ընտանիքների նյութական, տնտեսական վատ վիճակն է: Իսկ արտագնա աշխատանքի ընթացքում մարդկանց

[53] Սարգսյան Ա.Կ., Գասպարյան Խ. Ծ. Կանանց անկանոն միգրացիայի հետ առնչվող սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն: Հոգեբանությունը և կյանքը, 2001թ. N 1, էջ 20:
[54] Նույն տեղում, էջ 21:

նկատմամբ թույլ տրված ոտնձգությունները, իրավախախտումներն, ընդհանրապես, ամենատարբեր բնույթի օրինախախտումներն արդեն զարմանք չեն հարուցում: Արժեքային համակարգի խորը փոփոխություններ են տեղի ունեցել, քանի որ «...հաճախ ստիպողաբար, երբեք ներքաշվում են հարկադրված աշխատանքի, պարտադրված մարմնավաճառության, կեղծ ամուսնությունների և այլ տարբեր գործարքների մեջ: Արդյունքում միգրանտ կանանց զգալի մասը, առանց վարձատրություն ստանալու, հիասթափված ու հուսախաբ, որպես կանոն, խեղված հոգեվիճակով վերադառնում է Հայաստան»[55]:

Արտագաղթողներին որոշակի առումով կարելի է դիտարկել որպես անցումային շրջանի փախուստի դիմած զոհեր, քանզի եթե նույնիսկ նրանց մոտ առկա է գիտակցական մեծ հիասթափություն հայրենիքից, որոշ ժամանակ անց անպայման նրանց սկսում է տանջել կարոտախտը: Նույնիսկ այսպիսի վիճակում գտնվող, բայց հարազատ միջավայրից կտրվելը, կապերի խզումը հանգեցնում են նոր միջավայրում «մշակութային շոկի», չնայած սկզբնական շրջանում մարդու մոտ միայն հիացական տրամադրություններ են նկատվում:

Մշակութային շոկ ապրող մարդն ավելի է հակված հանցագործ կամ օրինազանց քայլերի, քան սոցիո-մշակութային հարազատ պայմաններում ապրողը: «Իր ինքնահաստատումը կորցրած, ամեն ինչ զրոյից սկսող, իրաղրության վրա որևէ վերահսկողություն չունեցող մարդը, որն իրեն մի տեսակ հողից կտրված ու օդի մեջ կախված է զգում, կարող է ագրեսիվության ու կատաղության նոպաներ ունենալ, իսկ դրա հիմնական թիրախ կարող են դառնալ իրեն հակադիր վիճակում գտնվող տեղարբնակները, կամ այն մարդիկ, ովքեր պատճառ են դարձել իր երկիրն ու միջավայրը լքելուն»[56]:

Հայաստանից արտագաղթած և արտագաղթող ընտանիքները հիմնականում երկիրը բաղնելու որոշում կայացրել են անելանելի վիճակի պատճառով: Իսկ այս փաստը հաճախ արտերկրում ախտաբանականի հասնող դժվարությունների է հանգեցնում:

Շատ հաճախ խոսվում է այն մասին, որ այնպիսի ազգակործան երևույթների, ինչպիսիք են արտագաղթը, այլասերումը, դաժանությունը, հանցագործությունների մեծ թիվ կազմելն ամենևին էլ տնտեսական պատճառներով չի պայմանավորված: «Մենք չենք կիսում այն մենկնարանների կարծիքը, որ հայ-

[55] Նույն տեղում, էջ 22:
[56] Նալչաջյան Կ.Ա. Արտագաղթ և մշակութային շոկ. Հոգեբանությունը և կյանքը, Երևան, 2000թ., N 3, էջ 16:

բնի հողն ու օջախը լքում են կենցաղային, տնտեսական պատճառներով: Դրա հիմնական պատճառը հոգեբանական է, անվստահությունն է պետության նկատմամբ, արհամարհված ու ոտնահարված իրավունքներն են, անպաշտպանվածությունը»[57]:

Հույս չներշնչող ժողովրդագրական ցուցիչները միայն արտագաղթով չէ, որ պայմանավորված են: Այնուամենայնիվ, ըստ Հայաստանի Հանրապետության տարեկան վիճակագրական հաշվետվությունների, 1997-2000 թվականների ընթացքում բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով 5.3-ից 2.7-ի է հասել[58]: Ցածր կենսամակարդակը, երկրում անկայուն վիճակներն ու ապագայի հանդեպ անվստահությունը բնակչության ծննդելիության ցածր մակարդակին են հանգեցրել: Բնական աճի կտրուկ անկման պատճառ են նաև մահացության բարձր տեմպերը:

Եթե փորձենք կարճ բնորոշել անցումային հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացները, կարելի է կարճ նշել այդ գործընթացների այնպիսի գծեր, ինչպիսիք են գործնականում գրեթե բոլոր սոցիալական խմբերի բացարձակ մարգինալացումը, սոցիալական սահմանների ոչ հստակ, հեղհեղուկ բնույթը, համակարգի ներքին միասնականության բացակայությունը, համընդհանուր չահերի ոչ միօրինակ ընկալումը, նոր ձևավորվող դասակարգերի ու սոցիալական խմբերի մասնատվածությունն ու դրանց միջև սահմանների աղճատվածությունը, այդ դասակարգերի ու սոցիալական խմբերի ձևավորման գործընթացի բրեականացած բնույթը, հասարակության մեջ մեծ թափով աճող ունեցվածքի բևեռայնացումը, որը ոչ այդքան շուկայական հարաբերությունների մուտքի արդյունքն է, այլ ավելի շուտ պայմանավորված է դասակարգերի ձևավորման մեխանիզմների քրեական բնույթով, ունեցվածքի, ապրուստի միջոցների կտրուկ տարբերությունների հարուցած հզոր չափերի հասնող հասարակական ֆրուստրացիան, որպես պոտենցիալ միջին դաս հանդես եկող քաղաքական լայն զանգվածները, հասարակական-քաղաքական սուր պայքարի առկայությունը:

[57] Արզումանյան Ս.Ջ. Քաղաքականությունը և անձի բրեականացման սոց.-հոգեբանական օրինաչափությունները, Հոգեբանությունը և կյանքը, Երևան, 2000թ., N 3, էջ 22:
[58] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2001թ.

1.3. ԱՆՈՄԻԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասարակական-քաղաքական ակնհայտ փոփոխություններից, որ բնորոշում են անցումային հասարակությունը, կարելի է առանձնացնել անոմիայի երևույթը, որի ժամանակ հասարակական կյանքի այս կամ այն ոլորտները, հասարակական հարաբերությունների ու մարդկանց վարքի ձևերը նշանակալի չափով դադարում են ենթարկվել հասարակության նորմատիվ կարգավորմանը. անհրաժեշտ իմպերատիվները վերացած կամ թուլացած են լինում, իսկ քաղաքացիների մեծ մասը համարում է, որ կարելի է չենթարկվել դեռ կայուն նորմերին: Արդյունքում առաջանում է մի տեսակ նորմատիվ վակուում, որը տարածվում է ոչ միայն իրավական ու բարոյական, այլ նաև հասարակական կյանքը, անհատական ու զանգվածային գիտակցությունը կարգավորող բոլոր ոլորտների վրա: Սոցիալական խմբերի ներսում հարաբերությունների ներդաշնակացման գործընթացի, այսինքն, այսպես կոչված սոցիալական ինտեգրացիայի մասին խոսք անգամ լինել չի կարող այս շրջանում: Ընդհակառակը, դեզինտեգրացիա կա, որ հանգեցնում է սոցիալական բախումների ու անհավասարության: Հասարակության վերափոխումը հանգեցնում է միջանձնային, միջխմբային ու ներխմբային հարաբերությունների փոփոխության: Գլոբալ հասարակական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անոմիան անխուսափելի է հասարակական վերակառուցումների, ճգնաժամային փոփոխությունների, ընդհանրապես փլուզվող հասարակական տարածության դեպքում:

Անոմիան իր նշանակության ու ունեցած դերի առումով տարբեր կերպ է գնահատվում մասնագետների կողմից: Անտիկ փիլիսոփաներից դեռ Պլատոնն է խոսում անոմիայի, որպես անօրինության, անարդարության, անհավատության ու անկարգության մասին, մինչդեռ Ժ. - Մ. Գյուռո, որ գիտական շրջանառության մեջ է մտցրել տերմինը, անոմիան համարում էր դրական երևույթ, դաժան, համակողմանի բնույթ կրող դոգմատիկ կանոնների իշխանությունից անհատի ազատագրման գործընթաց: Հետագայում գրեթե բոլոր մասնագետները շեշտել են երևույթի բացասական կողմերը՝ իրավական ու արժեքային կայուն ուղղորդիչների բացակայությունը, աշխատանքի ոչ նորմալ բաժանումը, որ խոչընդոտում է համերաշխությունը և նպաստում ինքնասպանությունների աճին, անհատի հոգեբանական չհարմարված վիճակը, որ երբեմն արտահայտվում է ագրեսիայով, հասարակական կապվածությունների թուլացումը, հասարակու-

թյունում մարդկանց նպատակների ու հետաքրքրությունների և դրանց իրականացման ուղիների միջև իրական բախման առկայությունը և այլն: Իրականում այս բոլորը հասարակական անոմիայի արտահայտչաձևեր են, որ հանգեցնում են հասարակական կարգի խոշոր չափերի հասնող ծնախախտումների:

Ռ. Մերտոնը, հետազոտելով անոմիայի երևույթը, փորձել է դասակարգել շեղվող վարքի ծևերը՝ հիմք ընդունելով անձի սոցիալական հարմարման առանձնահատկությունները հասարակության կողմից ընդունված նորմերին և արժեքներին: Նա առանձնացնում է հարմարման հինգ մոդել:

1. Կոնֆորմիստական հարմարումը բնորոշ է կայուն հասարակություններին: Անձը ընդունում է հասարակության առաջադրած նպատակները և դրանց հասնելու ուղիները:

2. Ինովացիոն հարմարումը առկա է այն ժամանակ, երբ հասարակության մեջ բարձր է գնահատվում հաջողությունը որպես նպատակ: Այս դեպքում անձը ընդունում է հասարակության նպատակները, սակայն փորձում է դրանց հասնել անընդունելի ճանապարհներով:

3. Ծիսական հարմարումն առկա է այն հասարակության մեջ, որտեղ բարձր են գնահատվում նվաճումները: Անձը չի ընդունում հասարակության արժեվորած նպատակները, ասենք, «անընդհատ բարձրանալ հասարակական հիերարխիայով դեպի վեր», սակայն նպատակներին հասնելու ընդունված ուղիները անվերապահորեն հարգվում են:

4. Ռետրիտիստական հարմարումը ենթադրում է հրաժարում և հասարակության արժեվորած նպատակներից և դրանց հասնելու ընդունված ուղիներից: Այս մարդկանց համար հաջողությունը որպես արժեք ընդհանրապես ժխտվում է: Այսպիսի հարմարման դեպքում մարդն ուղղակի փախչում է իրականությունից, ասենք, թմրամոլության, հոգեկան հիվանդությունների միջոցով: Նա ստեղծում է իր աշխարհը և այդ աշխարհում բավարարում իր պահանջմունքները:

5. Ըմբոստացումը - այս հարմարումը ենթադրում է օտարում, հրաժարում ընդունված ստանդարտներից և նպատակներից: Վերջիններս համարվում են անհիմն, տեղի է ունենում արժեքների վերահիմաստավորում[39]:

[39] Мертон Р. Социальная структура и аномия // Хрестоматия. Социология: классические и современные парадигмы. Авторы - составители С.А. Кравченко, М.О. Мнацаканян. М., 2002.

Ցանկացած հասարակության մեջ հարմարման այս բոլոր եղանակներին կարելի է հանդիպել: Դրանք թերևս կարող են դիտվել որպես անձի կայուն բնութագրեր՝ պայմանավորված ժառանգական և դաստիարակչական գործոններով: Սակայն կարելի է ևան ենթադրել, որ հասարակության զարգացման տարբեր էտապներում գերակշռում են հարմարման այս կամ այն ստրատեգիաները, այսինքն հասարակության զարգացման իրավիճակը որպես արտաքին ներգործություն նպաստում է անձի կողմից այս կամ այն հարմարման եղանակի ընտրությանը: Այժմ փորձենք Ռ. Մերտոնի այս մոդելի տեսանկյունից վերլուծել վերջին տասնամյակների ընթացքում մեր հասարակության զարգացման տարբեր փուլերում մարդկանց հարմարման բնորոշ, առավել տիպական ձևերը: Նախ, խորհրդային պետության գոյատևման վերջին շրջանում հարմարումն այսպես կոչված ըմբոստացման եղանակով էր ընթանում: Խորհրդային գաղափարախոսությունը, արժեքները և նպատակները գրեթե լրիվ սպառել էին իրենց: Ոչ ոք այլևս չէր հավատում կոմունիստական դրախտի կայացմանը, մյուս կողմից, սրված սոցիալ-տնտեսական իրավիճակը մարդկանց ստիպում էր վերանայել հասարակության կազմակերպման խորհրդային տարբերակի սկզբունքները: Այլևս անհնար էին հարմարման այնպիսի տարբերակներ, ինչպիսիք էին, ասենք, կոնֆորմիզմը կամ փախուստն իրականությունից, մնում էր միայն ըմբոստացումը, ինչն էլ սկիզբ առավ հենց իշխանություններից՝ գործարարների վարչակարգից և ընդգրկեց գրեթե ողջ հասարակությունը: Այս գործընթացն ավարտվեց բավչյա հեղափոխությամբ: Հասարակության զարգացման հետխորհրդային շրջանում, բնականաբար, նպաստավոր էր ըստ մեզ այսպես կոչված կոնֆորմիստական հարմարման համար. ժողովուրդը հասել էր իր նպատակներին, դրանց հասնելու ուղիները հիմնականում ընդունելի էին մեծամասնության համար: Օրինակ, մարդկանց հարմարումը կոնֆորմիստական կարելի էր համարել ևան հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՁԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2.1. ԱՆՁ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ըստ Ա. Անգյալի անհատը և միջավայրը մի ամբողջություն են կազմում, որոնց բաժանող հատվածը խիստ հարաբերական է, գոյություն ունի անհատ-միջավայր ամբողջական համակարգ և ոչ թե երկու առանձին համակարգեր[60]: Անձի որպես սոցիալիզացված էակի, որպես հասարակության բջջի համար նախ և առաջ հասարակությունն է հանդիսանում այն միջավայրը, որի հետ նա մեկ ամբողջություն է կազմում: Անձ-հասարակություն համակարգը, ըստ Ն. Սարջվելաձեի, ունի իր կառուցվածքային և դինամիկ կողմերը[61]: Որպես կառուցվածքային տարրեր հեղինակը համարում է՝

- անձի սոցիալական դիրքը՝ ստատուսը,
- սոցիալական դիրքորոշումները,
- ինքնավերաբերմունքը:

Վերջին հասկացությամբ հեղինակը նկատի ունի այն, որ անձն իրեն իր համար հանդես է գալիս և որպես սուբյեկտ և որպես օբյեկտ, որի հետ մտնում է որոշակի հարաբերությունների մեջ ու ձևավորում վերաբերմունք: Անձ-հասարակություն համակարգի դինամիկ կողմը հեղինակը բնութագրում է երեք չափանիշով՝

ա/ անձ-հասարակություն համակարգի փոխազդեցության մոդալականությամբ, որն ըստ հեղինակի կարող է ունենալ հարմարողական կամ փոխակերպող բնույթ,

բ/ մոտիվացիայի առանձնահատկություններով, որոնք, ըստ հեղինակի, բնութագրվում են «լինելու» և «ունենալու» հիմնական միտումներով,

գ/ ըստ հարաբերությունների բնույթի հեղինակն առանձնացնում է էնտրոպիկ և նեգէնտրոպիկ միտումները: Առաջինի դեպքում աճում է համակարգի անկայունությունը, անկազմակերպվածությունը, փոփոխականությունը, իսկ նեգէնտրոպիան արտացոլում է համակարգի կայունության, կարգավորվածության, կազմակերպվածության ձգտումը[62]: Այս երկու միտումները անձ-հասարակություն համակարգում կարող են լինել սիներգիկ, համահունչ և կոնֆլիկտային: Ըստ այդմ հեղինակն առանձնացնում է երկու բազային միտումների՝ էնտրոպիայի և նեգէնտրոպիայի վրա հնարավոր հարաբերակցություն.

1. Նեգէնտրոպիկ են և հասարակության և անձի գործառման միտումները: Այս դեպքում կայուն հասարակության մեջ իր կենսագործունեությունն է ծավալում կայուն անձը:

2. Նեգէնտրոպիկ սոցիալական միջավայրում գործառում է էնտրոպիկ միտումներ ունեցող անձը: Այլ կերպ ասած, անձը չի համակերպվում ընդունված կայուն սոցիալական կարգին:

3. Հասարակության էնտրոպիկ միտումներին հակադրվում է նեգէնտրոպիայի ձգտող անձը: Անձը ձգտում է հասարակության մեջ կարգ ու կանոնի:

4. Հասարակությունը և անձը էնտրոպիկ միտումներ են դրսևորում:

5. Հասարակության մեջ միաժամանակ գործառում ու բախվում են էնտրոպիկ և նեգէնտրոպիկ միտումները: Սա ըստ էության պահպանողական և փոփոխությունների ձգտող ուժերի բախումն է:

6. Անձի մեջ միաժամանակ գործառում ու բախվում են էնտրոպիկ և նեգէնտրոպիկ միտումները: Այս իրավիճակը բնութագրում է անձի ներհոգեկան բախումը[63]:

Հենց այս երկու միտումների դիալեկտիկան էլ որոշում է մի կողմից անձի, մյուս կողմից հասարակության զարգացումը: Եթե փորձենք վերոնշյալ մոդելը կիրառել մեր հասարակության զարգացման գործընթացի վրա, ապա կարելի է ասել, որ այսպես կոչված լճացման տարիները 60-80-ականների կեսերը, առաջին կետին էին համապատասխանում, այսինքն ամբողջ հասարակությունը և այն կազմող անձանց մեծամասնությունը հարաբերական կայունության վիճակում էին, ինչը միևնույն ժամանակ նշանակում էր, որ սպասվում է այդ հավասարակշռության վիճակի խախտում:

80-ականների վերջերին նեգէնտրոպիկ սոցիալական միջավայրում ավելի ու ավելի էին ակտիվանում հասարակության անդամների, այդ թվում նաև

[60] Angyal A. The Holistic Theory of Personality – In: Psychology of Personality: readings in the theory (Ed. by W. S. Sahakian). – Chicago, Illinois: Rand McNall, 1965, pp. 319-341.
[61] Сарджвеладзе Н.И. Личность и ее взаимодействие с социальной средой. Тбилиси, 1989.

[62] Նույն տեղում:
[63] Նույն տեղում:

իշխանության ներկայացուցիչների էնտրոպիկ միտումները:

90-ականների սկզբում և՛ հասարակությունը, և՛ նրա անդամների մեծամասնությունը էնտրոպիկ միտումներ են դրսևորում:

90-ականների կեսերից, կարելի է ասել, որ հասարակության էնտրոպիկ միտումներին հակադրվում է մարդկանց նեգէնտրոպիայի ձգտումը, իսկ վերջին տարիներին, ըստ մեզ, ի հայտ են գալիս էնտրոպիկ և նեգէնտրոպիկ միտումների միաժամանակ գործառումն ու բախումը:

Այս մոդելից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ մոտակա տարիներին նորից սպասվում է երկկողմանի նեգէնտրոպիայի գերակայությունը:

2.2 ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Եթե հնարավոր լիներ կինոժապավենի պես ետ պտտել XX դ. վերջին տասնամյակի իրադարձությունների գոնե շղթան, ապա, հավանաբար, ապշեցուցիչ պարզությամբ մենք կարող էինք զգալ հասարակական ոգորումների, հոգևոր կորուստների, անկումների և ոգևորիչ հաղթանակների ողջ դրամատիզմը:

Հայ ժողովրդի հոգևոր պատմության տվյալ ժամանակահատվածի սոցիոլոգիական ընկալումը հարազատ է նրա ֆենոմենոլոգիական ըմբռնմանը: Այն, ավելի շուտ, վերլուծության է տրվում «հասկացող սոցիոլոգիայի» մեթոդաբանական հենահարթակից: Թեև դա էլ այստեղ լոկ ինչ-որ մի պալհատիվ կիսամիջոց է, բանզի ժամանակն ու միտքը դեռևս չեն կազմել, այդպի դարաշրջանի լեզվով ասած, այն ծրագրային ապահովագրումը, որի օգնությամբ կարելի կլիներ միանգամայն համարժեքորեն «ընթերցել» այդ նյութը:

Արդիականության գլոբալ մարտահրավերներին ու հայ հասարակության միանգամայն եզակի տրանսֆորմացիոն մոդելը պահանջում են նույնքան եզակի «տեխտ» տեխնոլոգիաներ՝ իրենց սոցիոլոգիական վերլուծության համար: Միայն նոր, ինքնատիպ մեթոդաբանական մոտեցումները կարող են ապահովել դեռևս ընթացող տրանսֆորմացիայի գոհացուցիչ գիտական նկարագրությունն ու բացատրությունը: Իրադարձությունների ընկալման դժվարությունը կայանում է նաև նրանում, որ դրանք դեռևս ավարտված չեն: Պատմական սոցիոլոգիայի բոլոր կանոնների համաձայն՝ հարկ էր սպասել տրանսֆորմացիոն գործընթացի ավարտին և այնուհետև միայն, որոշակի ժամանակ անց, փորձել իմաստավորել և տալ դրա գիտական բացատրությունը: Սակայն, այն գայթակղությունը, որ հսկայական կարևորության գործընթացը տեղի է ունենում մեր աչքի առջև, ստիպում է դիմել գիտական վերլուծության, որպեսզի բաց չթողնվի ինչ-որ մի շատ էական՝ միայն ժամանակակցի

բննախույզ հայացքին տեսանելի բան: Գուցե հետագայում սոցիոլոգները կարողանան մեծ օգուտ կորզել իրադարձությունների էպիկենտրոնից անմիջապես «թարմ հետքերով» արված վերլուծությունից:

Մյուս կողմից, սոցիոլոգիական բացատրությունը սուկ սովորական մտավոր անդրադարձի չէ պատմական սոցիալական իրադարձությանը, որ գոյություն ունի ինքնին, անկախ սոցիոլոգիական դիտարկումից: Սոցիոլոգիական բացատրությունն ասես թե նաև մասնակցում է այդ իրադարձության կազմավորմանը: «Սոցիոլոգիական բացատրությունը չի որոշվում միայն սոցիոլոգի ճանաչողական գործողությունների համախմբով. սոցիոլոգիական բացատրության գործունակության այսօրմանը սոցիոլոգի և սոցիալական իրականության գոյաբանական համագործակցությունն է», հետազոտողի այրակտիկ ներառվածությունը, սոցիալական աշխարհի «շրջակայքում» հայտնաբերվող և սոցիալական աշխարհի «ներսում» ամփոփված նրա «բացվածությունը», որ բացահայտում է գործնական ծնունդկումների բնույթը»[54]:

Իսկապես, սոցիոլոգիական բացատրությունն, ի տարբերություն մաթեմատիկական, ֆիզիկականի և նույնիսկ պատմականի, կանխադրում է սոցիոլոգի գործնական և շահագրգիռ մասնակցությունը՝ սոցիալական երևույթի վերապրմանը: «Բացատրել՝ նշանակում է ավելիճ՝ որոշել սնվական դիրքը սոցիալական աշխարհում, քանզի սոցիոլոգիական բացատրությունը այս աշխարհի պահն է»[55]:

Քաջ հայտնի է, որ սոցիալական ոլորտը առավելապես իներցիայի ուժով ընթացող ոլորտ է, ինչն առանձնապես ակնառու է մեծ փոփոխությունների դարաշրջաններում: Տնտեսական հարաբերությունների բարեփոխումը, քաղաքական համակարգի և պետական կարգի խորքային արդիականացումը կարող են կատարվել բավականին արագ: Սակայն հասարակությունը, հասարակական գիտակցությունը, չի հասցնում փոփոխությունների արագ տեմպերի հետևից: Այն օժտված է որոշակի իներցիայով, որի վրա չի տարածվում հրամանագրերի, օրենքների և նոր կարգերի իշխանությունն: Հասարակությանը որոշակի ժամանակամիջոց է հարկավոր՝ նոր պայմաններին հարմարվելու համար:

Ռուսաստանցի սոցիոլոգները նույնպես նշում են, որ «չնայած վերջին տարիներին տեղի ունեցող սոցիալ-տնտեսական կարգի փոփոխության հեղափոխականպայթուցիկ բնույթին, գիտակցության ընդհանուր կեցվքը որոշող սոցիոմշակութային ստերեոտիպերը փոխվում են առայժմ բավականաչափ սահուն, էվոլյուցիոն

[54] Качанов Ю. Л. Что такое социологическая теория? — "Социологические исследования", М., N 12, 2002, с. 17.

[55] Նույն տեղում, էջ 18:

կերպով»[66]: Եվ սա ամենաօձոր և դրա հետ մեկտեղ ամենահետաքրքիր ժամանակաշրջանն է հասարակության կյանքում՝ առվորական դարձած հնից հրաժարվելու և նորը, անհայտը ընդունելու ժամանակը: Նախ և առաջ դա արժեքների արմատական փոփոխման ժամանակաշրջանն է:

Տնտեսական և քաղաքական բարեփոխումների խորությունը, ընդգրկումները ու տեմպերը երբեմն իրենցից բավական ետ են թողնում սոցիալական վերափոխումները: Հասարակությունը «ետ է մնում» արդիականացման ցատկից, և սա նոր հիմնախնդիրներ է ստեղծում տրանսֆորմացվող հասարակական գիտակցության մեջ: Նախկին արժեքներից հրաժարումն իրենից բավական երկարատև ու ցավոտ գործընթաց է: Երբեմն դրա վրա գնում է մի ողջ սերնդի կյանքը:

Ինչպես իրավացիորեն նշում են ռուսաստանյան սոցիոլոգները, «անցումային շրջանը՝ հասարակության առանձնահատուկ «ժամանակային» վիճակ է: Իր խստությամբ, նույնիսկ դաժանությամբ, ոչ փոքր տևականությամբ ու անկայունությամբ, այն դնում է նոր հասարակության հիմքերը և մասամբ էլ՝ ձևավորում երկարաժամկետ, ռազմավարական կենսական դրույթներ և արժեքային կողմնորոշումներ: Եթե ճգնաժամային հասարակությունում մարդը հայտնվել է հուսահատ կենսական իրավիճակում և նրան ոչ ոք օգնության չի եկել, չի աջակցել, այլ փրկել են լոկ փողերն ու ուժը, ապա հասարակության ճգնաժամից դուրս գալը ավելի շուտ նրան չի վերադարձնի ո՛չ մարդկանց հանդեպ վստահությունը, ո՛չ էլ փողերի և ուժի նկատմամբ հանգիստ վերաբերմունքը: Նրան, ով զգացել է հեշտ, ու առավել ևս «կատաղի» փողերի համը, աշխատանքային ռուբլին կամ դրամը միշտ էլ դառը կթվա: Շատ բան, որ «անցումային» ապրումների հաղվով լցվել է մարդկանց հոգիների մեջ, այդպես էլ կմնա այնտեղ»[67]:

Հասարակության իներցիան, նրա պահպանողականությունը՝ արագ փոփոխությունների շրջանում, ըստ ամենայնի, արտացոլում են ինքնապահպանման ինչ-որ խորքային՝ ցեղատեսակային մեխանիզմի գործողությունը: Սինչդեռ լավ հայտնի է, որ զուտ տնտեսական և քաղաքական ձևափոխությունները բավարար չեն՝ հասարակության խորքային արդիականացման համար: Արդիականացման տեսաբանները, մասնավորապես՝ Ի. Գդոռովիտցը, որոշիչ դեր են հատկացնում մշակութային նախադրյալներին. բնակչության, սոցիալական խմբերի մեջ՝ «պարգևող հասարակության լիդերների, «վերելքի գործոնների», «բարեփոխման ազդակների» առկայությանը (մեջք. ըստ)[68]:

Դեռ արդիականացման տեսության զարգացման սկզբում դրա ստեղծողները կարևոր դեր էին վերապահում այնպիսի գործոնների, ինչպիսիք են խմբային տրամադրությունները, քաղաքական հայացքները, մշակութային և կենսական արժեքներն ու նորմերը: Այս արժեքների դինամիկան նշանակում է միաժամանակ ինքնին մարդու փոփոխություն, «անձի արդիականացում»[69]: Այն բանից, թե որչափ արագ է հասարակությունը պատրաստ և ունակ ընդունելու կյանքի անհատական կազմակերպման նոր արժեքներն ու մոդելները, կախված է արդիականացման ընթացքն ու հաջողությունը ընդհանրապես:

Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ արդիականացումը համակարգային գործընթաց է, և արդիականացման օղակներից մեկնումեկի խափանումը կարող է հանգեցնել ծախողման, ամբողջությամբ վերցրած: Շատ կարևոր դեր է այս գործընթացում վերապահված մարդկային որակներին[70] և սոցիալական արժեքներին: Միանգամայն ակնհայտ է, որ պետությունը չի կարող որևիցե նորացում ծեռնարկել՝ առանց հասարակության ակտիվ մասնակցության: Հակառակ դեպքում՝ նախաձեռնողական բալերը դատապարտված են ձախողման:

Որքանո՞վ էր մեր հասարակությունը պատրաստ արդիականացման հետ կապված այն վերափոխումներին, որոնք սկսեցին իրականացվել 90-ական թվականների սկզբներին: Որքանո՞վ էին մարդիկ ընդունակ և նախապատրաստված՝ անցնելու սոցիալական կյանքի կազմակերպման կոնկետիվիստիկական խորհրդային մոդելներից՝ անհատականացված մոդելներին: Ի՞նչ չափով է փոխվել հասարակ մարդկանց և սոցիալական խմբերի կենսական ռազմավարությունը՝ կապված տնտեսական կարգի արմատական տրանսֆորմացիայի հետ: Չէ՞ որ ըստ էության տեղի է ունեցել նախկին աշխարհընկալումների և իրենց կյանքի, հասարակության և գաղիքի հանդեպ մարդկանց վերաբերմունքի լուրջ բեկում:

Հետևից ընթացող կամ «հետևից վազող արդիականացման» վիճակում գտնվող հասարակությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նոր արժեքների կայացումը բավականին բարդ և հակասական գործընթաց է:

[66] О доминантах массового сознания. — В кн.:Россия на рубеже веков. М., РОССПЭН, 2000, с. 243.
[67] Динамика ценностей населения реформируемой России. М., Эдиториал УРСС, 1996, с.42.

[68] Кравченко И.И. Модернизация мира и сегодняшней России. Выход из кризиса. — "Вопросы философии", М., N 9, 2002, с. 11.
[69] Кравченко И.И. Модернизация мира и сегодняшней России. Выход из кризиса. — "Вопросы философии", М., N 9, 2002, с. 11.
[70] Аурелио Печчеи. Человеческие качества. М., Прогресс, 1985.

«Ի մասնավորի՝ այն պատճառով, որ դա կատարվում է ո՛չ «դատարկ տեղում» և ո՛չ նորմատիվային-արժեքային «փլուզվող համակարգի ավերակների» վրա, թեև այդպիսի հասարակություններում սովորաբար դիտվում է շեղվող վարքի աճ»[71]: Այդ փուլերում վրա է հասնում մի պահ, երբ մարդու համարյա թե ողջ նախկին կենսափորձը անօգուտ, անպետք աղր է դուրս գալիս: Հասարակական կյանքի պայմանների փոփոխություններն այնքան խորն են, որ նախկինում կուտակված փորձն ի զորու չէ համարժեքորեն ճնավորելու նոր կենսական իրողություններ: Խորհրդային շրջանի կոլեկտիվիստական արժեքները համարժեք չեն հասարակական կյանքի փոփոխված նոր պայմաններին: Անցյալ դարի 90-ականների բարեփոխումների ամենասկզբից Նեթ հայ հասարակական գիտակցությունը ոչ միանշանակորեն էր վերաբերում ժողովրդավարության, ազգային անկախության, շուկայական հարաբերությունների գաղափարներին: Վերջին տասնամյակների ընթացքում հեղինակիս ղեկավարությամբ անցկացված մի ամբողջ շարք սոցիոլոգիական հետազոտություններ թույլ են տալիս հետևել հասարակական տրամադրությունների և սոցիալական արժեքների դինամիկային:

Հասարակական գիտակցության մեջ առավել դժվար էր իրեն ճանապարհ հարթում պետական անկախության գաղափարը: Խորհրդային Միության կազմում յոթանասունամյա գոյությունից հետո հայ հասարակությունը մեծ գգուշավորությամբ էր վերաբերվում կոմունիստական կայսրության կազմից դուրս գալուն և անկախ ազգային պետության կառուցմանը: Եվ դա տեղի էր ունենում բնակչության, թերևս, բոլոր շերտերին համակած՝ Լեռնային Ղարաբաղի անկախությանն ու Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմից նրա դուրս գալուն աջակցող ղարաբաղյան շարժման ֆոնի վրա:

Այն ժամանակ, հեռավոր 1988 թ., մարդիկ այն հույսն էին փայփայում, որ կոմունիստական ղեկավարությունը Կրեմլում արդարացի որշում կկայացնի և կճանաչի Ղարաբաղի անկախությունը: Բայց ըչերն էին պատրաստ նրան, որ Հայաստանն ինքը դուրս գա ԽՍՀՄ-ի կազմից: Հասարակական կարծիքի հարցումները վկայում էին, որ բնակչության ճշանակալի մասի, առաձնապես երկրաշարժի գոտու բնակիչների մոտ լուրջ երկյուղներ և կասկածներ կային հայկական պետական անկախության վերականգնման հնարավորության վերաբերյալ:

Անկախության հակառակորդների ամենագլխավոր փաստարկը սահմանների պաշտպանության հիմնախնդիրն էր՝ Թուրքիայի և Աղրբեջանի կողմից հնարավոր ագրեսիայից: Առանց խորհրդային բանակի զորամիավորումների աջակցության հանրապետությունը բոլորովին անպաշտպան էր թվում ընդդեմ պատմական հակառակորդի՝ լավ զինված Թուրքիայի: Ռազմական սպառնալիքի վտանգը շատերին այն ժամանակ կասկած էր ներշնչում անդրկովկասյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական պայմաններում անկախ հայկական պետականություն կառուցելու հնարավորության վերաբերյալ:

Հասարակական տրամադրությունների ալեքտում նաև այն կարծիքն էր արտահայտվում, որ Հայաստանի տնտեսությունը, հայտնվելով դեմ առ դեմ համաշխարհային տնտեսության, չի կարողանա դիմանալ մրցակցությանն ու երկիրը կքերի անկման: Հատկապես, համամասն երկյուղներ հաճախ արտահայտում էին երկրաշարժի գոտու բնակիչները: Նրանք համոզված էին, որ եթե Հայաստանը դուրս գա Խորհրդային Միության կազմից, ապա երկրաշարժից ավերված իրենց քաղաքներն ու գյուղերը վերականգնող չի լինի: Իրենք կզրկվեն Ռուսաստանից և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից ստացվող հսկայական ֆինանսական, տեխնիկական և կադրային օգնությունից:

Շատ բանում երկրաշարժի գոտու բնակիչների նախազգացումները պայծառատեսական դուրս եկան: Իրոք, ԽՍՀՄ-ի փլուզումից գրեթե ամիջապես հետո օգնությունը կտրուկ կրճատվեց, համարյա ամբողջովին դադարեցվեցին շինարարական աշխատանքները, և ավերածությունների վերականգնումը երկրաշարժի գոտում երկարաձգվեց տասնամյակներով: Շուտով երկրի ողջ տնտեսությունը հայտնվեց խորը անկման մեջ: Այսպիսով, բնակչության երկյուղները մասամբ արդարացան, մասամբ՝ ոչ:

Մի քանի տարի անց հասարակական գիտակցությունը որոշ չափով հանգստացավ հարևանների կողմից ռազմական ագրեսիայի (տանձգության) հնարավորության առնչությամբ: Ի հավելումն դրա, դարաբաղյան պատերազմում տարած հաղթանակն ամրապնդեց ժողովրդի ոգին ու հավատ ներշնչեց սեփական ուժերի հանդեպ: 1915 թ. եղեռնից հետո ազգային գիտակցության մեջ երկար ժամանակ ամրակայված զոհի բարդույթը սկսեց հետզհետե հաղթահարվել: Տեղի ունեցավ շատ լուրջ էվոլյուցիա՝ մարդկանց հայացքներում, կարծիքներում և հարաբերություններում: Այսօր, չնայած իրոք ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին, ազգային հոգեկերտվածքում անկախ պետության գաղափարն ամրապնդվել է բավականաչափ հաստատուն կերպով: Համենայն դեպս, անպաշտպանության սուր զգացումը՝ ռազմական սպառնալիքի առջև, տեղը զիջել է ռազմավարական գործընկերության և Բելոռուսիա-Ռուսաստան միությունում կամ ՆԱՏՕ-ի կազմում Հայաստանի ընդգրկվելու նպատակահարմարության վերաբերյալ քննարկումներին:

[71] Динамика ценностей населения реформируемой России. М., Эдиториал УРСС, 1996, с. 44-45.

Նոր արժեքային պատկերացումների կայացումը հասարակությունում բավական բարդ գործընթաց է, որն ուղեկցվում է հին և նոր կողմնորոշումների հակասություններով ու առճակատումներով: Այդ իսկ պատճառով արժեքային որոշ ռելյատիվիզմը, նոր նորմատիվային համակարգի սահմանների անորոշությունը, նրա անբավարար իստակությունը դարձնում են մարդու վարքը «հոսացիոնալ», անկանխատեսելի[72]: Հակասական, տարիմաստ է դառնում անձի նոր արժեքային համակարգը, նրա կողմնորոշումները, հայացքները, նախապատվություններն ու, նույնիսկ, վարքը: Արժեքների հին համակարգը քայքայվում է, իսկ ազդարարվածը, նորը տակավին կիրարկված չէ, քանի որ հակասության մեջ է մտել իրականության հետ:

Հայտնի ռուս սոցիոլոգ Ժ.Տ. Տոշչենկոյի պնդմամբ, անոմիայի վիճակը համակել էր բնակչության զգալի շերտերին: Բանն այն է, որ տեղի էր ունեցել սպասումների կոնֆլիկտ: «Մարդկանց գիտակցությունը արթնացել էր դրական փոփոխությունների սպասումներով՝ ծնված 1980-ականների երկրորդ կեսի վերակառուցմամբ, ապա այնուհետև՝ էլ ավելի գրգռվել 1990-ականների սկզբի իրադարձություններով, երբ շատերին թվում էր, թե ազատական արմատականների առաջարկած զարգացման նոր հարացույցը կրերի նրան, ինչին մարդիկ մշտապես ձգտել են և ինչը վերջին հաշվով չէր կարող տալ նրանց խորհրդային իշխանությունը:

Սակայն կենսական իրողություններն այլ դարձ եկան: Եվ մարդկանց հույսերը հերթական անգամ ի դերև ելան, ինչը ծնեց ոչ թե պարզապես ֆրուստրացիա՝ հասարակական գիտակցության անկազմակերպվածություն, այլ հատկապես անոմիա, այսինքն՝ լիակատար անտարբերություն ցանկացած հասարակական ազդակի հանդեպ՝ անկախ դրա ուղղվածությունից՝ դրական թե բացասական»[73]: Մարդիկ ինքնամեկուսանում են քաղաքական գործընթացներից, չեն գնում ընտրությունների, չեն մասնակցում շարժումներին, չեն աջակցում քաղաքական կուսակցություններին: Ուշագրավ է, որ սոցիալական անոմիայի կամ, ինչպես մենք ենք բնութագրել Հայաստանի 1993-1997 թթ. իրավիճակը՝ սոցիալ-քաղաքական օտարման գործընթացը ոչ այնքան կոմունիստական համակարգի և խորհրդային հասարակության արժեքների խորտակմամբ, որքան ազատական-դեմոկրատական բարեփոխումների ձեռքմամբ ունեցած սպասումների չիրագործման հետևանք էին: Հետխորհրդային հասարակության արժեքաբանական գիտակցության միանգամայն եզակի այս առանձնահատկությունը սովորաբար վրիպում է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունից:

Թվում էր, թե արժեքների կոնֆլիկտի կիզակետում պետք է հասարակական գիտակցության մեջ բախվեին կոմունիստական գաղափարախոսության արժեքները՝ իրենց փոխարինելու եկած ժողովրդավարական-ազատական գաղափարախոսության արժեքների հետ: Նման բախումը, ինչ խոսք, առկա է, սակայն այն հայտնվել է հասարակական գիտակցության «ծայրամասում»: Անցումային շրջանի երկու գաղափարախոսությունների արժեքային կոնֆլիկտը գրեթե ամբողջովին ստվերեց մյուսը՝ խաբված սպասումների կոնֆլիկտը:

90-ական թվականների կեսին անցկացված հասարակական կարծիքի հարցումները վկայում են այն մասին, որ հայ բնակչությունը մեծ ոգևորությամբ ընդունց գորբաչովյան բարեփոխումը: Հասարակական գիտակցությունը, համենայն դեպս՝ հասարակության առաջադեմ մասի՝ գիտական, տեխնիկական և գեղարվեստական մտավորականության, բավականաչափ նախապատրաստված էր ժողովրդավարության արժեքների և ազատ շուկայական հարաբերությունների ընկալմանը:

Բնակչության մի մասն արդեն վաղուց մտովի դատապարտում էր թե՛ կոմունիստական հավասարարությունը, թե՛ միակուսակցական համակարգի կեղծ-կոմունիստական քարոյական արժեքները: Մյուս կողմից, եվրոպական ժողովրդավարությունը բավական հրապուրիչ էր թվում: Այլ կերպ ասած, խորհրդային բնակչության գիտակցության մեջ արդեն աննկատելիորեն կատարվել էր արժեքների որոշակի վերարժեքավորում, ինչի շնորհիվ նրանք պատրաստակամորեն արձագանքեցին խորհրդային հասարակության արդիականացման կոչին:

Արդեն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ինչն ինքնին անսպասելի էր շատ շատերի, այդ թվում՝ արմատական բարեփոխումների միտված շերտերի համար, վրա հասավ նախկին խորհրդային հասարակության ինտենսիվ եվրոպականացման շրջանը: 90-ական թվականների ամենասկզբում սոցիոլոգիական հետազոտություններն արդեն վկայում էին, որ հասարակական գիտակցությունը տարաճյուղվել է երեք ճամբարի, որոնք պաշտպանում էին տարբեր արժեքային կողմնորոշումներ:

Առաջին ճամբարի արժեքաուցությունը հիմնվում էր արմատական նորացման, խորհրդային մարդու գիտակցության մեջ ժողովրդավարության և ազատականացման արժեքները ներմուծելու վրա: Երկրորդ՝ բավականաչափ բազմաքանակ (հնարավոր է՝ ամենաբազմաքանակ) ճամբարը պաշտպանում էր գորբաչովյան տեսակետը՝ խորհրդային համակարգի մասնակի բարեփոխման անհրաժեշտության և հնարավորության մասին: Եվ երրորդը՝ ավանդական պահպանողականների ճամբարը, որը կողմնակիցն էր այն դիրքորոշման, համաձայն որի, ցանկացած փոփո-

[72] Динамика ценностей населения реформируемой России. М., Эдиториал УРСС, 1996, с. 40.
[73] Тощенко Ж.Т. Парадоксальный человек. М., Гардарики, 2001, с. 373.

խություն, առաճճնապես կտրուկ փոփոխությունները, կարող են լոկ վճասել և կործանել սոցիալիզմի ճվաճումները:

Բոլոր երեք «արժեքաճնական» ճամբարները հասարակությունում ունեին բավականաչափ ամուր սոցիալական բազա: Եվ պետք է ասել, որ բոլոր երեք տեսակետներն էլ՝ ամեն մեկը յուրովի, ճիշտ էին:

Մեզ համար այստեղ կարևոր է նշել, որ հասարակության սոցիալ-բարոյական գիտակցությունն արդեն այն ժամանակ միաճուլ չէր, արդեն այդ տարիներին նշմարվեց բարոյահոգեբանական վիճակի պլուրալիզացման գործընթացը: Հետագայում արդեն արմատական-ազատականների ներգործությամբ հասարակությունում տիրապետող դարձավ խորը ժողովրդավարական արդիականացման ուղղությունը:

Սկզբնապես հայ հասարակությունը ոգևորությամբ ընդունեց դեմոկրատական նոր արժեքները: Խոսքի, մամուլի ազատությունը, դավանանքի ազատությունը, բազմակուսակցական համակարգն ու մասնավոր սեփականությունը շատերի կողմից ընկալվեցին որպես երկար սպասված փոփոխություններ: 1990-1992 թթ. սոցիոլոգիական հարցումներն արձանագրել են բնակչության 60 %-ի հավանությունը: Հասարակական գիտակցությունը հատկապես բարձր էր գնահատում վերստին ձեռք բերված քաղաքացիական ազատությունները: Ժողովրդավարության հասկացությունն ինքնին բնակչության ճնշող մեծամասնության մոտ կապվում է խոսքի, խղճի, տեղաշարժերի, քաղաքական միությունների և այլ ազատությունների հետ: Ժողովրդավարության մեջ, նախ և առաջ, գրավիչ էր հասարակական կյանքի ազատականացումը:

Սակայն շատ շուտով վրա հասավ հիասթափությունը ժողովրդավարական արժեքներից: Արդեն 1996-1998 թթ. սոցիոլոգիական հարցումները հայ հասարակական գիտակցության մեջ արձանագրեցին հայացքների և արժեքային պատկերացումների էվոլյուցիա: Մամուլի ազատությունը սկսեց ընկալվել որպես «անկումն» մասնավոր մամուլի ամենաթողություն ու անվերահսկելիություն: Ճանազան քաղաքական կուսակցությունների ճող թիվը (1998 թ. դրանք արդեն շուրջ 100-ն էին) բնակչության շրջանում առաջացրեց հեգնանքի ու հոռետեսության տրամադրություններ: Պատահական չէ, որ սոցիոլոգիական հարցումներն արձանագրում էին քաղաքական կուսակցությունների նկատմամբ հետաքրքրության աստիճանական անկում: 2002 թ. բնակչության սոսկ 4 %-ն է հայտնել, որ հանդիսանում է որևէ քաղաքական կուսակցության անդամ, իսկ բնակչության 60-65 %-ը ոչ մի կուսակցության նույնիսկ չէր համակրում:

Քաղաքական ազատությունները, մասնավորապես ազատ ժողովրդավարական

ընտրությունները, նույնպես դարձել են մարդկանց հիասթափության առարկա: Պատգամավորության թեկնածուների նախընտրական խոստումներն ու այնուհետև՝ նրանց վարքը խորհրդարանում, ընտրությունների բուն ընթացքն ու ծայնների հաշվարկի ժամանակ հայտնաբերված զանազան խախտումները անվստահություն են առաջացրել ընտրությունների բուն ժողովրդավարական ինստիտուտի նկատմամբ: Առաջ եկած հիասթափությունն անդրադարձավ քաղաքացիների ընտրական ակտիվության վրա:

Սկսած 1991 թ. քաղաքացիների մասնակցության տոկոսը տեղական մարմինների, հանրապետության խորհրդարանի և նախագահական ընտրություններին աստիճանաբար նվազում էր (73 %-ից 1991 թ., մինչև 38 %-ի 1996 թ.): Բնակչությունը սկսեց հոգեբանական անհարմարություն զգալ չարդարացված սպասելիքներից:

Արժեքային պատկերացումների էվոլյուցիան, հիասթափությունը ժողովրդավարական արժեքներից էլ ավելի խորացավ հասարակությունում «անարխիստական» միտումների աճով և տնտեսական բարեփոխումներով: Հասպաթակության անկախ ժողովրդավարական վերակառուցման առաջին իսկ տարիներին ի հայտ եկավ նոր իշխանության թուլությունը՝ քրեական խմբավորումների ուժեղացումը, պետական չինովնիկների և տեղական ինքնակառավարման անդամների անպատժելիությունը՝ հասարակ մարդկանց աճող անպաշտպանվածության ֆոնի վրա: Հասպաթակությունը սկսեց կտրուկ կերպով զգալ օրինականության բուլացումն ու սեփական անպաշտպանվածությունը: Ջուգահեռաբար տեղի էին ունենում պետական սեփականաշնության ապապետականացման և տնտեսության սեփականաշնորհման գործընթացներ, որոնք ուղեկցվում էին պետական ձեռնարկությունների գույքի թալանով: Միաժամանակ հսկայական թվով մարդիկ հայտնվեցին փողոցում: Ձեռնարկությունների և ֆիրմաների մասնավոր սեփականատերերի կամայականություններին աշխատավոր մարդիկ ոչինչ չունեին հակադրելու:

Արհմիությունները գրեթե ամբողջովին դադարեցրին իրենց գոյությունը և ոչ մի ազդեցություն չունեին հասարակությունում: 1996-1997 թթ. սոցիոլոգիական հարցումների տվյալներով, բնակչության մի զգալի մասը (70 %) դժգոհ է եղել երկրում ծավալվող տնտեսական և քաղաքական բարեփոխումների ընթացքից: Հուսախաբության և «պափոխության» վրա հասած շրջանը ծևավորեց կարտտախտի մթնոլորտ՝ կոմունիստական անցյալի հանդեպ, «ուժեղ ծեռքի» իշխանության նկատմամբ սոցիալական պահանջմունք:

Արդեն այդ տարիներին հայ հասարակական գիտակցությունում գերակայում էին երկրում ավտորիտար ղեկավարության գալուստին նպաստող միտումները: Արժեքային կողմնորոշումների այս լուրջ փոփոխությունը անդրադարձավ հասա-

րակության հոգեբանական և բարոյական մթնոլորտի վրա: Շատ նոր ժողովրդավարական արժեքներ իմաստազրկվեցին: Առաջացած արժեքային վակուումը հանգեցրեց հասարակական գիտակցության որոշակի բարոյազրկմանը: Ճիշտ է, ինչպես նշում են շատ վերլուծաբաններ, «առօրյա գիտակցությունը, սովորաբար, չափազանցնում է «քարքերի անկման» աստիճանը, ինչը քնական հոգեբանական հետևանքն է մարդկանց մոտ ծագող այն տագնապալի զգացողության, որ հասարակությունում անշրջելիորեն բուլանում է սոցիալական վերահսկողությունը, ուժեղանում է «ամեն ինչ թույլատրվում է» սկզբունքը»[74]: Այսպիսով, նոր արժեքներն առաջանում են խարխլված, քայքայված, բայց կենդանի և գործող նորմատիվային-արժեքային համակարգում:

Նրա կենսունակության հիմքը «հիմնարար արժեքների կայունությունն է՝ կապված կրոնի և խորը մշակութային ավանդույթների հետ...» (3, էջ 45): Գործնականում հեղինակի ղեկավարությամբ անցկացված բոլոր սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են բարոյական նորմերի որոշ անկման մասին՝ բոլոր սոցիալական խմբերում: Ռուս սոցիոլոգները նույնպես նշում են «դրական բարոյական որակների բուլացման միտումը...՝ հարզվողների գրեթե բոլոր խմբերի մոտ՝ անկախ նրանց տարիքից և նյութական դրությունից, ինչը վկայում է ռուսաստանցիների մոտ՝ միջանձնային փոխազդեցությունների ոլորտից այդ որակների աստիճանական դուրս մղման զգացողության մասին»[75]: «Բարոյականության մայրամուտի» սոցիալական ֆենոմենը քննարկման առարկա է ինչպես Արևմուտքում, այնպես էլ հետխորհրդային երկրներում:

Բարոյական պլյուրալիզմն ու բարոյական ստանդարտների բազմաքանակությունը[76] արտացոլում են նոր դարաշրջանի դիմագիծը: Այսպես, մեզ մոտ հասարակության կողմից ճվազ պարասավելի կամ ընդհանրապես անպարասավելի գործողությունների խմբին են պատկանում. հարկերի վճարումից խուսափելը, իշխանությունների խաբելը, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման, քնակվարձի, միջքաղաքային հեռախոսազրույցների դիմաց գումարներ չվճարելը, կաշառատվությունը, խարդախությունը, խաբեբայությունը, գողացված էժան իրեր գնելը, ամուսնական անհավատարմությունը, փաստացի բազմակնությունը, պարտքերը չվերադարձնելը, կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքը, շրջակա միջավայրն աղտոտելը և շատ այլ բաներ: Սա չի նշանակում, որ բացարձակապես բոլորը արդարացնում են անբարոյական գործողությունները: Բայց նման արարքների հանդեպ անտարբերությունը, այդպիսի գործողություններ կատարողների նկատմամբ հասարակական խիստ հանդիմանանքի ու ճնշման բացակայությունը հանգեցնում է նրան, որ հաստատվում է ամենաթողության և անպատժելիության մթնոլորտ: Իբրև հանրագումար՝ բարքերի անկում և բարոյական ծգնաժամ՝ տրանսֆորմացվող հասարակությունում:

1991-2001 թթ. ընթացքում հայ աշխատավորների մեծաքանակ բազմություններ ծգվեցին դեպի Ռուսաստան և Արևմուտք: Մասշտաբային միգրացիան ուժեղացրեց հոգեբանական անհարմարության զգացումը հայ քնակչության մոտ: Ընտանիքի, երեխաների, մերձավոր ընկերական շրջապատի ավանդական արժեքներն այդպես էլ մնացին մարդկանց գիտակցության մեջ: Այսօր հասարակ հայի գիտակցությունում գերակշռում են ընտանիքի և անձնական շրջապատի արժեքները: Արժեքային դիրքորոշումների աստիճանակարգում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հայրենիքը, երկիրը, ազգը, պետությունը, դուրսմղվեցին ու հայտնվեցին հասարակական գիտակցության նանամասերում: Փաստորեն, տեղի ունեցավ յուրօրինակ արժեքային ֆոկուսավորում, ինչը գործնականում բերում է սոցիալական սարածքի տրոհմանը. յուրաքանչյուրը նախ և առաջ մտածում է իր և իր ընտանիքի մասին, մյուս հիմնախնդիրներին անտարբեր է:

Ի հավելումն սրա, պետությունը «թողել-հեռացել է» սոցիալական կյանքի շատ ոլորտներից՝ թողնելով քաղաքացիներին մեծ-մեծակ իրենց ճակատագրի հետ: Շատ քաղաքացիների համար դա, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում պետության գերակայության երկար տարիներից հետո, ապրած հերթական սրրեսն էր: Այդ պատճառով մարդկանց սպասելիքները պետությունից հանգեցին սոցիալական նվազագույնին: Մարդիկ հասկացան, որ արդեն չի կարելի հույսը դնել իշխանության վրա, այլ հարկ է հենվել միայն սեփական ուժերի վրա: Որոշակի անհատականացումը նախկինում էլ հատուկ է եղել հայկական հոգեկերտվածքին, սակայն շուկայական հարաբերությունների և պետական իշխանության բուլացման պայմաններում այն էլ ավելի խորացավ: Կեղծ-կոլեկտիվիստական տրամադրություններին փոխարինելու եկավ անհատական ծեռնարկչատիրության պրագմատիզմն ու սոցիալական եսասիրությունը: Սոցիալական դաշտը պատակտվեց բազում ենթահամակարգերի: Բարոյական ոլորտը նեղացավ մինչև հասարակության բջջի՝ ընտանիքի չափերը:

Հանրապետության երեք քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր) սոցիոլոգիական ուսումնասիրությունը՝ անցկացված 1993 թ. մարտին, ցույց տվեց, թե

[74] Динамика ценностей населения реформируемой России. М., Эдиториал УРСС, 1996, с. 45.
[75] О доминантах массового сознания. – В кн.:Россия на рубеже веков. М., РОССПЭН, 2000, с.367.
[76] Նույն տեղում, էջ 373.

որչափ փոխվել են արժեքային պատկերացումները հայ հասարակական գիտակցությունում: Հարցվողներին առաջարկվել էր մարդկային որակները ճկարագրող 17 երկճյող հիմնաբար բնութագրություններից կազմված ցուցակ.

1. Ազնվություն	Անազնվություն
2. Բարություն	Չարություն
3. Աշխատասիրություն	Ծուլություն
4. Կամք	Կամազրկություն
5. Հավատ	Անհավատություն
6. Ազատասիրություն	Ստրկամտություն
7. Անհատականացում	Կոլեկտիվիզմ
8. Հավատարմություն	Դավաճանություն
9. Օրինապաշտություն	Օրինազանցություն
10. Ազգասիրություն	Օտարամոլություն
11. Գործարարություն	Պասսիվություն
12. Հանդուրժողականություն	Անհանդուրժողականություն
13. Ավանդապահություն	Նորասիրություն
14. Դիմացկունություն	Անդիմացկունություն
15. Բարեկրթություն	Կոպտություն
16. Ընբոստություն	Խոնարհամտություն
17. Գիտելիքի ծարավ	Գիտելիքների հանդեպ անտարբերություն

Դրական գնահատականներ են ստացել այնպիսի որակներ, ինչպիսիք են «աշխատասիրությունը», «գործարարությունը», «անհատապաշտությունը» և «դիմացկունությունը»: Հարցվողների կարծիքով, հենց այս որակներն են ամենից լավ բնութագրում ժամանակակից տիպական հային[7]: Առավելագույն դրական գնահատականներ են ստացել հայկական բնավորության այնպիսի հատկանիշներ կամ գծեր, ինչպիսիք են «դիմացկունությունը» և «գործարարությունը», ապա միայն «աշխատասիրությունը» և «անհատապաշտությունը»: Հայերին բնութագրող բացասական որակների թվում են հայտնվել «կոպտությունը», «օրինազանցությունը», «անազնվությունը» և «դավաճանությունը»: Առավել վատ արտահայտված բացասական գիծը, հարցվողների կարծիքով, «օրինազանցությունն» է: Այսպիսին էին հայերի ինքնաբնութագրիչները 90-ական թվականների կեսերին: Փաստորեն, դրանք արտա-

[7] Погосян Г.А. Судьба армянина в Армении. – "Социологические исследования", М., 1994, N 10.

գոլում են հայ հասարակական ինքնագիտակցության ինքնաճույնականացման գծերը:

Ժամանակակից հայի բարոյական ընտրությունը հանգում էր երկընտրանքի՝ հայրենասիրություն կամ նասմոլական աշխարհաքաղաքացիություն:

«Հայրենասերները» նախընտրեցին ապրել բոլոր ծախսողություններ հայրենիքի հետ միասին, իսկ «եսամոլ աշխարհաքաղաքացիները» մեկնեցին երկրից՝ ավելի լավ կյանքի որոնումներով: Ուշագրավ է, որ առաջիններն այդքան էլ ուժեղ չէին մեղադրում վերջիններին: Համենայն դեպս 1993 թ. սոցիոլոգիական ուսումնասիրության մեջ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (70 %) պատճենցիալ միգրանտներ դուրս եկան և մտաղրություն էին հայտնում հանգամանքների հաջող դասավորության դեպքում մեկնել երկրից: Առանձնապես՝ նրանք մտահոգ էին իրենց երեխաների ապագայով: Հենց սա՝ հեռանկար չտեսնելը, սնփականց ապագայի հանդեպ անվստահությունն էր բնութագրական՝ 1991-1997 թթ. ժամանակաշրջանի հայ ազգային գիտակցության համար:

Բարոյական ռելյատիվիզմի պայմաններում այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են ազնվությունը, հավատարմությունը, օրինավորությունը, արդարամտությունը, լիովին արժեզրկվեցին: Անցումային բարոյական գիտակցության իրողությունները դուրս մղեցին ղրանց և շպրտեցին՝ որպես չաշխատող, անօգուտ ծանրաբեռ: Ջանգվածային վարքագծում հետզհետե գերակա դեր կատարող անձնական հաջողության ռազմավարությունը անհատական գիտակցության խորքը ներմուծ չատ գործիքային (ինստրումենտալ) արժեքներ: Հաջողության հասնելու բոլոր կամ գրեթե բոլոր ուղիները հասարակայնորեն ընդունելի դարձան: Արժեքանական ռելյատիվիզմը, հասարակության որոշ բարոյազրկությունը, կոմունիստական անցյալի կարոտախտը և «ուժեղ ձեռքի»՝ ուժեղ իշխանության ցանկությունը՝ - ահա այն բարոյահոգեբանական մթնոլորտը, որը բավականաչափ ամրոզջական ճկարագրում է արդի հայ հասարակության հոգևոր վիճակը:

Պատկերն ամրողջական չէր լինի, եթե մենք չանդրադառնայինք հայերի կրոնական գիտակցությանը: Խորհրդային տարիներին ոչնչացված քրիստոնեությունը ողջ ուժով ծավալվեց հասարակության տրանսֆորմացիայի շրջանում: Եկեղեցին ու կրոնը գործունեության լայն դաշտ ստացան, իսկ մարդիկ դադարեցին թաքցնել իրենց կրոնական համոզմունքները: Ամենուր սկսեցին կառուցվել եկեղեցիներ, երբեմն էլ՝ մասնավոր անձանց և համայնքի միջոցներով: 1995-2002 թթ. հասարակական կարծիքի հարցումները վկայում են այն մասին, որ հանրապետության 95 % բնակչությունն իրեն համարում է հայ առաքելական եկեղեցու հետևորդ:

Կրոնը միշտ էլ էական, որոշիչ տեղ է գրավել հայերի հոգևոր գիտակցությու-

նում, իսկ հիմա այն լիակատար կերպով օրինականացվել է: Ժողովրդավարական բարեփոխումները վերականգնեցին կրոնի, խղճի ու դավանանքի ազատության հեղինակությունը, և վերադարձրին եկեղեցին հասարակությանը: ՀՀ նոր Սահմանադրությամբ եկեղեցին այսօր էլ բաժանված է պետությունից, բայց այն բաժանված չէ հասարակությունից: Այնուամենայնիվ, հասարակայնությունից՝ եկեղեցու մեկուսացման խորհրդային երկար տարիները իրենց դրոշմն են թողել նրա գործունեության վրա: Այսօր հայ եկեղեցին դժվարությամբ է գտնում մարդկանց օտարված հոգիները տանող ուղին: Նա ապավարժվել է իր ծխականների հետ նրանց մտահոգությունների մասին բաց խոսելուց: Եկեղեցու հայրերի հոգևոր քարոզը չի հասնում մարդկանց սրտին, չի պատասխանում նրանց հարցերին, չի խաղաղեցնում հոգիները և չի կարողանում ուղենշել հոգևոր ճգնաժամից դուրս գալու ելքը: Հայ եկեղեցուն դեռ պետք է վերավաստակել իր ծխականների վստահությունը, վերադարձնել հավատացյալներին իր գիրկը: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի եկեղեցին դեմքով շրջվի դեպի հասարակությունը, դեպի մարդկանց տագնապներն ու հոգսերը:

Խորհրդային իշխանության տարիներին, գտնվելով քրիստոնեական համայնքից մեկուսացման մեջ, եկեղեցին ու հոգևորականությունը կտրվեցին, հեռացան իրական կյանքից: Եկեղեցին պարփակվել էր իր մեջ, բավարարում էր միայն սահմանափակ թվով մարդկանց հոգևոր պահանջմունքները, ավելի շատ ապրում էր հայ սփյուռքի մտահոգություններով: Իսկ այսօր եկեղեցին դարձել է մարդկանց հոգևոր պահանջմունքները բավարարող հեղինակավոր հաստատություն: Չնայած դրան, արդի սոցիալական հարաբերությունների համակարգում՝ այն լուրջ բարեփոխության կարիքն ունի[78]:

Ստեղծված հոգևոր վակուումն արագորեն սկսեցին լրացնել-հագեցնել Արևմուտքի և Արևելքի տարատեսակ կրոնական աղանդներն ու հոսանքները: Այսօր իսկական «հոգեորսություն է» սկսվել, և Հայ առաքելական եկեղեցին այդ պայքարում ապավինում է առայժմ լոկ պետության օգնությանը՝ փոխանակ զրաղեցնելու ակտիվ դիրքորոշում: Սոցիոլոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ տարատեսակ աղանդները բավական մեծ տարածում են գտել Հայաստանում[79]:

[78] Геворкян Г.А. Церковь как общественный институт и национальная жизнь. — Вестник Ереванского университета. Общественные науки. N 2 (107). Ереван, 2002.

[79] Several Group of Minorities in Armenia. Case Study. ASA/IOM, Yerevan, 2001. - Poghosyan G. Migration Processes in Armenia. Yerevan, 2003.

Պաշտոնական տվյալներով, հանրապետությունում գրանցվել է շուրջ 50 տարբեր կրոնական կազմակերպություն: Որոշ կազմակերպությունների մերժվել է պաշտոնական գրանցումը, բայց չնայած դրան, նրանք շարունակում են իրենց գործունեությունը հանրապետության շատ շրջաններում և քարոզում են իրենց վարդապետությունները: Նրանք մարդկանց շաժանում են անվճար կրոնական գրականություն ու երբեմն էլ մարդասիրական օգնություն են ցուցաբերում իրենց հետևորդներին:

Այսպիսով, նորահայտ կազմակերպությունները ու աղանդները գրավիչ են դառնում տեղի բնակչության համար: Ընդսմին, զանգվածային չքավորությունը պատարտ միջավայր է հանդիսանում այլազան մնսիական գաղափարների և հոսանքների տարածման համար: Հասարակ ժողովուրդն ապրում է հրաշքի սպասումով և պատրաստ է յուրաքանչյուրի մեջ, ով դիմում է իրեն սփոփիչ խոսքով, տեսնել իր փրկչին: Զգացել է տալիս նաև հասարակության հոգեվածությունը անվերջանալի վտմփոխություններից և կայունություն ձեռք բերելու ցանկությունը:

Սկսած մ.թ.ա. III դարից հայկական էթնոսը ձևավորվել է բազմաստվածության և հեթանոսության ներգործության տակ: Մ.թ. I-II դդ. Հայաստանում մասնակիորեն, հիմնականում բաքնված կերպով, տարածվել է քրիստոնեությունը՝ Ս. Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների ու նրանց հետևորդների քարոզչությամբ, բայց միայն մ.թ. III դարից է սկսել այն հիմնավորապես արմատավորվել, ընդ որում՝ «վերևից»՝ մեծ դժվարությամբ[80]: Քրիստոնեությունը տարածվում էր սկզբնապես հունարեն և ասորերեն լեզուներով, որոնց տիրապետում էր միայն ազնվականությունը: Ժողովուրդը դեռ շատ երկար ժամանակ շարունակում էր հեթանոս մնալ և դժվարությամբ էր բաժանվում դրանից: Եվ հետագայում ու մինչ օրս, նա պահպանել է որոշ հեթանոսական ծեսեր կրոնական վարքաբանությունում (զոհաբերության ծիսակատարությունը, խաղտյնի վրայով ցատկելը, ցվիրաբերությունը կրակին և այլն): Եվ քրիստոնեական եկեղեցին ստիպված էր համակերպվել դրա հետ:

Խորհրդային անաստվածության դարաշրջանը պարարտ հող հանդիսացավ ժողովրդի մեջ հեթանոսական ոգու վերածնման համար: Հեթանոսության բարոյական հյուսվածքը կրկին աճեց՝ գրեթե երկու հազար տարի անց՝ շնորհիվ հասարակության քրիստոնեական կյանքում բոլշևիկների ստեղծած երկարատև դադարի: Բոլշևիկների կողմից հայ հասարակության տարաճջատումը քրիստոնեական եկեղեցուց հանգեցրեց այն բանին, որ քրիստոնեությունը դարձավ ընդհատակյա կրոն

[80] Мирумян К.А. Из истории армянской политической мысли. Ереван, 2002 (на арм.), с. 38-40.

և քշվեց-հալածվեց սոցիալական անգիտակցականի ասպարեզ: Դրա հետ մեկտեղ ակամա զարգացում ու տարածում ստացան վերածնված հեթանոսական ծիսակատարությունները, հեթանոսական «քաղաքաքաղությունը», որոնք ընդհանուր ոչինչ չունեն քրիստոնեության հետ:

Այսօր մենք վկաներն ենք այն նոր հասարակական գիտակցության կայացման, որում քրիստոնեական արժեքները վերստին հետզհետե վերադառնում են սոցիալական ենթագիտակցությունից դեպի իրական պրակտիկա: Բայց դրանք ստիպված են ճեղքել-անցնել անաստվածության և հեթանոսության դարաշրջանի շերտաստվածքների միջով:

Երկրում ծավալվող քաղաքական գործընթացները նույնպես ցուցադրում են հասարակության արժեքաբանական գիտակցության էվոլյուցիան: 2003 թ. փետրվարի նախագահական նախընտրական արշավը ակնառու կերպով երևան հանեց հայ հասարակության քաղաքական ձգտումների ուղղվածությունը: Երկրի նախագահի 11 թեկնածուներից ամենահանրաճանաչը ընդդիմության երկու թեկնածուներ էին. կոմունիստական անցյալի հետևորդը և ներկայի խիստ քննադատը:

Համաձայնության քաղաքական կողմնորոշումներ էին գերակայում հայերի հասարակական գիտակցությունում նաև 1999 թ. խորհրդարանական ընտրություններին: Այն ժամանակ հսկայական հաջողությամբ հանդես եկավ միավորված կուսակցությունը՝ Կ. Դեմիրճյանի (Հայաստանի Կոմկուսի ԿԿ նախկին առաջին քարտուղար) և Վ. Սարգսյանի (ՀՀ պաշտպանության նախարար) գլխավորությամբ: Քննակչության ճնշող մեծամասնության աչքում առաջինը վայելում էր կարողաքաղծական կոմունիստական լիդերի հսկայական հեղինակությունը, իսկ երկրորդը՝ իրենով մարմնավորում էր ուժեղ իշխանության, «ուժեղ ձեռքի» իդեալը: Երկու լիդերների անսպասելի քաղաքական դաշինքն ավելի լավ, քան երբեք, համապատասխանում էր զանգվածային քաղաքական գիտակցությունում այն ժամանակ ծնավորված՝ իշխանության ցվիրական սիմվոլներին:

Խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տանելուց մի քանի ամիս անց՝ 1999 թ. հոկտեմբերի 27-ին, երկու լիդերներն էլ, արդեն պետության ղեկավարների կարգավիճակով (մեկը խորհրդարանի խոսնակի պաշտոնում, մյուսը՝ վարչապետի) գնդակահարվեցին մի խումբ ահաբեկիչների կողմից՝ Ազգային ժողովի շենքում: Հերթական անգամ հասարակությունը խոր ցնցում ապրեց: Իշխանությունների՝ դրան հաջորդած գործողությունները հանգեցրին դեպրեխայի (ընկճվածության) ուժեղացմանը հասարակությունում և խորացրին նրա քաղաքական օտարացումը: Այդ իրադարձությունները մեծ դեր խաղացին հասարակության արժեքային գիտակցության, ի մասնավորի՝ քաղաքական գիտակցության ծնավորման գործում:

Ընտրությունների շրջանում առանձնապես ցայտուն են դրսևորվում նորմատիվային ժողովրդավարության գերակայությունները՝ թեկնածուների համար հավասար հնարավորությունների, ժողովրդավարական ընտրությունների ընթացակարգի հստակ պահպանման պահանջը: 2003 թ. նախագահական ընտրություններին Հայաստանում օգտագործվել են նույնիսկ թափանցիկ քվեատուփեր: Ժողովրդավարական արժեքների հանդեպ տարբեր սոցիալական և տարիքային խմբերի վերաբերմունքը տարբեր է: Ավագ սերունդն ավելի շատ համակված է կոմունիստական անցյալի կարոտախտով: Համաձայնության տրամադրություններ են տարածված աշխատավորների, գործազուրկների և տնայինի տնտեսուհիների, միջնակարգ կրթություն ունեցող մարդկանց, փոքր քաղաքների և գյուղերի բնակիչների շրջանում: Իսկ հավատարմությունը ժողովրդավարական արժեքներին առավել վառ արտահայտված է երիտասարդության, բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց, մտավորականության, ծառայողների, քնակչության տնտեսապես ակտիվ մասի, խոշոր քաղաքների բնակիչների շրջանում:

Մեծ միգրացիայի պատճառով հայ հասարակությունում այսօր մեծամասնությունն կազմում են թույլ պաշտպանված սոցիալական խմբերը: Այդ իսկ պատճառով ընտրազանգվածում գերակայում են առաջին խմբի՝ կարոտախտով համակված մարդկանց արժեքային պատկերացումները: «Դեմոկրատների» և «Լիբերալների» համար շատ դժվարին է նախընտրական պայքարը: Առավելագույն վարկանիշ ունեն կոմունիստական, սոցիալիստական կողմնորոշման և ակնհայտորեն պոպուլիստական հակումներով կուսակցություններն ու լիդերները:

Հասարակական գիտակցության մեջ ձևավորվող «ուժեղ» դեմոկրատիայի քաղաքական արժեքները գործնական կյանքում նպաստում են «ավտորիտար դեմոկրատիայի» տիպի կառավարչական մոդելի ձևավորմանը: Ըստ էության, այդ հակասական համակցության մեջ միահյուսվել են զանգվածային երկու արժեքային արխետիպեր. հասարակությունում օրենքի ու կարգուկանոնի արժեքը և բոլոր քաղաքացիների հավասարությունն օրենքի առջև: Իսկ ուժեղ իշխանությունը, ինչպես և ցանկացած իշխանություն հայկական հոգեկերտվածքում անձնավորված է: Այդ իսկ պատճառով ուժեղ իշխանությունն ընկալվում է որպես ուժեղ անձնավորության, ճախագահի, թագավորի, այլ ոչ թե անդեմ խորհրդարանի իշխանություն: Հայ հասարակությունը կողմնակից է նախագահական կառավարման ձևին, ընդորում՝ ուժեղ, կամային, վճռական նախագահի կառավարմանը: Մյուս կողմից՝ ազատության արժեքը նույնպես որոշիչ նշանակություն ունի հասարակական հոգեկերտվածքում: Խոսքի, մամուլի, դավանանքի ազատությունը, տեղաշարժվելու, քաղաքական կազմակերպությունների ազատությունն ու ազատ ընտրություններն, իրենց

հերթին, սերտորեն կապվում են ժողովրդավարության հետ: Հայկական պետականության պատմամշակութային մոդելի վրա այդ երկու հասարակական գծերի դրոշմվելու արդյունքում էլ հենց ձևավորվում է «ավտորիտար դեմոկրատիայի» տիպը:

2. 3. ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անցումային հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, գաղափարաքաղաքական, կառուցվածքային-ինստիտուցիոնալ ու բարոյահոգեբանական փոփոխությունները, ընդհանրապես նրա որակական որոշակիության կորուստը ենթադրում են այդ հասարակության անդամների որակական փոփոխություններ: Այդ ամենն ազդում է որոշակի պայմաններում ձևավորված, որոշակի հասարակության նորմեր, ավանդույթներ, արժեքներ կրող, դրանք ներկայացնող անձի տրամադրության, հոգեվիճակի, ինքնազգացողության, դիրքորոշումների, գնահատականների, արժեքների և այլնի վրա: Այս ամենը պայմանավորում է ոչ միայն միջանձնային, այլ նաև անձ-սոցիալական ինստիտուտ հարաբերությունների բնույթը: Ցանկացած բարեփոխում միշտ նպատակ է ունենում ստեղծել սոցիալ-քաղաքական նոր միջավայր: Չնայած սրան՝ անցումային հասարակություններում դրանք հաճախ անկազմակերպ, տարերային, ռոքերգական, քաոսային ու անկանխատեսելի հետևանքներ են ունենում: Կենցաղային մակարդակում հասարակության անցումային ճգնաժամն ընկալվում է առաջին հերթին որպես սպառման ոլորտների, դրա որակի ու ծավալների կրճատում: Վերջինս մարդու մոտ առաջ է բերում տառապանքներ, կյանքից դժգոհություն և այլն, իսկ այս ամենի հետևանքով մարդու ավելի խորը՝ անձնային մակարդակում են տեղի ունենում փոփոխություններ, որոնց շարքում կարևոր տեղ են գրավում նրա արժեքային համակարգի փոփոխությունները: «Արժեք» հասկացությունը տարբեր հեղինակներ, տարբեր ձևով են բնութագրում, բառարաններում, սովորաբար այն բնութագրվում է որպես. «...օբյեկտներ, երևույթներ կամ դրանց հատկություններ, ինչպես նաև վերացական գաղափարներ, որոնք իրենց մեջ մարմնավորում են հասարակության իդեալները և դրանով իսկ հանդես են գալիս որպես արժանիի իդեալներ»[81]:

[81] Психология: словарь. Под ред. А.В. Петровского и М.Г. Ярошевского. М. Политиздат, 1990, с. 442.

Արժեք ասելով մենք հասկանում ենք անձի սոցիալական փորձի ընթացքում ներքնայնացման (ինտերնալիզացիայի) ենթարկված նպատակները, համոզմունքները, իդեալները և նրա համար նշանակալից աշխարհայացքային այլ դրսևորումներ: Արժեքային համակարգում առկա քաոսն ու անկանխատեսելի փոփոխությունները շատ բնական են համարվում անցումային շրջանի համար: Նույնիսկ որոշ հեղինակների կարծիքով, հենց հասարակության մեջ արժեքային բախման առկայությունն է դրա միջանկյալ, անցումային բնույթի վկայությունը[82]:

Անցման էությունն այն է, որ չուկայական հարաբերություններ պետք է ձևավորվեն ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական ու քաղաքական ոլորտներում: Սրա տակ պետք է հասկանանք նաև պետության նկատմամբ տնտեսական, քաղաքական ինքնուրույնություն ունեցող անձի՝ քաղաքացիական հասարակության անդամի ձևավորումը: Այս ամենն ընթանում է նախ և առաջ հասարակության մեջ հսկա ճեղքվածքի առաջացմամբ: Վերջինս հանդես է գալիս որպես առնվազն երկու՝ պահպանողական ու առաջընթացի հակված անձանց, երկու ենթամշակույթների բախում, որ խոչընդոտում ու սպառնում է հասարակության ինտեգրացիային: Հասարակության բնորոշ գծերից է դառնում ընդհանուր բարոյական իդեալի բացակայությունը, որով էլ բացատրվում է բարոյական ու կազմակերպական միասնության բացակայությունը: Սրա պատճառը հասարակության տարբեր շերտերի ու տարբեր անդամների՝ նորությունները ընկալելու ու յուրացնելու ընդունակությունների տարբերությունն է: Նոր երևույթները յուրացնելու ոչ բավարար ընդունակությունն անջատում է հասարակության մի շերտը մյուսից՝ խաթարելով նրանց միջև հաղորդակցությունը: Հասարակության բնեռայնացությունն ու արժեքների բազմազանությունը վերածվում են քաղաքակրթությունների բախման: Այս գործընթացների հետևանքն այն է լինում, որ արդիականացման հիմնական խնդիրը դառնում է «ճեղքված անձը»: Սա մի տեսակ հին արժեքները դավանել և միաժամանակ արդիականացած հասարակության մեջ ապրել ցանկացող անձ է:

Անցումային իրավիճակների համար բնական համարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական ճգնաժամի հետևանքը լինում է այն, որ տեղի է ունենում գործազրկության, աղքատության ու դրանց հետևանքով՝ արտագաղթի աճ, միջանձնային փոխհարաբերությունների խաթարում սոցիալական խմբերում,

[82] Наше общество в трех измерениях. В авторской редакции член-корреспондент РАН Н.И.Лапин, канд.филос.наук А.А.Беляева. М., 1994, с.40.

մասնավորապես՝ ընտանիքում: Ընտանիքում միջանձնային փոխհարաբերությունների վերաբերող խնդիրներին բազմիցս անդրադարձել են սոցիալական հոգեբանության մեջ: Բազմաթիվ պատճառների շարքում հաճախ են նշվում կենսապայմանների փոփոխությունները, որոնք հենց սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքն են և, իրենց հերթին, անդրադառնում են անձի արժեքային համակարգի վրա: Այս երևույթը ավելի ցայտուն ձևով է արտահայտվում մեր օրերում, երբ «համատարած գործազրկության ու բրեականացման մթնոլորտում առաջնային դերակատարում են ստանձնում ըստ ժամանակի և տարածության մոտ գտնվող արժեքները, որոնք աստիճանաբար ուղղորդող ֆունկցիա են ձեռք բերում՝ դառնալով համոզմունքներ, վարքի ու մտածողության կարծրատիպեր, աշխարհայացքային կողմնորոշիչներ»[83]:

Ընտանեկան փոխհարաբերությունների վատթարացման հիմնական պատճառներից են համարվում դերային բախումները: Սրանք «...ծագում են կնոջ աշխատանքային գործունեության և տնային աշխատանքի բաժանման կապակցությամբ. հետազոտությունները վկայում են, որ կանայք ավելի ու ավելի են դժգոհում ամուսնու ցածր աշխատավարձից, իսկ վերջիններս կշտամբում են նրանց տնտեսությունը վատ վարելու համար: ...կինն ու ամուսինը աշխատում են տնից դուրս, սակայն կինը, բացի դրանից, պարտավոր է կատարել նաև հիմնական տնային գործերը»[84]: Մեր կարծիքով, այժմ այս երևույթի մեծ տարածում ունենալու հիմնական պատճառն այն է, որ ավանդական-նահապետական արժեքներին, դրանց բեկաղրած վարքի ձևերին փոխարինելու են գալիս նոր, արդիականացած հասարակությանը հատուկ արժեքները, սակայն դեռ լրիվ չեն փոխարինել, իսկ անցումը բավական դժվար է, քանի որ կողմերից ոչ մեկը, ոչ էլ մյուսը հստակ չեն պատկերացնում իրենց նոր դերերը: Իսկ ստեղծված իրադրությունները մարդկանց ուղղակի ստիպում են մոնել իրենց անձանոթ կամ քիչ ծանոթ դերերի ու կապերի մեջ:

Հասարակության անդամների արժեքային համակարգում նյութականի դերն անհամեմատ մեծացել է, և շատ հաճախ այն բավական մեծ խնդիրների տեղիք է տալիս: Եթե մարդկանց կարևորագույն խնդիրն է դառնում առաջնային, հիմնական, կենսաբանական պահանջմունքների բավարարումը, որի հնա-

[83] Ն. Հակոբյան, Վ. Սարգսյան, «Արժեքային համակարգի այլավոխումները փոխակերպվող հասարակությունում», Հոգեբանությունը և կյանքը, 2006, N 1-2, Երևան, «Զանգակ-97», էջ 7:

[84] Ա.Ֆ. Հարությունյան, Ներբնատանեկան բախում. սիրուց մինչև ապահարգան, Հոգեբանությունը և կյանքը, Երևան, «Զանգակ», 2002, N2, էջ 33:

բավարարությունը հաճախ չի լինում, ապա մարդն ինքնաերաբար իր առջև ավելի բարձր պահանջներ չի դնում, կամ հազվադեպ է դնում: Ընտանիքում այժմ «...բացահայտ բախման դեպքում նյութական գործոնը զբաղեցնում է կայուն առաջին տեղը՝ ի տարբերություն թաքնված բախման, որի պարագայում այն չորրորդն է»[85]: Նյութական արժեքների այսպիսի գերակայությունն առկա է ոչ միայն հայ հասարակության արժեքային համակարգում, այլ նախկին ԽՍՀՄ բոլոր երկրներում: Այսպես, 1989-1991 թթ. Ռուսաստանի ԳԱ փիլիսոփայության ու իրավունքի գիտական խորհրդի կազմակերպած համառուսաստանյան «Մեր արժեքներն այսօր» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մարդկանց 48-65%-ի համար ավելի անհանգստացնող են համարվում սննդամթերքի, առաջին անհրաժեշտության ապրանքների, հանցագործության աճի խնդիրները, քան կրթության մակարդակին, միջազգային հարաբերություններին վերաբերող խնդիրները:

Անցումային հասարակության զարգացման տարբեր շրջաններում անձի արժեքային համակարգի դինամիկայի հետաքրքիր հետազոտություն է իրականացրել Ա.Ժ. Ժուրավլյովը (Ռուսաստանի օրինակի վրա): Ըստ այդ հետազոտությունների արդյունքների, սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամից հետո (1990-1994 թ.թ.), 1994-ց մինչև 2001 թվականներին արժեքային համակարգում տեղաշարժերը տեղի են ունեցել հետևյալ ուղղություններով.

1. Աճել են պրագմատիկ արժեքների (աշխատանքային հաջողություններ, նախաձեռնողություն), պատասխանատվության և ինքնակատարելագործման (կրթվածություն, առողջություն) արժեքների նշանակալիությունը:

2. Նվազել են բարոյական և անձնային զարգացման, ինչպես նաև այսպես կոչված տերմինալ (ասենք, ուրիշների երջանկությունը) և ինստրումենտալ (անկախություն, կենսախնդություն) արժեքների նշանակալիությունը[86]:

Անցումային հասարակություններում արժեքային անցումները սովորաբար կտրուկ ու հստակ չեն լինում: Զարգացման առաջին փուլում է, որ ամեն ինչ, ինչ նոր է, այդ թվում նաև արժեքները, ընդունվում են իդեալականացված, անվերապահ կերպով, առանց չնչին իսկ քննադատության, ամեն ինչ, առանց բացառությունների՝ մերժվում է: Եթե քննադատականություն կա, այն ուղղված է միայն դեպի անցյալը, իսկ ներկայի զարգացման բացասական միտումները

[85] Ա.Ֆ. Հարությունյան, Ներբնատանեկան բախում. սիրուց մինչև ապահարգան, Հոգեբանությունը և կյանքը, Երևան, «Զանգակ», 2002, N2, էջ 35:

[86] Журавлев А.Л. Динамика социальной психологии личности в изменяющемся обществе. http://spkurdyumov.narod.ru/Guravlev1.htm.

չեն նկատվում: Սակայն այս իրավիճակը չի կարող անցնել առանց հետքերի: Մարդկանց կյանքում «...հին կառուցվածքների ու կապերի փլուզումը, ժամանակավոր անորոշ ու անկայուն վիճակները չեն կարող չանդրադառնալ նրանց տրամադրության և ինքնագգացողության վրա: ...Մարդկանց հոգեբանական վիճակի բնորոշ գծերից են դառնում սպասողականությունը, երկիմաստությունը, հուսահատությունը, ընկճվածությունը, անհանգստությունը, կասկածամտությունը և այլն»[97]: Բավական ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի մարդիկ ավելի սթափ ու քննադատականորեն մոտենան նորություններին ու վերաանայեն ինի նկատմամբ համատարած ժխտողականությունը: Այս փուլին արդեն բնորոշ է այսպես կոչված «զուգահեռականության երևույթը», որը դրսևորվում է բոլոր բնագավառներում. մի կողմից ինստիտուտները, դրանց բնորոշ արժեքներն ու վարքի ձևերը, մյուս կողմից՝ նոր, արդիականացած ինստիտուտները, արժեքներն ու հարաբերությունները: Օբյեկտիվ պատճառները բերում են նրան, որ մարդիկ հայտնվում են երկու զուգահեռ իրականություններում, երկու տարբեր սոցիոմշակութային միջավայրերում և, բնականաբար, մարդու մեջ ձևավորվում է երկակի վերաբերմունք շրջապատող ամեն ինչի նկատմամբ: Նման իրավիճակում արժեքները, դիրքորոշումները ոչ միայն երկակի, այլ շատ հաճախ լրիվ հակասական բնույթ են կրում: Սակայն, չնայած տնականությանը, անցումային շրջանի ողջ ողբերգությունն ու բառոսն ամերջ չեն և կյանքի են կոչում նոր ուժերի:

Անցումային հասարակությունների ու հետևաբար նաև գիտության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է զարգացման «թաքնված արատների» խնդիրը: Այսպես կոչված «վազող արդիականությունը» հաճախ վերածվում է տնականի ու անընդհատ ապակայունացման ու ապակառուցվածքայնացման գործընթացի: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ արդիականացումը սովորաբար հասկանում ու հանգեցնում են տեխնիկական նորարարությունների ոլորտի փոփոխություններին կամ արդեն պատրաստի, գոյություն ունեցող մշակութային օրինակների միանգամից, առանց նախապատրաստման ներմուծելուն: Մինչդեռ արդիականացումը նախ և առաջ նոր արժեքների ու իմաստների, նոր արժեքային համակարգի ստեղծման ըրտնաջան աշխատանք են-թադրող սոցիալ-մշակութային գործընթաց է:

[97] Ն. Հակոբյան, Վ. Սաթգսյան, «Արժեքային համակարգի այլափոխումները փոխակերպվող հասարակությունում», Հոգեբանությունը և կյանքը, 2006, N 1-2, Երևան, «Զանգակ-97», էջ 6:

Նախկին ԽՍՀՄ-ի գաղափարախոսության մասն էր հասարակության բարոյաքաղաքական միավորվածությունը, միատարր լինելը ներկայացնելը: Այդ պաշտոնական դոկտրինայից հրաժարվելով՝ անցումային շրջանում հասարակության առջև միանգամից հայտնվեց գոյություն ունեցող և միշտ էլ գոյություն ունեցած արժեքների բազմազանությունը: Մարդկային հասարակությունների համար արժեքների բազմազանությունը բնական վիճակ է: Ինչպես մարդկային գոյության մնացած հիմնարար տարրերը, այնպես էլ արժեքների բազմազանությունը ամբիվալենտ (երկարժեք) երևույթ է և դրական ու բացասական մեկնաբանությունների ու գործընթացների հակայական հնարավորություն է ամփոփում: Արժեքային բազմազանության առանձնահատուկ դեպքեր են ժամանակակից այն հասարակությունները, որոնք հագեցած են իրենց բովանդակությամբ երբեմն լրիվ արխայիկ, ավանդական արժեքներով: Որոշ զարգացող հասարակություններ կարողացել են հաջողությամբ օգտագործել մշակութային հնությունները որպես արդիականացման գործընթացների ռեսուրս: Մշակութային հնությունների ու ավանդական արժեքների օգտագործման փաստն էլ հենց այն շշմեցնող առաջընթացի պատճառն է, որ արձանագրվել է վերջերս դեռ հետամնաց համարվող ասիական երկրների արդիականացման գործընթացում, չենք խոսում արդեն Ճապոնիայի մասին: Ընդ որում, համաշխարհային պրակտիկայում որոշակի պայմաններում որպես այդպիսի ռեսուրս, որոշակի նպատակի հասնելու համար որպես «չինանյութ» կամ հիմք օգտագործվել է մշակույթներում առկա ամեն ինչ՝ սովորույթները, ավանդույթները, սովորությունները, նյութական հարստությունը, մարդիկ և այլն: Սակայն հաջող արդիականացման, հաջող «անցում» կատարելու համար միայն նպատակի առկայությունը բավարար չէ, անհրաժեշտ է հիմնարար արժեքների որոշակի հիերարխիա: Հիմնարար, բազային արժեքները պետք է վկայեն արդիականացման փոփոխությունների նկատմամբ հասարակության պատրաստ լինելու մասին, որոշակի նպատակների հասնելու համար հասարակության բավական մեծաթիվ անդամների կողմից իրենց և շրջապատի կրելիք փոփոխությունների մասին պատկերացում ունենալը:

Ուսումնասիրելով զարգացման ունիվերսալիաների հիմնահարցը՝ Պարսոնսը առանձնացնում է այրիմիտիվ, անցումային և արդիականացած հասարակություններին համապատասխանող տասը ունիվերսալիաներ ընդգրկող զարգաց-

ման որոշակի կարգ[88]: Այս տեսակետի էմպիրիկ հիմնավորումը տրվել է ամերիկացի սոցիոլոգներ Գ.Լ. Բակի և Ա.Լ. Ջակոբսոնի կողմից, ովքեր ուսումնասիրելով 50 հասարակություններ՝ ցույց են տվել, որ «հասարակական փոփոխությունն ունի ... էվոլյուցիոն փուլերի որոշակի կառուցվածք կամ հաջորդականություն, որով անցնում է հասարակությունների մեծամասնությունը»[89]: Արդյունքում պարզվել է, որ որոշիչ դեր կատարող փաստը ավանդական տարրերի ու արդիականացած կառույցների հարաբերակցությունն է, նրանց փոխհարաբերությունների արժեքային բովանդակությունը, նոր որակների կուտակման հեռանկարությունը, որը զարգացման գործընթացում ավելի քիչ լարվածության, արդիականացման ճանապարհին համակարգայնությունը չկորցնելու, այն պահպանելու հնարավորություն է տալիս: Նույնքան կարևոր է նաև արդիականացման՝ որպես գիտակցված նպատակի մասին պատկերացումը: Իսկ որպես այդպիսին, արդիականությունը կախված է հասարակությունում անձի արժեքների մասին պատկերացումներից: Որքան ուժեղ են հասարակությունում ավանդական տարրերը, այնքան ուժեղ են լինում արդիականացման գործընթացը ոչնչացնող, կոնկրետ մարդկանց նպատակներից հետո ուղղելու հակումները: Այսպես, օրինակ՝ «...նախկին Խորհրդային Ռուսաստանի ողջ պատմության ընթացքում մարդն օգտագործվում էր որպես ինչ-որ ավելի բարձր, վեհ նպատակների՝ սոցիալիզմի, կոմունիզմի, հասնելու միջոց»[90]: Նախկին ԽՍՀՄ ժողովուրդների համար անցումային շրջանի անհաջողությունները պայմանավորված էին նաև այն փաստով, որ հասարակությունը իրականում պատրաստ չէր հասարակական շերտավորմանը:

Շատ բան կախված է, թե արդիականացումը, որպես հասարակական զարգացում, արհեստակա՞ն, թե՞ բնական գործընթաց է: Որպես արհեստական կարելի է դիտարկել հասարակությունը «փոքի» փոփոխելով զարգացնելու դեպքերը (Պետրոս Առաջին, Նապոլեոն և այլն): Պարտադրված արդիականացումը նախ և առաջ իր բացասական կողմով է անդրադառնում՝ գոյություն ունեցող կառուցվածքների աղավաղմամբ, փլուզմամբ և հետընթացով: Այլ կողմից էլ հարց է առաջանում՝ ո՞րն է արհեստականի ու բնականի միջև սահմանը, երբ դեռ անտիկ աշխարհից տեսակետ կա, որ ընդհանրապես մշակույթն արհեստական երևույթ է:

[88] *Parsons T.* Evolutionary universals in Society // Amer. sociol.rev. N.Y., 1964. Vol. 29, N 3.
[89] Buck G.L., Jacobson A.L. Social evolution and structural analysis: an empirical test // Amer.sociol.rev. N.Y., 1968. Vol. 33, N 3. P. 349.
[90] Наше общество в трех измерениях. В авторской редакции член-корреспондент РАН Н.И. Лапин, канд.филос.наук Л.А. Беляева. М., 1994. с. 32.

Արժեքային համակարգի փոփոխությունները տեղի են ունենում առնվազն երկու ենթամշակույթների՝ հասարակության ինտեգրացիային սպառնացող բախման ֆոնի վրա, որը «բնութագրվում է նրանով, որ հասարակության մեջ բացակայում է զանգվածային բարոյական կերպարը, որը ռեալ կերպով կկարողանար ապահովել բարոյական և կազմակերպչական միասնականությունն»[91]:

Սակայն չպետք է կարծել, թե անցումային հասարակությունում տեղի ունեցող այս փոփոխությունները աննախադեպ են, երեն նույնիսկ այդպես է, ապա՝ միայն մասշտաբներով: Է. Դյուրկհեյմը հետխորհրդային շրջանի իրադարձություններից դեռ հարյուր տարի առաջ (1893 թ.) իր «Հասարակական աշխատանքի բաժանման մասին» աշխատության մեջ այսպես է ներկայացնում իրավիճակը. «Կարճ ժամանակահատվածում մեր հասարակությունների կառուցվածքում խորը փոփոխություններ տեղի ունեցան. նրանք ազատվեցին իրենց հատվածային (սեգմենտար) բնույթից այնպիսի արագությամբ ու մասշտաբներով, որոնց նմանն անհնար է պատմության մեջ գտնել: Այդ պատճառով նրան բնորոշ բարոյականությունը հետընթաց ապրեց, իսկ մեկ ուրիշ բարոյականություն բավականաչափ արագ չէր զարգանում, որպեսզի մեր գիտակցության մեջ նախորդ բարոյականությունից մնացած դատարկությունը լցնի: Մեր հավատը սասանված է, ավանդույթը կորցրել է իր ուժը, անհատական դատողությունն աննշանակ է կոլեկտիվ դատողությունից:

Սակայն մեկ ուրիշ կողմից հեղաշրջման ընթացքում միմյանցից անջատված գործառույթների համար փոխհարմարման ժամանակ դեռ չի եղել. նոր կյանքը դեռ չի կարողացել լրիվ կազմակերպվել նախ և առաջ այնպես, որ կարողանար ամբողջությամբ բավարարել մեր սրտերը համակած արդարության պահանջմունքը»[92]:

[91] Князева Е.И., Курдюмов С.П. Синергетика как новое мировидение: диалог с И.Пригожиным // Вопр. философии. 1992. N 12. с. 27-28.
[92] Дюркгейм Э. О разделении общественного труда. Метод социологии. М., 1991, с. 379.

2.4. ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԸ

Իրական անձը, բնականաբար, ինչ-որ վերացական, տիպական գծերով մեկը չէ, այլ միշտ կոնկրետ մի եզակիություն է, որը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ և իր վրա է կրում այդ գործոնների բազմազանությունը: Այնպես որ խոսելով անցումային հասարակության մեջ անձի հոգեբանական հիմնախնդիրների մասին, պիտի անպայման նկատի ունենանք, թե որ անձի մասին է խոսքը՝ ծերունու, երիտասարդի, մտավորականի, չինովնիկի, գիտնականի, կնոջ, տղամարդու և այլն, և այլն: Ահա այս դեպքում միայն մենք կկարողանանք քիչ թե շատ կոնկրետություն մտցնել մեր հետազոտության մեջ, քիչ թե շատ մոտենալ իրական անձի իրական հիմնախնդիրներին:

Անձի տարիքային զարգացման, հոգեկերտվածքի ու վարքի ձևավորման վրա հասարակական-պատմական պայմանների ազդեցության հարցը հատուկ ընթերության է ենթարկել գերմանացի գիտնական Գ. Թոմեն: Այդ հետազոտությունների ընդհանուր եզրակացությունը հետևյալն է՝ «Տարբեր անհատների զարգացման բոլոր էտապներում հասարակական-պատմական իրավիճակով պայմանավորված վարքային բազմազան փոփոխություններ են տեղի ունենում»[93]: Հասարակական-պատմական ներգործությունները ըստ Թոմեյի որոշում են այսպես կոչված «զարգացման ոճը», որը միանգամայն տարբեր կարող է լինել՝ պայմանավորված հասարակական գործընթացներով: Վերջիններս, ըստ հեղինակի, որոշակի ազդեցություն են ունենում անձի գրեթե բոլոր ենթակառույցների բնութագրերի վրա՝ ինտելեկտի, կոնֆլիկտայնության, ստեղծագործականության և այլն:

Մեզանում գրեթե հետազոտված չէ այն խնդիրը, թե հասարակարգի հեղաշրջումը և կապիտալիստական հարաբերություններին անցումը ինչ ազդեցություն է ունեցել տարիքային տարբեր խմբերի վրա: Այնպես որ ստորև ներկայացվողը ընդամենը հիմնախնդրի ուրվագիծ կարելի է համարել:

Ըստ հոգեբանական բնութագրերի ընդհանրության պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ տարիքային խմբերը՝

1. Երեխաներ /մինչև դեռահասության տարիքը/:
2. Դեռահասներ-պատանիներ /13, 14-20, 21 տարեկան/:
3. Երիտասարդներ/ 22-35, 40 տարեկան/:
4. Միջին հասունության կամ ակմեի շրջանի տարիքային խումբ /40, 45 - 60, 65 տարեկան/:
5. Ուշ տարիքի ներկայացուցիչներ /65-ից բարձր տարիքի մարդիկ/:

Նման բաժանման համար հիմք ենք ընդունել մի շարք չափանիշներ՝ աշխարհայացքի, արժեքային համակարգի, կյանքի ճանապարհների ու ծրագրերի ձևավորվածությունը, որոշակի սոցիալական դիրքի հասած լինելը, մոտիվացիոն համակարգի առանձնահատկությունները և այլն:

Այս տարիքային խմբերից, որքան մեզ հատնի է, միայն դեռահասությունն է մեզանում հասարակության անցումայնությամբ պայմանավորված հիմնախնդիրների տեսանկյունից հատուկ հետազոտության ենթարկվել: Ա. Վարդանյանն իր «Դեռահասությունը անցումային շրջանի հասարակության մեջ» հոդվածում[94] անցումայնությամբ է պայմանավորում դեռահասության և պատանեկության շրջանում այսօր նկատելի ած ունեցող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ վաղ հղիությունը, ծարկոմանիան, պոռնկությունը, հանցագործությունները: Հեղինակը դրանք կապում է այն հանգամանքի հետ, որ կործանվել են նախկին նորմերը, արժեքներն ու գաղափարախոսությունը, բայց չի ձևավորվել նորը[95]: Ըստ մեզ, դեռահասության ու պատանեկության հիմնախնդիրները կապված են ոչ այնքան արժեքային, գաղափարախոսական վակուումի, որքան նյութապաշտական արժեքների բացարձակացման և հոգևորի նսեմացման ու անտեսման հետ: Արժեքային վակուումը ավելի շատ բնորոշ էր հետհեղափոխական շրջանին /նկատի ունենք ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած շրջանը/, որին շատ արագ հաջորդեց բացարձակ նյութապաշտությունը: Այնպես ինչպես ցանկացած բացարձակացում, ծայրահեղություն, նյութապաշտությունն էլ բերեց իր յուրահատուկ հիմնախնդիրները: Եվ եթե հասուն մարդիկ, ովքեր նախքան հեղափոխությունն ունեին որոշակի հոգևոր արժեքներ և արժեքափոխությունից հետո կանգնեցին ընտրության առաջ, ապա դեռահասությանը, որի կարևոր տարիքային բնութագրերից է արժեքների ձևավորումը, մատուցվեց մեկ գերագույն արժեք՝ փողը, որին ստորադասվում են մնացած բոլորը: Այսօրվա պատանու հոգեբանության մեջ ավելի ու ավելի է ամրապնդվում փողի կուլտը, դե-

[93] Томэ Г. Теоретические и эмпирические основы психологии развития человеческой жизни. В кн. Принцип развития в психологии. Ред. А.И. Анциферова, М. Наука, 1978, с. 175.

[94] Вартанян А. Подростничество в обществе переходного периода. В сб. Современные проблемы прикладной психологии. Ред. Н. Акопян. Ер. 2007:

[95] Նույն տեղում:

ռահասը մասամբ գիտակցաբար, բայց ավելի հաճախ ենթագիտակցաբար ընկալում է իրեն, այլ մարդկանց և նույնիսկ մշակույթը, հոգևորը որպես ապրանք, որը կարելի է վաճառել, գնել հնարավորինս ձեռնտու գնով: Այստեղից էլ պոռնկության աճը, թմրաբիզնեսի կտրուկ զարգացումը(առաջարկն է ծնում պահանջարկը), խաղամոլության կտրուկ աճը, ահռելի ու անմակարդակ երաժշտության ու երգիչների գերակայությունը և այլն:

Նյութապաշտությունն իր հետ բերում է բարոյական ոլորտի, հոգևորի, մշակույթի կտրուկ անկում, համընդհանուր անմակարդակություն, ինչից այսօր այդքան դժգոհում է ավագ սերունդը:

Մյուս տարիքային խումբը՝ երիտասարդությունը, հարաբերականորեն ավելի պաշտպանված մտավ անցումային փուլ: Նրանց մեջ արդեն ձևավորված էր որոշակի արժեքային համակարգ, նրանք կրում էին իրենց մեջ խորհրդային կրթությամբ պայմանավորված (որն ի դեպ, աշխարհում լավագույններից էր) ինտելեկտուալ հասարակության ներուժը և զարգացածության մակարդակը, ոգևորված էին նախահեղափոխական շրջանի գորբաչովյան ազատական գաղափարներով, բայց միևնույն ժամանակ զերծ էին խորհրդային մտածելակերպի ու կենսակերպի կործրատիպերից: Այս սերնդի հոգեբանական առանձնահատկությունները ակտիվ, վերակառուցողական գործունեության լայն հնարավորություններ էին ընծեռում և, ըստ էության, հենց այս տարիքային շերտը որոշիչ դեր խաղաց հեղափոխության և հետհեղափոխական փոփոխությունների իրականացման գործում: Այս սերունդը կարողացավ դրսևորել ավերման ու արարման այն ներուժը, առանց որի հնարավոր չեն սոցիալական վերակառուցումները[96]: Բայց միևնույն ժամանակ հիմնականում այս սերնդի ներկայացուցիչներ հանդիսացող իշխանությունները, կառավարման փորձի, հմտությունների բացակայության, հետհեղափոխական շրջանի քաոսը կանխատեսելու անընդունակության, իշխանությանը պատրաստ չլինելու, ինչպես նաև պատեհապատշաճ և հետպատերազմական իրադրության հետևանքով չկարողացավ ապահովել հարաբերականորեն սահուն, աննգնաժամային վերակառուցում: Արդյունքում անցումը խիստ ցավոտ, սուր, ճգնաժամային ընթացք ստացավ, իսկ սերունդն առաջինը հենց ինքը արագորեն մուտացիայի ենթարկվեց, կորցնելով այն արժեքները, որոնցով ձեռնամուխ էր եղել հեղափոխության:

[96] Штомпка П. Социология социальных изменений. // Социальная психология: Хрестоматия: Учебное пособие для студентов вузов/Сост. Е.П. Белинская, О.А. Тихомандрицкая. — М: Аспект Пресс, 2003. 475 с. с. 182-200.

Միջին հասունության (40,45-60,65) տարիքային խմբի ներկայացուցիչները իճչպես հոգեբանական, այնպես էլ սոցիալական առումներով արդեն լիովին կայացած մտան հեղափոխական շրջան: Մի կողմից հենց այս սերունդն էր հեղափոխության առաջատար ուժը և գաղափարախոսը, մյուս կողմից այս սերունդն իր վրա կրեց հեղափոխական փոփոխությունների ողջ ծանրությունը: Այս սերնդի ներկայացուցիչներին կարելի է բաժանել երկու խմբի՝ հարմարվածների և չհարմարվածների: Առաջիններն արագորեն վերակառուցվեցին՝ հարմարվելով նոր պայմաններին և հայտնվելով իշխանական թևում, իսկ երկրորդները չհարմարվելով խաղի նոր կանոններին կամ լքեցին հանրապետությունը կամ հայտնվեցին հոգեբանական և սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամի ու օտարման մեջ: Այս ճգնաժամի կարևոր բնութագիրը արժեքային բախումն էր՝ այն արժեքները, որոնցով այս սերնդի ներկայացուցիչները մտան հեղափոխության մեջ և այն արժեքները, որ ձևավորվեցին հետհեղափոխական շրջանում հիմնական բովանդակությամբ իրար հակասում էին. դա բախում էր հեղափոխության շրջանի հայրենասիրության, ազատության, դեմոկրատիայի, արդարության արժեքների ու հետհեղափոխական շրջանի նյութապաշտության, ամեն գնով իշխանության հասնելու և իշխանությունը թալանի, փող ձեռք գցելու միջոց դարձնելու, ցուփ ու շվայտ կյանքը առաջատար արժեք դարձնելու միջև:

Սերունդների բախումը փոխակերպվող հասարակության մեջ: «Սերունդ» հասկացությունը բնութագրվում է որպես որոշակի տարիքային սահմաններում գտնվող հասակակիցների խումբ, որին բնորոշ են անձի ձևավորման ընդհանուր պայմանները, ժամանակաշրջանը, կենսափորձը, միևնույն տարիքային խնդիրների վրա կենտրոնացածությունը, սոցիալական դերերի ու ֆունկցիաների, արժեքային համակարգի, տարիքային հոգեբանական բնութագրերի ընդհանրությունը[97]: Սերունդների հաջորդականությունը, ժառանգորդությունը հասարակության զարգացման կարևոր պայման է: Սերունդներն իրար հետ գտնվում են դիալեկտիկական միասնության և պայքարի մեջ, դա այսպես կոչված հայրերի և որդիների պայքարն է, որ բնորոշ է ցանկացած հասարակության ու ցանկացած ժամանակաշրջանի: Սակայն այդ պայքարը յուրահատուկ բնույթ է ստանում փոխակերպվող հասարակության մեջ: Այդ կոնֆլիկտի կապակցությամբ Վ.Տ. Լիսովսկին գրում է. «...այն վերաբերում է հասարակության և անձի զարգացման փիլիսոփայական, աշխարհայացքային, հոգևոր հիմքերին, տե-

[97] Вишневский Ю.Р., Шапко В.Т. Социология молодежи. Н.Тагил, 1995. с. 40.

տեսության և արտադրության, հասարակության նյութական կյանքի տեսակետներին: «Հայրերի» սերունդը հայտնվել է այնպիսի մի իրավիճակում, որ իր ժառանգորդներին հոգևոր և նյութական ժառանգություն գործնականում չի կարող տալ...առկա է սերունդների խզում, որն արտացոլում է պատմական զարգացման խզումը»[98]: Այս խզումը և դրա հետևանքով բախումը նախ և առաջ առկա է արժեքային համակարգում: Այդ բախումն ավելի ակնհայտ է հոգևոր արժեքների ոլորտում: Ավագ սերունդը քննադատում է կրտսեր սերնդին առավելապես հոգևոր և գեղագիտական արժեքների բացակայության համար, բայց միևնույն ժամանակ գործնականում ինքն էլ ղեկավարվում է պրագմատիկ արժեքներով, մասնավորապես նյութապաշտությամբ: Թերևս այդ է պատճառը, որ ավագ և կրտսեր սերունդների արժեքների էմպիրիկ հետազոտությունները էական տարբերություններ չեն բացահայտում[99]: Ավելին, մեզանում, կարելի է ասել, որ կրտսեր սերունդն իր արժեքները, որոնք ի դեպ, հաճախ քննադատվում են ավագ սերնդի կողմից, վերցրել է հենց ավագ սերնդից: Այսօր ավագ սերունդը հիմնականում ղեկավարվում է արևմուտքի արժեքներով, փորձում է ամեն ինչով նմանակել Եվրոպական գոյածևը: Սակայն ինչպես իրավացիորեն նշում է Վ. Գորոզիան. «Արևմտյան քաղաքակրթության մարդու կյանքի իմաստը կյանքի բարեհարմարությունն է և նյութական պահանջմունքների առավելագույն բավարարումը»[100]: Այս իմաստն ընդունելով որպես գոյության սկզբունք և ապրելակերպի հիմք, ավագ սերունդը հաճախ փորձում է երիտասարդներին այլ արժեքներ մատուցել, մոռանալով, որ արժեքները քարոզներով չեն ընդունվում, այլ մարդկանց գոյածևի իմաստավորմամբ:

[98] Лисовский В.Т. Духовный мир и ценностные ориентации молодежи России: Учебное пособие. СПб.: СПбГУП, 2000. с. 20.

[99] Նույն տեղում:

[100] Горозия В.Е. Основные факторы философско-социологического осмысления бытия человека в современных условиях // Человек постсоветсткого пространства: Сборник материалов конференции. Выпуск 3 / Под ред. В.В. Парцвания. — СПб.: Санкт-Петербургское философское общество, 2005, с. 188.

2.5. ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐՋԱՆՈՒՄ

Որպես խորհրդային ռեժիմի բացասական կողմ և փլուզման պատճառներից մեկը համարվում էր անձի ազատության սահմանափակությունը, որը պայմանավորված էր պետության տոտալիտար բնույթով: Դեմոկրատիան ու լիբերալիզմը դարձան այն արժեքները, հանուն որոնց ժողովուրդը ոտքի կանգնեց ու պայքարի մեջ մտավ խորհրդային ռեժիմի դեմ: Քաղաքական կառավարման այս երկու տեսությունների կարևորագույն բաղադրիչը անձի ազատությունն է: Ըստ որում, ըստ փիլիսոփա Ն. Բոբիոյի այս երկու գաղափարախոսությունները ազատությունը տարբեր կերպ են մեկնաբանում: Լիբերալիստական գաղափարախոսությունը ազատությունն ընկալում է որպես անձի ազատություն պետության կողմից դրվող սահմանափակություններից, իսկ դեմոկրատական մոտեցումը անձի ազատությունը դիտարկում է որպես ենթարկվում այն օրենքներին, որոնց ստեղծմանը մասնակցել է անձը: Մենք լիբերալ ենք համարում նրան, - գրում է հեղինակը, - ով ձգտում է ավելի ու ավելի ընդլայնել չարգելված գործողությունների ոլորտը, այն դեպքում, երբ դեմոկրատը, ըստ մեզ, նա է, ով նպաստակ է դնում նպաստել այն գործողությունների շատացմանը, որոնք կարգավորվում են ինքնառեգլամենտացիայի հիման վրա»[101]: Ինչևէ, քաղաքական կառավարման նոր համակարգը, որ ձևավորվեց հետխորհրդային շրջանում, չնայած անկազմակերպվածությամբ պայմանավորված իր բոլոր թերություններին, այնուամենայնիվ նկատելիորեն ընդլայնեց ազատության այս երկու ձևերն էլ և՛ քաղաքական, և՛ քաղաքացիական, և՛ տնտեսական ոլորտներում: Անձը հանկարծակի հայտնվեց ազատության այնպիսի դաշտում, այնպիսի մասշտաբների մեջ, որին չնայած ձգտում էր, բայց այնուամենայնիվ դեռ բավարար չափով պատրաստ չէր: Դա ըստ մեզ հանգեցրեց երկու հետևանքի՝ մի կողմից ամենաթողության ու անարխիայի, որին ավելի հակված էր հարաբերականորեն օրենքից դուրս ապրող հասարակության շերտը (քրեական տարրը, օրենքի հետ խնդիրներ ունեցող այլ խավեր) և մյուս կողմից կտրուկ անկման հասարակության այն շերտերում, որոնց պետական խնամատարությունը աստիճանաբար չափեր ուներ խորհրդային շրջանում (ասենք, թոշակառուներ, վիտության, արվեստի ներկայացուցիչներ և այլն): Այլ կերպ ասած, հետխորհր-

[101] Bobbio N. Kant e le duel liberta. En jd: Da Hobbes a Marx Napoles. 1965. p. 147.

դային անձը սովոր չէր ազատ ապրել, և անցումայնության կարևոր բնութագրերից մեկը կարելի է համարել այն, որ մարդը սկսում է սովորել ազատ ապրել՝ հույսը դնել իր վրա, ինքնուրույն որոշումներ կայացնել, իրականացնել, անօթևնել սեփական կյանքն ու պատասխանատու լինել այս ամենի համար: Ինչպես հայտնի է էքզիստենցիալ փիլիսոփայության և հոգեբանության մեջ մարդու ազատությունը համարվում է նրա տեսակային կարևորագույն բնութագրերից մեկը (Վիկտոր Ֆրանկլ և ուրիշներ): Մարդն ազատ է բնազդներից, հասարակությունն ու պետությունն այլևս չունի կարծրատիպերի, ավանդույթների այն համակարգը, որով կառավարում էր իր անդամների կյանքը: Առաջին հայացքից սա դրական իրողություն է, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ֆրանկլը, մարդիկ հաճախ խուսափում են այս ազատությունից, քանի որ այն մարդուն պարտադրում է ևան ինքնուրույն կողմնորոշում իրականության մեջ, որոշումների ընդունում և պատասխանատվություն[102]: Իսկ դրանց շատերը պատրաստ չեն: Արդյունքը, ըստ Ֆրանկլի, հասարակության ենթոտիպացիան է: Ինչպես նշում է հեղինակը այն հասարակություններում, որտեղ ազատությունը սահմանափակված է, իշխում են ավանդույթները կամ տոտալիտար գաղափարախոսությունն ու օրենքները ենթոզները մի քանի անգամ ավելի քիչ են[103]: Եվ իսկապես, խորհրդային շրջանում հասարակության ենթոտիպացիայի մակարդակը խիստ ցածր էր ու, թերևս, հենց այդ պատճառով էր, որ հոգեթերապևտիան, որպես ենթոզների բուժման հիմնական մեթոդ, խորհրդային բուժական համակարգում հազվադեպ երևույթ էր: Սկսած վերակառուցման շրջանից մինչև հիմա հասարակության ենթոտիպացիայի մակարդակը գնալով աճում է, և դա ըստ մեզ նախ և առաջ պայմանավորված է Վ. Ֆրանկլի նշած մեխանիզմով, ազատության հետևանքով: Անշուշտ, հասարակության ենթոտիպացիան պայմանավորված է ևան անցումային հասարակության անկայունությամբ, անընդհատ փոփոխվող գոյապայմաններով, մի հասարակարգից, մի մտածելակերպից, արժեքային համակարգից, միջանձնային հարաբերությունների ստերեոտիպերից մյուսին անցման հիմնախնդիրներով, սակայն այնուամենայնիվ գլխավոր պատճառն, ըստ մեզ, հենց ազատության դաշտի կտրուկ ընդլայնումն է:

Ի հարկե, պետք է ասել, որ մեր ազգի համար, որի կարևոր բնութագրերից մեկն ինդիվիդուալիզմն է, ազատության դաշտը զարգացման ավելի նպաստավոր գոյապայման է, սակայն ազատության պտուղներից հաջողությամբ օգտվելու համար անհրաժեշտ է մի կողմից լիովին թոթափել անցյալի մնացուկ հանդիսացող «ստրկական» հոգեբանության ազգային գծերը, մյուս կողմից ընկալել պետությունը որպես սեփական պետություն և ոչ թե օտար ու թշնամական, ինչպես անցյալում էր:

Դեռևս պետք է հետազոտվի, թե ազատության գիտակցությունը ինչ կոնկրետ դրսևորումներ ունի անձի համար, ինչպիսի դրական ու բացասական կողմեր ունի, իսկ այսօր առայժմ ավելի հաճախ բախվում ենք ազատության բացասական հետևանքներին: Վերջինիս ամենակարևոր բնութագիրը կարելի է համարել պատասխանատվության անտեսումը: Ազատությունը պատասխանատվության բացակայության պարագայում վերածվում է ամենաթողության՝ վնասելով ինչպես անձին, այնպես էլ հասարակությանը: Այսպես, ազատությունը արվեստում, գրականության մեջ ի հայտ է բերում զանազան գռեհկաբանություններ ու անճաշակություններ, հեղինակները կարծես պատասխանատվություն չեն զգում իրենց ստեղծածի ու կատարածի որակի, ստեղծագործության ընկալման համար: Անպատասխանատու ազատությունը մամուլում, հեռուստատեսության մեջ ծնում է ստահոդություն, չափի զգացման կորուստ, քաղաքականության մեջ՝ բազմաթիվ անհմաստ կուսակցություններ ու քաղաքական գործիչներ, քաղաքական գործընթացների աղավաղում, բարոյականության ոլորտում՝ բարոյական անկում, հանցագործություններ և այլն և այլն:

Հավատքի դաշտում ազատությունը որոշակի դրական դրսևորումներ ունեցավ, ժողովուրդը կարծես վերագտավ Մայր Եկեղեցին, որը դարեր շարունակ մեր ազգի պահպանման կարևորագույն հիմքերից էր: Սակայն շատ շուտով, նույն հավատքի ազատությունը խթանեց բազմաթիվ աղանդների ձևավորումը, ինչն այսօր լուրջ վտանգ է հանդիսանում ինչպես Մայր Եկեղեցու, այնպես էլ մեր պետականության ու ազգային ինքնագիտակցության համար:

2.6. ԱՆՁԻ ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Անցումային հասարակությունն ըստ էության մարգինալ բնույթ ունի և անցումը, ինչ-որ տեղ կարելի է բնութագրել որպես մարգինալության հաղթահարման գործընթաց: Այդ իսկ պատճառով այսօր, հետխորհրդային հանրապետություններում մարգինալության հիմնախնդիրը սոցիոլոգիայում և սոցիալական հոգեբանության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում և բազմակողմանիորեն

[102] Франкл В. Человек в поисках смысла. М., Прогресс, 1990.
[103] Նույն տեղում:

հետազոտվում է[104]: Հնարավորություն չունենալով մանրամասն անդրադառնալ այս կարևորագույն հիմնախնդրին, այնուամենայնիվ նպատակահարմար ենք համարում համառոտակի կանգ առնել մարգինալության ընդհանուր տեսական հարցերին, ինչպես նաև մեզանում այս երևույթի դրսևորումներին:

Մարգինալությունը սոցիալական հոգեբանության մեջ սովորաբար բնութագրվում է որպես «...հարաբերականորեն կայուն այն սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական երևույթները, որոնք առաջանում են տարբեր մշակույթների, էթնիկական համայնքների, սոցիալական կառուցվածքների փոխգործողության սահմանագծում, որի արդյունքում սոցիալական սուբյեկտների, էթնոկիրների որոշակի մասը հայտնվում է դրանց միջակայքում կամ դրանց սահմաններից դուրս»[105]: Ըստ որում մարգինալությունը դիտվում է նորմատիվ երևույթ ցանկացած փոխակերպվող հասարակության մեջ[106]: Այն նույնիսկ կարելի է դիտել որպես ցանկացած զարգացման գործընթացի բաղկացուցիչ մաս (ասենք, տարիքային զարգացման մեջ, անցումային շրջաններում):

Սոցիոլոգիայում առանձնացվում է սոցիալական խմբի մարգինալացման երեք ոլորտ.

1. Տնտեսական - բնութագրվում է տնտեսական ակտիվության դեպրիվացիայով:

2. Քաղաքական - հեռացվածություն քաղաքական ակտիվություններից:

3. Սոցիալական - հասարակական դիրքի կորուստ, ապադասակարգայնություն, ստիգմատիզացիա[107]:

Ն. Հակոբյանն ու Վ. Սարգսյանն առանձնացնում են անցումային հասարակության մեջ մարգինալացման գործընթացի հետևյալ փուլերը.

1. Զարգացման նոր միտումները ծագում են հին գերիշխանության պայմաններում: Այս շրջանում մերժվում է հինը, անվերապահ արժեզրկվում են հին կարգերը, հարաբերությունները, գաղափարախոսությունը:

2. Այս փուլը բնութագրվում է հինի ու նորի պայքարով, ինչի հետևանքով առաջ է գալիս անկայունության իրադրություն, սոցիալական ցնցումները հաջորդում են իրար: Գերիշխում են ապակառուցողական տրամադրությունները, հասարակությունը հայտնվում է ծայրահեղ ֆրեուստրացվածության մեջ: Այս շրջանում մարգինալացումը հասնում է իր գագաթնակետին:

3. Այս փուլում զարգացման նոր միտումները դառնում են գերիշխող, նոր կարգերը, հարաբերությունները, գաղափարախոսությունը անշրջելիորեն հաղթանակ են տանում, սակայն հինը դեռևս շարունակում է գոյատևել: Այս շրջանում սկիզբ է առնում ապամարգինալացման գործընթացը[108]:

Մարգինալության աստիճանի հիմնախնդրին անդրադարձել է Բ. Մանչինին: Ըստ հեղինակի մարգինալացման մակարդակը պայմանավորված է այն բանով, թե սոցիալական իրավիճակը, որի մեջ հայտնվել է մարդը ինչ տեղ է գրավում նրա կյանքում: Հեղինակն առանձնացնում է մարգինալացման մակարդակի որոշման հետևյալ չափանիշները:

1. Իրավիճակի փոփոխականությունը- որքան ավելի կայուն է մարգինալության առաջ բերող իրավիճակը այնքան ավելի բարձր է մարգինալությունը:

2. Որքան ավելի մեծ է կենսաբոնական մարգինալ իրավիճակի և անձի նույնականության տարբերությունը, այնքան ավելի ցածր է հարմարումը:

3. Որքան ավելի նկատելի է անձի օբյեկտիվ, ուրիշների համար տեսանելի մարգինալության դրսևորումը, այնքան ավելի ցածր է հարմարումը:

4. Որքան ավելի մեծ է մշակութային կոնֆլիկտը, այնքան ավելի բարձր է մարգինալացումը:

5. Որքան ավելի մեծ է այն քաղաքական և սոցիալական սուբյեկտ հանդիսացող խմբերի բախումը, որոնց միջև հայտնվել է անձը, այնքան ավելի դժվար է հարմարումը:

6. Որքան ավելի մեծ է անձին խմբում ընդունելու խոչընդոտը, այնքան ավելի դժվար է հարմարումը:

7. Եթե հավասարազոր է մարդու նույնականության մակարդակը միաժամանակ երկու խմբերի հետ (երկակի նույնականություն), որոնց միջև նա գտն-

[104] Հակոբյան Ն. Մարգինալության ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական տեսանկյունը. Հոգեբանությունը և կյանքը, 1-2 , 2004, Попова И.П. Маргинальность. Социологический анализ: Учебное пособие. - М.: Союз, 1996, Прибыткова И. Мы не маргиналы, маргиналы не мы? // Философская и социологическая мысль. Украинский научно-теоретический журнал. 1995. № 11-12. Маргинальность в современной России. М.: 2000 և ուրիշներ:

[105] Հակոբյան Ն. Մարգինալության ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական տեսանկյունը. Հոգեբանությունը և կյանքը, 1-2 , 2004, էջ 77:

[106] Горбач А. Н. Маргинализм как социокультурный феномен / Знание, Культура, Власть: Проблемы философского осмысления. - Харьков: ХГУ, 1993.

[107] *Raban h.* Marginalisierung und Wohlfahrsstaat — von der theorie zur Praxis // Marginalisierung im Sozialstaat: Beitr. aus Grossbritannien u. der Bundesrep. / Autorengruppe: Blahusch F., Gekeler G., Mitchell M. et al. Marburg: Verl. Arbeiterbewegung u. Gesellschaftswiss., 1986. S. 9.

[108] Հակոբյան Ն.,Սարգսյան Վ. Արժեքային համակարգի այլափոխումները փոխակերպվող հասարակությունում, Հոգեբանությունը և կյանքը, 1-2, 2006, էջ 5-6:

վում է, այնքան ավելի դժվար է հարմարումը:

8. Որքան ավելի պարտադրված է մարգինալությունը, այսինքն ազատ ընտրությամբ չէ պայմանավորված, այնքան ավելի դժվար է հարմարումը[109]:

Անձի մակարդակում մարգինալության հոգեբանական դրսևորումը ճկաբաղդվել է մի շարք հեղինակների կողմից: Այսպես, ըստ Տ. Շիբուտանիի մարգինալ անձին բնորոշ են կասկածները սեփական անձի արժեքի մեջ, մերժված լինելու տագնապները, անորոշությունը ընկերների հետ հարաբերություններում, հիվանդագին ամաչկոտություն, չափից դուրս երազկոտությունը, միայնակությունը, համոզվածությունը, որ մարդիկ իր հետ անարդար են վարվում, ապագայի ճկատմամբ տագնապներն ու անորոշությունը և այլն[110]: Մեկ այլ հեղինակ՝ Է. Սթոունքվիստը ներկայացնում է հետևյալ բնութագրերը՝ անկազմակերպ լինելը, անհաջողակության զգացողությունը, տագնապայնությունը, լարվածությունը, մեկուսացածությունը և օտարվածությունը, անմասնակից լինելը, ճնշվածությունը, հիասթափվածությունը և հուսահատությունը, անիմաստության զգացողությունը, եսակենտրոնությունը և ագրեսիվությունը[111]:

Մարգինալ անձի դրական կողմերին է անդրադառնում մարգինալության կոնցեպցիայի հիմնադիր Ռոբերտ Փարքը: Մարգինալության վիճակը, ըստ հեղինակի, հանգեցնում է մտահորիզոնի ընդլայնմանը, իմունիտետի զարգացմանը, ավելի ինքնուրույն ու ռացիոնալ տեսակետների ձևավորմանը, մարգինալ անձը, ըստ Փարքի, ավելի քաղաքակիրթ էակ է[112]:

Պետք է ասել, իհարկե, որ վերոհիշյալ հեղինակներն իրենց հետազոտություններն իրականացրել են մշակութային մարգինալության ոլորտում, հիմնականում գաղթականների առընչությամբ: Քննականաբար մարգինալության իրավիճակում հայտնվում են ոչ միայն գաղթականները, հասարակական փոխակերպումները նույնպես լավ հող են մարգինալ անձանց ու խմբերի ձևավորման

[109] Mancini B.J. No owner of soil: The concept of marginality revisited on its sixtieth birthday // Intern. rev. of mod. sociology. New Delhi, 1988. Vol 18. № 2.
[110] *Шибутани Т.* Социальная психология. М., 1969. С. 475.
[111] Ցիտ. ըստ՝ *Феофанов К.А.* Социальная маргинальность: характеристика основных концепций и подходов в современной социологии. (Обзор) // Общественные науки за рубежом. РЖ серия 11 Социология. М., 1992, № 2. с. 70-83.
[112] Ցիտ. ըստ՝ *Баньковская С.П.* Роберт Парк // Современная американская социология / Под ред. В. И. Добренькова. М., 1994. с. 11.

համար[113]: Ըստ ամերիկացի գիտնականի Է. Հյուզի «Մարգինալությունը...կարող է ի հայտ գալ ամենուր, ուր տեղի են ունենում բավականաչափ սոցիալական փոփոխություններ, որոնց արդյունքում հայտնվում են անորոշ սոցիալական նույնականություն ունեցող մարդիկ...»[114]:

Այսպես, Ե. Ստարիկովը քննելով հետխորհրդային Ռուսաստանի սոցիալական իրավիճակը, այն գնահատում է որպես մարգինալ՝ պայմանավորված սոցիալական կառուցվածքի անորոշությամբ[115]: Ըստ հեղինակի, հենց այս մարգինալությամբ են պայմանավորված Ռուսաստանում ընթացող հիմնական սոցիալական գործընթացները:

Փոխակերպվող հասարակության մեջ որպես մարգինալության ձևավորման կարևոր հանգամանք է նշվում սոցիալական շարժունության(մոբիլության) բարձր մակարդակը: Մ. Բուրլուցկայան սոցիալական շարժունությունը բնութագրում է որպես մարդկանց տեղաշարժը սոցիալական մի դիրքից մեկ ուրիշի[116]: Դրա հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում մարդու դերային համակարգում, նույնականության մեջ, արժեքային ոլորտում, միջանձնային հարաբերությունների մեջ: Հենց այդ փոփոխությունների շնորհիվ էլ մարդը դառնում է մարգինալ: Փոխակերպվող հասարակության մեջ այսպես կոչված ստատուսային տեղաշարժերը առնչի մասշտաբներ են ձեռք բերում՝ սոցիալական ամբողջ շերտեր, խավեր, մարդկանց խմբեր փոխում են իրենց դիրքերը՝ ասենք, մեզանում գիտնականների մի ստվար զանգված վերածվեց բաղաքական գործիչների, բիզնեսմենների, գործազրկությունը դիրքային նշանակալի փոփոխություններ առաջ բերեց մտավորականության, բանվոր դասակարգի շրջանում, գյուղում սոցիալ-տնտեսական ծանր պայմանները գյուղացիներին ստիպում էին լքել գյուղը, տեղափոխվել քաղաք ու գրաղվել, ասենք, առևտրական գործունեությամբ: Եվ այս ամենը մասսայական բնույթ էր կրում, արդյունքում հասարակության մարգինալացումն էլ համընդհանուր բնույթ սկ-

[113] *Навджавонов Н.О.* Проблема маргинальной личности: постановка задачи и определение подходов// Социальная философия в конце XX века. Деп. рук. М., 1991. с. 149.
[114] *Hughes E.C.* Social change and status protest: An essay on the marginal man // Phylon-Atlanta, 1945. Vol. 10, N 1 p. 63.
[115] *Стариков Е.* Социальная структура переходного общества (опыт инвентаризации) // Полис. 1994. № 4.
[116] Бурлуцкая М.Г. Маргинальность и социальная мобильность // Маргинальность в современной России. 73-83. с. 75.

սեց կրել: Մարդիկ ստիպված էին յուրացնել իրենց համար միանգամայն նոր, հաճախ նաև օտար սոցիալական դերեր, գործունեության ձևեր, կենսագործունեության սկզբունքներ, արժեքներ: Անշուշտ դա ստեղծագործական գործընթաց է[117], սակայն մյուս կողմից հասարակության մեջ լուրջ դժվարություններ ու խնդիրներ հարուցող հանգամանք է: Ծոիքապետելով գործունեության տվյալ ոլորտի «խաղի կանոններին», սկզբունքներին, նորմերին ու արժեքներին, անմիջապես գործունեության մեջ սովորելով, մարդիկ բազում, հաճախ ճակատագրական սխալներ էին թույլ տալիս: Ասենք, երբևէ կազմակերպական աշխատանքով չզբաղված, այդ ոլորտում զբոսական ընդունակություններով մեկը, հայտնվում էր բարձր պաշտոնի՝ ավերելով թե տվյալ ոլորտը և նտադարձ հարվածի շնորհիվ նաև սեփական անձը (ինքնագնահատականի, ինքնահարգանքի անկում, բարոյական դեգրադացիա և այլն): Հոգեբանական առումով նման իրավիճակում հայտնված մարդը կարող է հայտնվել յուրահատուկ էքզիստենցիալ, հաճախ չգիտակցվող ճգնաժամի մեջ ու չնայած արտաքին բարեհարմար տպավորությանը, ներհոգեկան ոլորտում կարելի է ականատես լինել լուրջ հիմնախնդիրների: Հոգեբանական խորհրդատվության շրջանակներում մենք հաճախ էինք բախվում հենց մարգինալության հետևանքով հոգեկան լուրջ պրոբլեմների առաջ կանգնած մարդկանց: Եթե փորձենք ընդհանրացնել այդ փորձը, ապա հոգեբանի կաբինետում հայտնված «մարգինալին» կարելի է տալ հետևյալ բնութագրերը.

1. Հուզական ոլորտում բարձր տագնապայնություն, դեպրեսիվ վիճակ, որոնք սուբյեկտիվորեն ընկալվում են որպես անընդհատ լարվածություն, հոգնածություն, անտրամադիր վիճակ ու անտարբերություն:

2. Կոգնիտիվ մակարդակում՝ կյանքի անիմաստության զգացում, պեսիմիստական մտածելակերպ:

3. Բարոյական ոլորտում հաճախ կարելի է բացահայտել պարզորոշ չգիտակցվող մեղքի զգացում:

4. Վարքային ոլորտում հաճախ կարելի է բացահայտել դեստրուկտիվ միտումներ, ասենք ալկոհոլամոլության ձևով:

5. Միջանձնային հարաբերությունների ոլորտում բարձր է կոնֆլիկտայնությունը:

6. Ես համակարգում ինքնագնահատականի անկում, երբեմն թույլ արտահայտված դեպերսոնալիզացիոն վիճակներ (կարծես այս ամենն ինձ չի վերաբերվում, ես ինձ չեմ ճանաչում), երկատվածության զգացողություն:

Վերջին կետում ներկայացված վիճակն այսպես կոչված սոցիալական նույնականության խախտման արդյունք է: Սոցիալական նույնականության կոնցեպցիան նախորդ դարի 70-ականների սկզբներին մշակվել է Հ. Թաջֆելի և Ջ. Թըրների կողմից[118]: Ջ. Թըրները տալիս է «սոցիալական նույնականություն» հասկացության հետևյալ սահմանումը. «Սոցիալական նույնականությունը ոլորշակի սոցիալական խմբի պատկանելու ամհատական գիտելիքն է, որն ունի հուզական և գնահատողական նշանակություն...»[119]: Սոցիալական նույնականությունն արդյունք է սոցիալական կատեգորիզացիայի, որը մարդուն շրջապատող հասարակական միջավայրը համակարգելու միջոց է[120]: Սոցիալական նույնականությունը կարող է դրական կամ բացասական լինել, ինչը մեծապես պայմանավորված է հասարակության մեջ առկա գնահատականներով[121]: Այն կարող է լինել նաև անորոշ, մարդը կարող է նույնականության յուրահատուկ չփոր ապրել, կարող է ի հայտ գալ նույնականության կոնֆլիկտ[122], նույնիսկ ճգնաժամ[123]: Վերջին իրողություններն էլ հենց բնորոշ են փոխակերպվող հասարակությանը: Սոցիալական նույնականության անորոշությունն ի հայտ է գալիս, երբ մարդը հայտնվելով մարգինալ իրավիճակում գործառում է միաժամանակ մի քանի սոցիալական խմբերում ու դժվարանում է նույնացնել իրեն դրանցից որևէ մեկի հետ կամ հասարակական տեղաշարժերի հետևանքով անձը կորցնում է նախկին սոցիալական նույնականությունները, իսկ նորերը դեռևս չեն ձևավորվել: Նման իրավիճակում մարդը կարծես չգիտի իր տեղը հասարակության մեջ: Գրականության մեջ ավելի հաճախ օգտագործվում է «սոցիալական նույնականության ճգնաժամ» հասկացությունը:

[117] Նույն տեղում:

[118] Tajfel H. Social identity & intergroup relations. Cambridge, Paris. 1982, Turner J. Social categorization and the self-concept: a social cognitive theory of group behaviour//Advances in Group Processes/Ed. E. Lawer. 1985. V. 2. p. 77—121.

[119] Turner J. Social categorization and the self-concept: a social cognitive theory of group behaviour//Advances in Group Processes/Ed. E. Lawer/. 1985. V. 2. p. 77.

[120] Նույն տեղում:

[121] Агеев В.С. Межгрупповое взаимодействие: социально психологические проблемы.- М.: МГУ, 1990.

[122] Proudford K. L., Smith K.K. Group Membership Salience and the Movement of Conflict: Reconceptualizing the Interaction Among Race, Gender and Hierarchy // Group and Organizational Management 28, no. 1, 2003, pp. 18-44.

[123] Павленко В.Н. Разновидности кризиса социальной идентичности в Украине. Этническая психология и общество. М.: Старый Сад, 1997. с. 88—97.

Ն.Ս. Լեբեդևան, ճգնաժամը բացատրում է նախկին սոցիալական նույնականությունների իմաստազրկմամբ և նորերի փնտրտուքով: Հեղինակը շեշտը դնում է ճգնաժամի էքզիստենցիալ կողմի վրա, ինչ-որ տեղ այն դիտելով որպես իմաստի ճգնաժամ[124]: Նման մոտեցումն անշուշտ արդարացված է, իմաստի ճգնաժամը կարող է ի հայտ գալ ամենատարբեր պատճառներով ու հատկապես արժեքային համակարգի ցնցումներով[125]: Մեր այսօրվա հասարակության մեջ հաճախ կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր անցյալում ներդրված էին որոշակի գործունեության, ասենք արվեստի, գիտության, իմաստավորում էին սեփական գոյությունն այդ գործունեությամբ՝ գնահատելով այն որպես առաջնային արժեք, սակայն սոցիալական պայմանները, նոր արժեքների հաստատվելը արժեզրկելով այդ գործունեությունը, ստիպել են մարդուն հայտնվել իր համար միանգամայն նոր և օտար գործունեության մեջ: Նման մարդիկ, նույնիսկ եթե սոցիալական բարեկեցության ու դիրքի են հասնում նոր ոլորտում, այնուամենայնիվ էքզիստենցիալ վակուումի մեջ են հայտնվում, քանի որ իրենց էությունը չեն համարում այն ինչով զբաղվում են, իրականում չեն ընդունում նոր արժեքները, չեն նույնացնում իրենց նոր սոցիալական դերերի հետ և, հաճախ քողարկված, անիմաստության զգացում են ունենում: Հայտնվելով դեպրեսիվ, տագնապային վիճակներում, դեստրուկտիվ վարք դրսևորելով: Սոցիալական նույնականության կոնֆլիկտ հասկացությունը հարաբերականորեն նոր է և հանդիպում է առավելապես արևմտյան գրականության մեջ: Այս հասկացությամբ, սովորաբար նկատի են ունենում ոչ թե ներանձնային, այլ խմբային նույնականությունների բախումը[126]: Խոսքը միևնույն միջավայրում գործառող տարբեր, իրար հակադիր սոցիալական նույնականություն ունեցող անձանց ու խմբերի նույնականությունների բախման մասին է, ասենք, քրիստոնյա-մահմեդական:

Վերջում անդրադառնանք նաև այսպես կոչված դեմարգինալիզացիայի խնդրին[127]: Այն տեղի է ունենում հասարակության կայունացման հետ միաժամանակ: Պետք է ասել, ինարկե, որ դեռևս հստակ ըմբռնում չկա այս հասկացության և երևույթի բնութագրման հարցում: Ասենք, Ա.Աբոյանը այն ներկայացնում է որպես «...հասարակական կապերի բոլոր տեսակների վերականգնմանն ուղղված միտումների և միջոցառումների ամբողջությունը, որը ...կայունացնում է հասարակական ամբողջը»[128]: Այլ աղբյուրներում մենք ընդհանրապես չկարողացանք այս հասկացության որևէ սահմանում կամ մնկնաբանություն գտնել: Ըստ մեզ, ինչպես տեսական, այնպես էլ կիրառական առումներով մարգինալ վիճակի հաղթահարման, այսինքն դեմարգինալիզացիայի հիմնահարցը չափազանց կարևոր է և արժանի մանրազնին հետազոտությունների: Մասնավորապես անհրաժեշտ է հետազոտել դեմարգինալիզացիան անձի ու խմբի մակարդակներում, այդ գործընթացի կառավարման խնդիրները՝ սոցիալական, օրենսդրական, բժշկական ու հոգեբանական դիրքերից: Փորձենք կոնկրետ օրինակով հստակեցնել ասվածը: Այսօր, մեզանում, ինչպես հայտնի է, որոշակի ծրագրերով սոցիալական և, մասամբ հոգեբանական ու բժշկական բնույթի աշխատանքներ են իրականացվում բռնագաղթածների հետ: Ըստ էության այդ աշխատանքների վերջնական նպատակը դեմարգինալիզացիան է, ինչը սակայն հստակորեն չի գիտակցվում և նպատակաուղղված չի իրականացվում հենց միայն այն պատճառով, որ այդ հիմնախնդիրը ուրվագծված չէ, մշակված չեն այն կոնկրետ քայլերը, որոնք անմիջականորեն կհանգեցնեին խնդրի լուծմանը:

2.7. ՄԱՍՆԱՏՎԱԾ ՍՈՑԻՈՒՄ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՎԻՃԱԿՆԵՐԸ

Ամենևին չի կարելի ասել, թե հայ հասարակությունն այսօր համախմբված է: Մի քանի չափազանց կարևոր հիմնախնդիրների շուրջը կա՛ ընդհանուր ըմբռնում: Ղարաբաղի անկախության հանգուցախնդիրը դրանցից մնկն է: Հայ հասարակության բացարձակ մեծամասնությունը լիովին համոզված է, որ Ղարաբաղը պետք է անպայման անկախ լինի Աղրբեջանից: Արդյո՞ք այն կլինի Հայաստանի կազմում, թե՞ կլինի անկախ, ինքնուրույն պետություն, որպիսին փաստացի հանդիսանում է արդեն տասը տարուց ավելի՛ այլ հարց է: Բայց Արցախի անկախության շուրջ համախմբված են բոլոր սոցիալական խավերի ու խմբերի կարծիքները:

[124] Лебедева Н.М. Социальная идентичность на постсоветском пространстве: от поисков самоуважения к поискам смысла // Психологический журнал, 1999. Том 20, 3, с. 48-58.
[125] Франкл В. Человек в поисках смысла. М., Прогресс, 1990.
[126] Dalton M. A. Social identity conflict. http://www.accessmylibrary.com/coms2/summary_0286-9716765_ITM.BatchelorD.IdentityConflicts.http://www.beyondintractability.org/user_guides/identity_conflicts/?nid=5306#essays_conflicts.
[127] Атоян А.И. Социальная маргиналистика. О предпосылках нового междисциплинарного и культурно-исторического синтеза // Политические исследования. 1993. № 6.

[128] Նույն տեղում, էջ 32:

Հասարակական կարծիքի երկրորդ կիզակետը ցեղասպանության հիմնախնդիրն է: Դրա վերաբերյալ նույնպես՝ առանց բացառության, գոյություն ունի հասարակության բոլոր շերտերի միանգամայն հստակ, միասնական կարծիքը: Ընդամին հավելենք, որ հայկական սփյուռքը ևս այդ հարցերի վերաբերյալ նույնպես միանգամայն նույն կարծիքին է: Կարելի է ասել, որ պատմական ինքնագիտակցության այս երկու հենասյուները համախմբում են ողջ հայությանը, մարմնավորում են հայ ազգային ինքնագիտակցության հիմքերը: Ոլորշակի իմաստով այսպիսի համախմբվածությունից է հենց սկսվում հայերի ազգային ինքնանույնականացումը:

Համախմբող գիտակցության երրորդ հենասյունը երբեմնի մեծ ժողովրդի, մեծ մշակույթի, հարուստ անցյալի պատմամշակութային հարացույցն է:

Իմաստային առանցքը քրիստոնեական ժողովրդի կերպարն է, որ առաջինն է քրիստոնեությունն ընդունել որպես պետական կրոն: Հայկական հոգեկերտվածքի ընկալվող կերպարն ամփոփված է բազմաչարչար քրիստոնեական ժողովրդի պատմական ճակատագրի մեջ, որն ապրել է եղեռն՝ անցյալ դարի սկզբում, ձեռք բերել պետական անկախությունն ու կռվով ետ է նվաճել անկախությունն արցախահայերի համար՝ նույն դարի վերջին:

Սակայն մի ամբողջ շարք այլ, ոչ պակաս կարևոր հարցերի վերաբերյալ ժամանակակից հայերի կարծիքները կտրուկ բաժանվում են: Այդ թվում և այնպիսի հարցերում, որոնք, թվում է, ենթակա էլ չեն քննարկման: Օրինակ՝ լեզվի, ուղղագրության, եկեղեցու հարցերը բուռն վեճերի առարկա են դարձել սփյուռքի և Հայաստանի գիտնականների միջև: Բուն Հայաստանում հասարակական գիտակցությունն այսօր երկատված է մի ամբողջ շարք բախտորոշ հիմնախնդիրների վերաբերյալ իր դիրքորոշմամբ: Հասարակական գիտակցության նման երկատվածության պատճառները թաքնված են բուն Հայաստանի պատմական և աշխարհաքաղաքական դիրքի մեջ: Հայաստանի սահմանամերձ դիրքը Եվրոպայի և Ասիայի միջև, Արևմուտքի և Արևելքի մշակույթների միջև, քրիստոնեական և մուսուլմանական աշխարհների միջև, Հարավի և Հյուսիսի միջև:

Հասարակական գիտակցության երկատումը անցնում է որոշակի երկճյուղ չարքով, որն ընդգրկում է երկրի և ժողովրդի ոչ վաղ անցյալի, ներկայի և հնարավոր ապագայի գնահատականի նկատմամբ վերաբերմունքի հիմնախնդիրների լայն շրջանակը: Մինչ վերջին ժամանակներս բնակչության մի զգալի մասը (60 %) այն հարցին, թե ե՞րբ են իրենք ավելի լավ ապրել՝ խորհրդային շրջանո՞ւմ, թե՞ հիմա, պատասխանում էր՝ «խորհրդային ժամանակաշրջանում»: Եվ միայն 2000-2002 թթ. հարցումներում է, որ անցյալի նկատմամբ կարտահայտ ապրողների թիվը կրճատվել է մինչև 42 %: Բնակչության մոտավորապես նույն մասը (30 %) այն կարծիքին է, որ այսօր, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան երեկ: Մնացյալ 28 %-ը առանձնակի տարբերություն չեն տեսնում անցյալի և ներկայիս միջև:

Այսպիսով, բնակչության երկու մեծ խմբեր փաստորեն տալիս են ուղղակիորեն հակադիր գնահատականներ՝ իրենց անցյալին և երկրի անցյալին: Դա կապված է նրանց արմատական դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների տարբերության հետ: Ըստ էության, դրանք տարբեր կենսական ռազմավարություններ և տարբեր ճակատագրեր են: Իհարկե, կարելի է տեսնել սերնդային կտրվածք՝ անցյալի այսպիսի երկճյուղ գնահատականում: Կարոտախտ ապրում են և ավելի հաճախ անցյալին դրական գնահատական են տալիս ավագ սերնդի ներկայացուցիչները: Մարդիկ, որոնց կյանքը՝ երիտասարդությունն ու հասուն տարիներն անցել են խորհրդային վարչակարգի պայմաններում: Նրանց կարոտաբաղձությունը կրում է, հնարավոր է ոչ այնքան գաղափարական, որքան հոգեբանական՝ խորապես անձնական բնույթ: Դրանով հանդերձ, չպետք է մոռանալ, որ այդ լիովին ապահովված մարդկանց մեծ մասը սոցիալական տրանսֆորմացիայի պայմաններում հայտնվեց աղքատության եզրին: Այդ իսկ պատճառով նրանց գնահատականներում գերակշռում է նաև տնտեսական փաստարկումը:

Այդպատճենայնիվ նման սոցիալ-տարիքային տարակարծությունը չի ծնում սերունդների կոնֆլիկտ՝ հասարակությունում: «Հայրերի սերնդի» և «որդիների սերնդի» միջև չի նկատվում սուր կոնֆլիկտ, թեև դրա բոլոր հիմքերը կան: Հասարակական գիտակցության երկատման գիծը անցնում է «հայրերի սերնդի» և «որդիների սերնդի» միջով, սակայն այն վեճի առարկա չէ: Լուռ փոխհամաձայնությամբ երկու կողմերն էլ չեն մեղադրում միմյանց՝ ստեղծված իրադրության մեջ, այլ, ավելի շուտ, ընդունում են՝ որպես «քաղաքական մեծ գործիչ-դեմոկրատների» կողմից իրենց վզին փաթաթված պարտադրանք: Երիտասարդությունը չի մեղադրվում թմրամոլության, մարմնավաճառության տարածման, ծրիակերության ու անբանության և սոցիալական այլ արատներում: Ավելի շուտ, «հայրերը» կարեկցում են երիտասարդներին՝ նրանց դիտելով որպես հաստատված նոր սոցիալական կարգերի զոհեր:

Ըստ էության, դա արժեքային կոնֆլիկտ է, որի կողմերը ներկայացված են երկրի երիտասարդ և մեծահասակ սերնդի քաղաքացիների գերակշիռ խմբերով: Սակայն այս բախումը սերունդների կոնֆլիկտի էությունը չէ: Դա անցումային շրջանի կոնֆլիկտ է: Արդի հասարակության մի մասը պատկանում է նախկին ֆորմացիային, իսկ նրա մյուս մասը ջանում է հարմարվել նորի պայմաններին: Ընդ որում թե՛ չհարմարված, թե՛ հարմարված մասերում առկա են տարբեր սերունդների ներկա-

յացուցիչներ՝ տարբեր տարիքի և զանազան սոցիալական շերտերի մարդիկ: Հասարակական գիտակցության երկատվածությունը, որ առնչվում է երկրի անցյալի և ներկայի տարբեր գնահատականներին, շոշափում է սեռատնդերի շահերը, բայց վերաբերում է հիմնականում անցումային շրջանի կոնֆլիկտների և դիմակայությունների խմբին: Նման երկատվածության առաջացման պատճառները թաքնված են սոցիումի բուն տրանսֆորմացիոն բնույթի մեջ: Այդ իսկ պատճառով վերոնշյալ երկատվածությունը հարկ է դասել տրանսֆորմացիոն կոնֆլիկտների, հակասությունների և դիմակայությունների, այլ ոչ թե սեռընդային կոնֆլիկտների խմբին:

1991/92 թթ. խիստ ծմռան շրջանում սկսված միգրացիայի լայն ալիքը բաժանեց հասարակությունը երկու մասի. նրանց, ովքեր մնկնել են կամ մտադրվել են մեկնել, և նրանց, ովքեր չեն պատրաստվում լքելու երկիրը: Մնկնողների ավելի քիչ էին, սակայն պոտենցիալ միգրացիան, սոցիոլոգիական հարցումների տվյալներով, շատ բարձր էր: Մեկնողների մեջ կային տարբեր սոցիալական խավերի, տարբեր տարիքի և նյութական տարբեր ապահովվածության տեր մարդիկ, ինչպես քաղաքների, այնպես էլ շրջանների և գյուղերի բնակիչներ: Շատերը հարկադրված էին մեկնել կյանքի անտանելի պայմանների, պատերազմի, շրջափակման, գործազրկության պատճառով: Հեռանում էին ընտանիքներով կամ առանց ընտանիքի:

Սկզբնապես մեծամասնությունը մեկնում էր միայն որոշակի ժամանակով՝ դաժան ձմեռն անցկացնելու և նա վերադառնալու մտադրությամբ: Այն ժամանակ դեռ ոչ բոլորը գիտեին, որ «դաժան ձմեռը» կերկարաձգվի երկար տարիներ: Արդեն հետո՝ մի քանի տարի անց, արտագաղթածները սկսեցին վաճառել Հայաստանում թողած տները, բնակարանները, ամառանոցներն ու մյուս գույքը: Գործնականում՝ հարցվողների 70 %-ը կցանկանային մեկնել, եթե այն ժամանակ՝ 1993 թ., նրանց ընձեռվեր այդպիսի հնարավորություն: Ընդհտ է, պոտենցիալ միգրացիան երբեք չի համընկնում իրականի հետ, թեև պատկերացում է տալիս երևույթի թաքնված մասշտաբների մասին: Պատրաստ էին երկիրը լքել մինչև 30 տարեկան երիտասարդության 80 %-ը և ավագ սերնդի ներկայացուցիչների (45-60 տարեկան և բարձր) 60 %-ը: Բայց մեծամասնությունը ծրագրում էր միայն մեկ ձմեռ անցկացնել Հայաստանի սահմաններից դուրս: Հաճրապետությունն ընդմիշտ թողնելու մտադրություն ունեցողների թվաքաճակը չէր գերազանցում 14 %-ը[129]:

Երկրից հեռանալու ձգտումը առավել արտահայտվում էր բնակչության կրթված մասի և կանանց մոտ: Ուշագրավ է, որ վերջիններս տղամարդկանցից ավելի

[129] Погосян Г.А. Судьба армянина в Армении. — Социологические исследования", М., 1994, N 10, с. 153.

շատ էին կողմնորոշված ժամանակավոր մեկնմամ՝ դժվար ժամանակաշրջանը վերապրելու և վերադառնալու համար: Բոլորից քիչ ցանկանում էին դուրս մեկնել թոշակառուները, քանվորներն ու կոոպերատորները:

Ոչինչ այդքան չի վկայում ստեղծված իրադրության անելանելիության ու հուսահատության խորության մասին, որքան մեծահասակների համաձայնությունը՝ երեխաների մեկնմանը: Չէ՞ որ նրանց բաժանումը ընտանիքից, հարազատ տնից, ծայրահեղ ու արտակարգ իրադարձություն է: Եթե հայը գիտակցաբար գնում է դրան (63,9 % ծնողներ ցանկանում էին, որ իրենց երեխաները տեղափոխվեն մշտական բնակության արտասահմանում, քանի որ «ողջ Հայաստանը դա աղետի գոտի է»), ապա նշանակում է, որ նա չի տեսնում իր երեխաների համար դրանից լավ ապագա: Մարդկանց մտքում և սրտում ու հասարակական գիտակցության մեջ բաժանման տեսական գիծն անցնում է հայրենասիրության և աշխարհաքաղաքացիության հայեցակարգերի միջև: «Հայրենասերները» պաշտպանում էին այն տեսակետը, համաձայն որի, հայրենիքը չի կարելի լքել ոչ մի պարագայում, նույնիսկ երբ կյանքն անտանելի ծանր է դառնում, որովհետև հենց նման շրջանում է երկիրը զգում իր քաղաքացիների աջակցության կարիքը: Լքել հայրենիքը նրա համար ծանր տարիներին՝ գնահատվում էր գրեթե որպես ազգային դավաճանություն:

Ազգային-հայրենասիրական տրամադրությունը մարդկանց մեջ ամրապնդում էին այն համոզմունքը, որ իրենք ճիշտ են վարվում երկրում մնալով՝ չթողնելով հայրենիքը պատերազմի և շրջափակման ծանր տարիներին: Իհարկե, արմատական ազգային-հայրենասիրական գաղափարախոսության կրողները իրականում շատ չէին: Մեծամասնությունն ամենևին չէր դատապարտում հեռացողներին, որովհետև ըմբռնումով էր մոտենում նրանց մտահոգություններին կամ իրըն էլ մտադիր էր երեխաներին ուղարկել արտասահման՝ ազգականների մոտ: Կոշտ կշտամբանքի խոսքեր այն ժամանակ հասարակությունում հազվադեպ էին հնչում և ոչ բոլորն էին դրանց հետ համաձայն: Հասարակական կարծիքը խստորեն չէր դատապարտում նրանց, ովքեր մեկնում էին. այդուհանդերձ, կամ թույլ հայեցասիրության կամ դրա բացակայության մեղադրանքները մնում էին օդում կախված: Պատահական չէ, որ տարիներ անց, երբ միգրանտներից ոմանք սկսեցին վերադառնալ հայրենիք, հասարակությունը զուսպ և զգուշավոր էր վերաբերվում նրանց:

Միջդեռ մեկնողների համար տեսական-արդյարացուցիչ հիմք էր ծառայում հայկական հոգեկերտվածքին պատմականորեն բնորոշ աշխարհաքաղաքացիական դրույթը. «Որտեղ հաց, այնտեղ էլ կաց»: Հարյուրամյակներ շարունակ հայ առևտրականները շրջել են աշխարհով մեկ և հաճախ մնացել ապրելու անդրծովյան երկրներում: Ջրադվելով առևտրով և գործարարությամբ՝ նրանք աչքի էին ընկ-

նում մեծ շարժունակությամբ, լեզուների իմացությամբ և նոր պայմաններում լավ հարմարվելու ունակությամբ: Հայերը, որպես կանոն, դառնում էին այդ երկրների օրինավոր քաղաքացիներ և հեշտությամբ ընդհանուր լեզու գտնում տեղի բնակիչների հետ: Սակայն հայերի աշխարհաքաղաքացիությունը երբեք չի խանգարել օտարության մեջ պահպանելու իրենց լեզուն, մշակույթը, դավանանքը և ազգային յուրահատկությունը: Տարօրինակ կերպով աշխարհաքաղաքացիությունը հաշտ ու խաղաղ գոյակցում էր նրանց ազգային ինքնագիտակցության հետ: Հենց դրանում է թաքնված «հայրենասերների» և «կոսմոպոլիտների» ճամբարների միջև խիստ առճակատման բացակայության պատասխանը:

Հայկական «աշխարհաքաղաքացիության» պատճառների արմատները ձգվում են անհատապաշտության հոգեբանության խորքերը: Հայկական հոգեկերտվածքին միշտ ներհատուկ է եղել խոր անհատապաշտությունը: Այն մեր հոգեկերտվածքի հիմնարար սկզբունքներից ու տարբերիչ առանձնահատկություններից մեկն է: Սոցիալական հարաբերությունների տրանսֆորմացման պայմաններում այն վերածեց գերանհատապաշտության: Հենց գերանհատապաշտությունն էր որոշում շատ-շատերի հասարակական գիտակցությունն ու սոցիալական վարքը, ովքեր լքեցին երկիրն այն ծանր տարիներին:

Բնակչության վերաբերմունքը անցկացվող տնտեսական բարեփոխումների հանդեպ թույլ է տալիս բացահայտել տնտեսական արժեքների առանձնահատկությունները ու գոյություն ունեցող հակասությունները՝ տրոհված հասարակության տնտեսական պատկերացումներում: Ընդկայական տնտեսության, մասնավոր սեփականության և տնտեսական բարեփոխումների ընթացքի նկատմամբ վերաբերմունքը դարձել է հասարակության տարբեր խավերի վեճի գլխավոր առարկան: Սկսած 1995-ից, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի կողմից հեղինակիս ղեկավարությամբ անցկացրած սոցիոլոգիական հետազոտությունները թույլ են տալիս՝ պատկերացնել կապվել բնակչության տնտեսական արժեքների դինամիկայի մասին:

Գերակշռում է այն կարծիքը, համաձայն որի՝ տնտեսական բարեփոխումներն ընթանում են շատ դանդաղ, չեն բարելավում լայն զանգվածների կյանքը, այլ ստեղծում են բարենպաստ պայմաններ՝ փոքրաթիվ մարդկանց հարստացման համար: Հետաքրքիր է, որ բնակչության սոսկ մեկ երրորդն է այս կամ այն կերպ կողմ կամ աջակցում է բարեփոխումներին: Մեծ մասն առայժմ չի տեսնում դրանցում իրավիճակի ճորացման և բարելավման գրավականը: Հարցվողների մեծամասնության կարծիքով, նախաբարեմիսիական շրջանում անհամեմատ իրենք և իրենց ընտանիքները ապրել են ավելի լավ, քան թե տնտեսության բարեփոխումներից հետո:

Այսպիսով, տնտեսական բարեփոխման ուղղությունն, ընդհանուր առմամբ, աջակցություն չի գտնում երկրի մեծահասակ և աշխատունակ բնակչության մեծամասնության կողմից: Նրանցից շատերը ներարեփոխումներին շրջանում դարձել են գործազուրկներ և համալրել են բնակչության ամենաչքավոր շերտերի շարքերը: Այդ իսկ պատճառով էլ իրենց դիրքերի վատթարացումը նրանք անմիջականորեն կապում են բարեփոխումների հետ: Մեծահասակ բնակչության մեծամասնության աչքում հենց տնտեսության ազատականացումն ու շուկայական հարաբերությունների ներմուծումն են հանգեցրել կենսապայմանների կտրուկ վատթարացմանը և կենսամակարդակի անկմանը: Այս երկու իրադարձությունները հասարակական գիտակցության մեջ ձեռք են բերել պատճառա-հետևանքային կախվածության բնույթ:

Հասարակությունը դժգոհ է նաև տնտեսական բարեփոխումների տեմպերից: Մեր կողմից հարցման ենթարկված մարդկանց զգալի մասը (40-43 %) գտնում է, որ բարեփոխումներն ընթանում են չափազանց դանդաղ: Այստեղ դրսևորվում են մարդկանց սպասումները՝ պետության կողմից անցկացվող բարեփոխումներից: Մարդկանց խոստանում էին կյանքի բարելավում՝ վարչահրամայական և պլանային տնտեսությունը շուկայականի բարեփոխելու արդյունքում: Սակայն ժամանակն անցնում է, իսկ մարդիկ այդպես էլ չեն տեսնում կենսապայմանների բարելավում: Այստեղից էլ առաջանում է դժգոհությունը բարեփոխումների տեմպերից: Ենթադրվում է, որ դրանց արագացումը պետք է որ նպաստեր հասարակության կյանքի առավել արագ բարելավմանը:

Տնտեսական գիտակցության որոշ տարիմաստությունը, մեր կարծիքով, բացատրվում է հետևյալ նկատառումներով: Մարդկանց զգալի մասը տեսնում է, որ բարեփոխումներն ընթանում են ոչ ճիշտ հունով: Սակայն նրանցից շատերը, համակերպվելով բարեփոխումների անհրաժեշտության մտքի հետ, ցանկանում են բարեփոխման տեմպերի արագացում, որպեսզի ավելի արագ անցնեն անցումային տնտեսության անհրաժեշտ շրջանը և ձեռք բերեն լիարժեք բարեփոխված տնտեսություն: Հասարակությունը հոգնել է փոփոխություններից, իսկ ավելի ճշգրիտ՝ այն բանի մշտական անավարտությունից, ինչը կոչվում է սոցիալական ինստիտուտների և հարաբերությունների տրանսֆորմացիա:

Տնտեսական արժեքներում առավել զգալի տրոհվածությունը դրսևորվում է սեփականության ձևերի ու հարստության նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մեջ: Մասնավոր սեփականությունը որպես այդպիսին դրականորեն է գնահատվում գործնականում բոլորի կողմից: Այս առումով հայ հասարակական գիտակցությունը բավականին առաջադեմ է: Մասնավոր սեփականության, մասնավոր բիզնեսի,

սեփական գործի արժեորումը միշտ առաձնահատուկ տեղ է գրաւեցրել մեր մարդկանց հոգեկերտվածքում:

Այլ հարց է, թե ինչպիսին են մասնավոր սեփականության մասշտաբներն ու ոլորտները: Գոյություն ունեն տնտեսության ոլորտներ, որոնք, մարդկանց մեծամասնության կարծիքով, ենթակա չեն սեփականաշնորհման և պետք է լինեն պետության տնօրինության ներքո: Հարցումները ցույց են տալիս, որ հասարակության ճնշող մեծամասնությունը դրանց թվին է դասում տրանսպորտը, կապն ու հաղորդակցության միջոցները, առողջապահությունը, համընդհանուր կրթությունը, պետության պաշտպանությունը և միջազգային կապերը: Իսկ տրանսպորտի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ավիացիան, երկաթուղային տրանսպորտն ու մետրոպոլիտենը՝ մարդկանց կարծիքով, պետք է ամբողջովին (կամ գրեթե ամբողջովին) լինեն պետության, այլ ոչ թե մասնավոր ձեռներեցների սեփականությունը: Առողջապահության, կրթության համակարգերը, մասնավորապես՝ մանկապարտեզները, դպրոցները, պոլիկլինիկաներն ու հիվանդանոցները, պետք է գտնվեն պետության տնօրինության տակ: Մեծահասակ բնակչության մեկ երրորդի կարծիքով, նույնիսկ հեռուստատեսությունը, ռադիոն և գլխավոր թերթերը պետք է պատկանեն պետությանը: Պետական սեփականություն պետք է հանդիսանան նաև էներգետիկ արդյունաբերությունը, էլեկտրակայանները, ճանապարհները, ջրամատակարարումը, ռազմական արդյունաբերությունը, երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող որոշ արտադրատեսակների թողարկումը:

Հասարակական գիտակցությունը պատրաստ է մասնավոր սեփականության ոլորտին «հանձնել» առևտրի օբյեկտները, սպասարկման ոլորտը, թերթերի, հեռուստա- և ռադիոալիքների մի մասը, սննդամթերքների արտադրությունը, թեթև արդյունաբերությունը և շատ ու շատ այլ բաներ: Մի քանի տարիներ անց հասարակությունը համակերպվեց վճարովի բժշկության և վճարովի մասնավոր բուհերի հետ: Սակայն տրանսպորտի և կապի մասնավորեցումը՝ մինչ այժմ էլ սուր վիճաբանություններ է առաջացնում:

Հասարակական գիտակցությունում նա մեկ բաժանման գիծ անցնում է պետության մեծ դերի և շուկայի ջերմեռանդ կողմնակիցների միջև: Վերջիններիս կարծիքով, մասնավոր սեփականության ոլորտին կարելի է հանձնել այն ամենը կամ գրեթե ամենը, ինչը կարիք չունի հատուկ պետական կարգավորման: Այլ կերպ ասած, ամեն ինչ, բացի բանակից և ոստիկանությունից, կարող է հանձնվել զանազան ընկերությունների և կորպորացիաների, այդ թվում և օտարներկրյա, մասնավոր անձանց ձեռքը: Պետությունը մի ամբողջ շարք նման ընկերություններում կարող է լինել փայատեր՝ իր ծանրակշիռ բաժնետոմսերով, որպեսզի ամբողջովին չկորցնի վերահսկողությունը՝ դրանց նկատմամբ:

Վերոհիշյալ վեցը երբեմն սուր ծներ է ընդունում և դասում քննարկման առարկա՝ երկրի խորհրդարանում: Ժողովուրդը մեղադրում է կառավարությանը՝ «ծախվածության» և ազգային շահերին դավաճանելու մեջ, կապված աղմկահարույց գործարքների հետ, որոնց արդյունքում, օրինակ, հեռախոսացանցը հանձնվեց մի հունական ընկերության մենաշնորհային տիրապետմանը՝ 15 տարի ժամկետով: Աղմկահարույց գործարքների թվին է դասվում և իր ավանդներով ու արտադրանքով հայտնի Երևանի կոնյակի գործարանի վաճառքը ֆրանսիական ֆիրմային, «Ջվարթնոց» միջազգային օդանավակայանի վաճառքը արգենտինացի հայ միլիոնատիրոջը: Վերջին ժամանակներս շատ խոշոր արտադրական օբյեկտներ, ինչպես օրինակ, Հրազդանի ջերմաէլեկտրակայանը և նույնիսկ ատոմակայանը փոխանցվեցին ռուսական բիզնեսին: Հայաստանի պետական պարտքի դիմաց: Այս ամենն ընդդիմության կողմից սուր քննադատվում է, և հասարակական կարծիքում (հաճախ արհեստականորեն) տպավորություն է ստեղծվում, որ երկիրը «վաճառվում է աճուրդով»:

Հասկանալի է ու հարուստները առանձնակի դժգոհություն չեն առաջացրել հասկերի մոտ: Ներկայիս պայմաններում «նոր հայերի» հանդեպ բացասական վերաբերմունքը բխում է նրանց հարստացման անօրեն ուղիների դատապարտումից: Հասարակական գիտակցության մեջ դատապարտման և պարսավանքի է ենթարկվում ոչ թե ինքնին հարստությունը կամ հարուստները, այլ ավելի շուտ, հարստության ձեռքբերման բրեակոս բնույթը, այն էլ՝ զանգվածային չքավորության ֆոնի վրա: Այն բանի գիտակցումը, որ սեփական բաղաքակիրթ բիզնեսի հաշվին հնարավոր չէ Հայաստանի տնտեսական պայմաններում հարստանալ՝ առանց «վերնային» հզոր աջակցության, էլ ավելի է ամրապնդում ժխտական վերաբերմունքը հարուստների նկատմամբ:

Ազատ շուկայական հարաբերություններն իրականում այնքան էլ ազատ դուրս չեկան բոլորի համար: Տնտեսական հնարավորությունների հավասարությունը՝ սոցիալական արդարության գլխավոր պահանջն է, որ հասարակությունը դնում է պետության առջև: Պետությունը պետք է հանդես գա դատավորի դերում, որն ապահովում է հավասար հնարավորություններ՝ բոլորի համար և հետևում է խաղի կանոնների պահպանմանը:

Բնակչության տնտեսապես ակտիվ մասը, որն ընդունել է շուկայական հարաբերությունները և ձգտում է մտնել այդ հարաբերությունների մեջ՝ որպես ազատ ձեռներեց, պահանջում է պետությունից լոկ մի բան՝ ապահով խաղ և հավասար մակնարկային հնարավորությունների ապահովում: Շուկայի ջատագովները հենց սրա-

նով էլ տարբերվում են բնակչության մնացյալ մասից: Վերջիններիս թվին դասվում են պետության օգնությանը ամբողջովին ապավինող անապահով, սոցիալապես թույլ խավերը:

Սոցիալական շուկայական պետության մոդելը, որը պիտի նկատելի դեր խաղա երկրի տնտեսության մեջ՝ որպես գերագույն դատավոր, որպես իրավարար, հնազիետ ամբակայվում է հայ հասարակական գիտակցությունում: Պետության դերի նույնպիսի ըմբռնումը բավականին տարածված է ռուսական հասարակությունում: Ինչպես վկայում են ռուս գիտնականները, սոցիալական շուկայական տնտեսվարման այս մոդելը լրացվում է գերմանական «տնտեսական հրաշքի» հեղինակ Լյուդվիգ Էրհարդի անվերապահ պահանջով՝ «թարեկեցություն՝ բոլորի համար»[130]: Շուկայական տնտեսությամբ սոցիալական պետությունը պետք է ապահովի հավասար հնարավորություններ բոլորի համար և հակազդի բևեռացմանը հասարակությունում՝ ունեցվածքային հատկանիշով:

Տնտեսական աճն ու հասարակության բարեկեցությունը պետք է վերաբերեն նրա բոլոր սոցիալական շերտերին և խավերին՝ չստեղծելով խիստ սոցիալական հակադրություններ: «Պետության խնդիրը կայանում է նրանում, որպեսզի իրագործվի հիմնարար ընտրության գործողությունը և ոչ միայն իրագործվի, այլև հիմնավորվի, թե ինչու է այս կամ այն տեսակետը համարվում համընդհանուր: Իսկ այսօր պետությունը չի կարողանում կատարել իր այդ դերը: Այստեղ էլ ծագում է «թարեփոխիչների» և քաղաքացիների հիմնական զանգվածի միջև փոխադարձ անըմբռնողությունը: Պետությունն առանց ապագայի որոշակի պատկերի՝ ռուսաստանցիների համար ասես թե այնքան էլ պետություն չէ... Այստեղից էլ՝ բնակչության մեջ զարգացող օտարացումը ո՛չ միայն առանձին անձնավորից և հիմնական պետական ինստիտուտներից, այլև, ըստ էության, նաև պետությունից՝ որպես այդպիսին: Ռուսաստանցիների նշանակալի մասը պարզապես չի տեսնում նրա մեջ իրեն հարազատ բուն ռուսական պետականության գծեր: Մինչդեռ ժամանակ այն կոահում է այդ գծերը որոշ ընդդիմադիր (կամ թվաբիրնդդիմադիր) դեմքերի բաղաքական ճառերում՝ նրանց վճարելով դրա դիմաց՝ ամոր աջակցությամբ»[131]:

Հասարակական գիտակցության երկատումը կատարվում է նաև աշխարհաքաղաքական կողմնորոշումների ասպարեզում: Երկրի պաշտոնական արտաքին քաղաքական կուրսը, ինչպես հայտնի է, հիմնվում է կոմպրոմիսնային հայեցակարգի վրա: Սա նշանակում է, որ Հայաստանն իր հարաբերություններում դեկավարվում է այն սկզբունքով, համաձայն որի, հարաբերություններն Արևելքի հետ չպետք է խանգարեն Արևմուտքի հետ հարաբերությունների զարգացմանը: Կոնկրետ քաղաքականության մեջ դա ենթադրում է համակողմանի հարաբերությունների զարգացում Միացյալ Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ՝ պահպանելով Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերություն ու Իրանի հետ տնտեսական համագործակցություն:

Հայաստանը ՍԱԿ-ի և Եվրոխորհրդի անդամ է, մասնակցում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին և ԱՄՆ-ի գլխավորությամբ հակաահաբեկչական համագործակցությանը: Միաժամանակ Հայաստանն ամենամոտ ռազմավարատեղիական համագործակցության մեջ է Ռուսաստանի հետ, ստորագրել է անվտանգության վերաբերյալ համաձայնագիր՝ ԱՊՀ շրջանակներում և սերտ հարաբերություններ է պահպանում Իրանի հետ: Սերտ հարաբերություններ պահպանել երկու կողմերի հետ, որոնց միջև առկա է վաղնջի մրցակցություն, երբեմն էլ՝ առճակատման հասնող, շատ դժվար է: Բայց առայժմ Հայաստանի դիվանագիտական գերատեսչությանը դա հաջողվում է:

Ինչ վերաբերում է հասարակական կարծիքին, ապա այստեղ դիվանագիտական հավասարակշռությունը չի պահպանվում: Բնակչության համակրանքը Ռուսաստանի կողմն է: Բնակչության ավելի քան 70 %-ը Ռուսաստանին համարում է Հայաստանի բարեկամն ու ռազմավարական գործընկերը: Վճռականորեն տրամադրված մասն առաջարկում է նույնիսկ միանալ Բելոռուսիա-Ռուսաստան միությանը: Հայերի հասարակական կարծիքը վաղուց արդեն Ռուսաստանի կողմն է: Դա բավական ծանրակշիռ պատճառներ ունի: Գլխավորը դրանցից՝ Հայաստանի անվտանգության և հարևան Թուրքիայի կողմից նրա սահմանների պաշտպանվածության հարցն է: Հայաստանի բնակչությունն իրեն մեծապես անվտանգ է զգում, երբ Թուրքիայի հետ պետական սահմանը հսկում են Ռուսաստանի (ավելի վաղ՝ ԽՍՀՄ-ի) զինված ուժերը:

Բացի այդ, Հայաստանին Ռուսաստանի հետ միավորում են շատ վաղնջի պատմական, մշակութային կապեր: Ռուսերեն լեզվի, ռուսական պատմության և մշակույթի իմացությունը նույնպես ոչ փոքրաթիվ դեր ունեն: Հայ մշակույթի և գիտության շատ և շատ անվանի ներկայացուցիչներ ստեղծագործել և աշխատել են Ռուսաստանում կամ այնտեղ են կրթություն ստացել: Մի խոսքով, ռուս-հայկական հարաբերություններն ունեն շատ խոր և հարուստ պատմություն: Ու վերջապես, ոչ պակաս կարևոր է Ռուսաստանում վիթխարի հայկական սփյուռքի առկայությունը, որը բավական սերտորեն կապված է հայրենիքի հետ: Պատահական չէ, որ հայ

[130] О доминантах массового сознания. — В кн.:Россия на рубеже веков. М., РОССПЭН, 2000, с. 289.
[131] Նույն տեղում, էջ 246.

միգրանտների մեծ մասը (առյուծի բաժինը) մնկնում է Ռուսաստան: Այսպիսով, Հայաստանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կողմնորոշված է դեպի Ռուսաստան և միայն 30 %-ը՝ Եվրոպա և ԱՄՆ: Օրինակի համար, Վրաստանում բնակչության 70 %-ը կողմնորոշված է դեպի Արևմուտք, և սոսկ 30 %-ը՝ Ռուսաստան: Ադրբեջանում բնակչության մոտ կեսը կողմնորոշված է դեպի Ռուսաստան, իսկ մյուս կեսը՝ Արևմուտք[132]:

Իհարկե, հայ բնակչության մեծ մասի կողմնորոշումը դեպի Ռուսաստան քնավ չի նշանակում, որ նրանք բացասաբար են վերաբերում Արևմուտքին, առավել ևս որ 2001 թ. սեպտեմբերի 11-ի Նյու-Յորքի վրա անաբեկչական հարձակումից հետո, ԱՄՆ-ի և Ռուսաստանի դիրքորոշումները շատ հարցերում մերձեցան: Սա Հայաստանին թույլ է տալիս էլ ավելի արդյունավետ կերպով իրագործել լայն համագործակցության քաղաքականությունն այն մեծ պետությունների և միջազգային ուժերի հետ, որոնք հետաքրքրություն են դրսևորում Կովկասյան տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների նկատմամբ:

Հասարակական կարծիքը՝ աշխարհաքաղաքական կողմնորոշումների իր տարամիտվածությամբ հանդերձ, ագրեսիվ վերաբերմունք չի ստածում հակառակ միտումների հանդեպ: Յուրաքանչյուր կողմն իրեն իրավունք է վերապահում չհամաձայնել հակառակ տեսակետի հետ՝ առանց բշնամանքի կամ հակամարտության նշանների: Գաղափարների և հայացքների բախումը, բարեխառնաբար, չի փոխակերպվում սոցիալական կոնֆլիկտի՝ հասարակության տարբեր խավերի միջև: Հայ հասարակության տրոհված գիտակցությունը, այդուհանդերձ, չի ծնում ագրեսիվ քաղաքացիական կոնֆլիկտ: Հակամարտությունը ներամփոփվում է զանազան սոցիալական շերտերի հայացքների մեջ և դրսևորվում անհատական կենսական ռազմավարության ընտրության մեջ, բայց չի դառնում սոցիալական առճակատումների հիմնական պատճառ:

Բաժանարար ևս մեկ գիծ է երևան գալիս հասարակական գիտակցության մեջ՝ Հայաստանի անկախության կողմնակիցների և Հայաստանի՝ ինչ-որ մի մեծ միությանը միանալու կողմնակիցների միջև: Հայկական պետության զարգացման անկախ ուղու կողմնակիցները ԽՍՀՄ-ի փլուզումից դեռ շատ առաջ հետևում էին ազգային պետության ստեղծման կամ, ավելի ճիշտ, վերականգնման հայեցակարգին: Հայաստանը կորցրել է ազգային պետականությունը բազմաթիվ պատերազմների արդյունքում՝ դեռ XIII դարում: Պետականությունը վերականգնվել է 1918 թ. առաջին հայկական հանրապետության տեսքով, որը գոյատևեց երկու տարուց քիչ ավելի: Բոլշևիկյան հեղափոխության և խորհրդայնացման արդյունքում 1921 թ. ստեղծվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ ԽՍՀՄ-ի կազմում: 1991 թ-ից սկսվում է հայկական երրորդ հանրապետության ժամանակաշրջանը՝ որպես անկախ ժողովրդավարական պետության: Պետական անկախության ձեռքբերման առաջին տարիներին զարգացման անկախ ուղու կողմնակիցները փոքրամասնություն էին կազմում: Այսօր նրանք կազմում են բնակչության երկու երրորդից ավելին, եթե դատելու լինենք սոցիոլոգիական հարցումների արդյունքներից: Հասարակական գիտակցության մեջ արժեզրկվեց ժողովրդավարական հասարակարգի բուն գաղափարը: Ի հայտ եկավ «ուժեղ ձեռքի» կարոտախտը, որը կկարողանար դուրս բերել երկիրը քաոսից: Ուժեղացած հոռետեսական տրամադրությունները Հայաստանի՝ որպես անկախ պետության բարգավաճման հնարավորության նկատմամբ:

Անկախության հռչակումից ընդամենը մեկ տարի անց բնակչության 28 %-ը ցանկություն է հայտնել վերականգնել նախկին Միությունը: Իսկ ըստ մյուս (1993 թ.) հարցումների, հարցվողների 43 %-ը Հայաստանի ապագան տեսնում են ԱՊՀ-ի կազմում, 12 %-ը՝ կոնֆեդերացիայի շրջանակներում և լոկ 22 %-ն է հավատում ինքնուրույն զարգացմանը[133]: Հետաքրքիր է, որ Հայաստանի բնակչության նույն այդ 22 %-ը Լեռնային Ղարաբաղի ապագան էլ է կապում անկախ պետության զարգացման հետ՝ Հայաստանին և Ադրբեջանին սահմանակից տարածքի վրա:

Զարգացման անկախ ուղու կողմնակիցները հավատում են, որ թե՝ Հայաստանը, թե՝ Ղարաբաղը լիովին կարող են գոյություն ունենալ որպես երկու անկախ պետություններ և ապահովել իրենց անվտանգությունն այս դժվարին տարածաշրջանում: Անցած տարիների փորձն ամրապնդում է նրանց այն համոզմունքը, որ ոչ միայն Հայաստանը, այլև տարածաշրջանի երկրորդ հայկական պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, լիովին ի զորու են պաշպանել իրենց և ապահովել իրենց անկախ պետականության անվտանգությունը:

Սակայն, ռազմական անվտանգության հետ մեկտեղ, անհրաժեշտ է ապահովել պետության ազատ չուկայական զարգացման հնարավորությունը: Ահա այստեղ, նրանց ծայրերը, ովքեր հակառակ տեսակետն ունեն, սկսում են ավելի ու ավելի բարձր հնչել: Ընդդիմադիր տեսակետի կողմնակիցներն այնքան էլ մեծ թիվ

[132] Переспективы решения конфликтов на Кавказе. Рук. проекта Г. Погосян, Ереван, АСА, 2001.- Трансформация конфликтов на Южном Кавказе. Материалы I международной конференции. Тбилиси 9-11 декабря 2001г. Тбилиси, 2002.

[133] Погосян Г.А. Судьба армянина в Армении. – Социологические исследования", М., 1994, N 10, с. 154.

չեն կազմում հասարակությունում, բայց նրանց փաստարկումներն արծագանք են գտնում քաղաքության ամենաառքատ շերտերի շրջանում: Նրանց հիմնական փաստարկն այն է, որ գլոբալացման պայմաններում տնտեսապես բոլոր Հայաստանը չի կարող գոյատևել՝ հենվելով միայն իր սեփական ուժերի վրա: Այդ պատճառով այն պետք է մտնի որևէ մեծ պետության կազմի մեջ, դառնա մի որևիցե առավել զորեղ պետության կամ միության մասը:

Ամենք որպես «մեծ եղբայր» առաջարկում են Բելառուսիա-Ռուսաստան միությունը, մյուսները՝ Եվրամիությունը: Այս թեմայով հրապարակային բանավեճերն արտացոլվում են ՁԼՄ-ներում, որպես կանոն, ընտրություններից առաջ: Չի կարելի ասել, թե այս հիմնախնդիրը հասարակական գիտակցության մակերևույթին է և խոովում է սոցիալական միտքը, բայց, այնուհանդերձ, անկախ հայկական պետության ապագայի վերաբերյալ տարակարծությունը՝ սոցիալական գիտակցության բնութագրական գծերից է: Կարծիքների երկճյուղավորվածությունն արտահայտված է ոչ այնքան ցայտուն, սակայն այն «ամրակայված է» հասարակության արժեքային-կողմնորոշումային համակարգին: Հետաքրքիր է, որ ռուս սոցիոլոգները ևս 90-ական թվականների ողջ ընթացքում զանգվածային գիտակցությունում արձանագրել են այնպիսի բացասական զգացումների, հույզերի գերակշռություն, ինչպիսիք են վախը, տագնապը, անվստահությունն ապագայի հանդեպ[134]:

Եվս մեկ երկատվածություն հասարակական գիտակցության մեջ դիտարկվում է հայերի ազգային կամ էթնիկական ինքնաճանչականացման հոգեբանական սխեմաներում: Տարբեր էտապներում և տարբեր առիթներով հասարակական գիտակցությունը համախմբվում է՝ ելնելով «մենք» և «նրանք» այլընտրանքային մոդելներից հակադրությունից: Ընդ որում, եթե որպես «մենք» միշտ հանդես է գալիս հայաստանաբնակ բնիկ ժողովուրդը, ապա որպես «նրանք» կախված հրատապ քաղաքական նպատեքստից՝ որպես կանոն հանդես են գալիս սփյուռքահայերը, փախստականները, «արցախահայերը», և, նույնիսկ, իշխանությունը:

Հայկական էթնոսի ներսում առկա են մարդկանց խմբեր, որոնք, ինչ-ինչ հանգամանքների բերումով, հակադրվում են միմյանց: Թեև այդ հակադրումը կատարվում է հասարակական գիտակցության ասպարեզում, այն բնավ չի կրում հայեցողական բնույթ, այլ արտացոլում է իրական ներազգային կյանքում առկա հակասություններն ու կոնֆլիկտները: Ջորօրինակ, որոշ տարածայնություններ ու լարվածություն գոյություն ունի տեղաբնիկ հայերի և Ադրբեջանից փախստականների, արցախահայերի, ինչպես նաև՝ Հայաբաղից եկածների միջև, հատկապես վերջին տարիներին, արտերկրից վերադարձող հարստացած հայերի միջև:

Ինչ վերաբերում է հասարակության և իշխանության հակադրությանը, ապա այն ևս գործում է «մենք» - «նրանք» սխեմայով, որն արդեն սկսել է պարբերաբար կրկնվող բնույթ կրել: Ժողովրդավարական կառավարման տարիների ընթացքում, հասարակության և իշխանության միջև ջրբաժանը, որքան էլ դա զայմանական է, էլ ավելի խորացավ: Հասարակությունը հայտնվել է կայուն քաղաքական ոտարվածության վիճակում, իսկ իշխանությունները ժողովրդին մերձենալու փորձեր չեն կատարում, բացառությամբ նախընտրական արշավների կարճ շրջանի: Ժողովուրդն արդեն վարժվել է այն մտքին, որ իշխանությունը չի բացատրվում իր ժողովրդի հետ, չի խորհրդակցում նրա հետ և հարկ չի համարում լսել նրա կարծիքը կամ հաշվետու լինել նրա առջև, երբ քննարկվում են կենսահայտ հարցեր:

Իշխանությունն ու ժողովուրդը Հայաստանում վաղուց արդեն շարժվում են չհատվող հետագծերով՝ տարված սեփական հոգսերով և տագնապներով: Ժամանակ առ ժամանակ երկխոսության երկարատև դադարներն ընդմիջվում են իշխող վերնախավի ներկայացուցիչների առանձին ելույթներով, որոնք, որպես կանոն, ոչնչով չեն ավարտվում և ոչ մի շարունակություն չեն ունենում: Ժողովուրդը շարունակում է պահպանել կատարյալ լռություն:

Հարաբերությունները սփյուռքի հետ վերջին տարիներին նկատելիորեն աշխուժացել են, թեև իրենց վրա կրում են նախկին ժամանակների որոշակի առճակատման դրոշմը: Դեռևս 1946 թ. հայրենիք ժամանած հայ հայրենադարձներն այդպես էլ լիովին չհարմարվեցին և առաջին իսկ հնարավորության պարագայում մեկնեցին Արևմուտք: Տեղի հայերն այն ժամանակ նրանց ընդունեցին շատ ջերմ ու գրկաբաց, բայց շուտով զգացնել տվեցին տարբերությունները՝ դաստիարակության, մշակույթի, առօրյա սովորույթների և վարքի մեջ: Հայրենադարձ հայերին անվանակոչեցին «աղբարներ»՝ «ախպարներ» (արևմտահայերենով այդպես է արտասերվում «ախպեր» բառը, որ նշանակում է եղբայր), ինչն ինքնին արդեն վկայում է «մենք»-ի և «նրանք»-ի սահմանազատման մասին:

Այժմ դիտվում է հակառակ պատկերը: Հին հայկական սփյուռքն արտերկրում այնքան էլ մեծ ոգևորությամբ չի վերաբերվում այն հայերին, որոնք լքում են անկախ Հայաստանը՝ աշխատանքի և լավ կյանքի որոնումներով: Նրանք զգուշավորությամբ են ընդունում եկվորներին, անվանում են նրանց «հայաստանցի» (բառացիորեն՝ «Հայաստանից»)՝ այդպիսով յուրօրինակ հոգեբանական սահմանազատում անցկացնելով իրենց և «հայաստանցիների» միջև:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի բնակիչները շատ բարձր են գնահատում այն

[134] О доминантах массового сознания. – В кн.:Россия на рубеже веков. М., РОССПЭН, 2000, с. 365.

վիթխարի բարոյական և նյութական օգնությունը, որ ցուցաբերում են սփյուռքի հայերը, ինչպես նաև նրանց չափազանց կարևոր և արդյունավետ աջակցությունը երիտասարդ հայկական պետությանը՝ միջազգային բանակցություններում և դիվանագիտական հարաբերություններում: Եղեռնագիտության զգացումը ծածկում է կենցաղային կամ հոգեբանական հողի վրա ծագող մանր գժտությունները: Ճիշտ նույն կերպ էլ սփյուռքի հայերն են աչք փակում կյանքի շատ հանգամանքների վրա՝ հանրապետության ներսում, որոնք բացահայտորեն նրանց սրտով չեն, հիանալի գիտակցելով, որ դրանք կարող են ժամանակավոր քնույթ կրել, և որ ամենագլխավորը՝ հայրենիքին օգնել է՝ դառնալու ուժեղ, զարգացած և ժողովրդավարական պետություն: Նրանց համար, ովքեր շատ տարիներ ապրել են օտարության մեջ և չեն ունեցել ազգային պետականություն, շատ կարևոր է գիտակցել, որ իրենց թիկունքին կանգնած է Հայաստանի անկախ պետությունը: Խորհրդանշական է, որ վերջերս բազմաթիվ լիբանանահայեր՝ Իսրայելի կողմից իմտենսիվ ռմբակոծությունների ժամանակ, նախընտրեցին ժամանակավորապես պատսպարվել Մայր Հայրենիքում:

2.8. ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԾՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային պետության գաղափարախոսության և ազգային քաղաքականության կարևոր բնութագրերից էր ազգայինի նվազեցումը, խորհրդային ազգերի այսպես կոչված մերձեցումը և, ի վերջո, ուծացումը: Խորհրդային կարգերի անկումից հետո ազգային ինքնագիտակցությունը որպես ընդվզում նախկին քաղաքականությանը, յուրահատուկ վերածնունդ ապրեց: Որոշ հեղինակներ գտնում են, որ ազգային ինքնագիտակցության սրումը տեղի է ունենում ցանկացած փոխակերպվող հասարակության մեջ: Այդ կապակցությամբ Ի.Վ. Տատարենկոն գրում է. «Պատմական հետազոտությունները հաստատում են, որ գոյություն ունեցող արժեքների, վարքի նորմերի կանոնների համակարգի քանդման դեպքում մեծ քանակությամբ մարդիկ ազգային նույնականությունը սկսում են ընկալել որպես կայունության, ավանդույթների հետ կապի այն կղզյակը, որը կայունություն է տալիս նրանց գոյությանը»[135]: Ազգային ինքնագիտակցության սրման հետ միաժամանակ արթնացան նաև խորհրդային պետության մեջ արհեստականորեն կոծկված ազգային հիմնախնդիրները՝ հիմք հանդիսանալով զանազան ազգային ու ազգայնամոլական շարժումների, միջէթնիկական կոնֆլիկտների համար: Ազգային ինքնագիտակցության արթնացումը բերում մտցրեց մեր ազգի զարգացման հազարամյակների պատմություն ունեցող գործընթացի մեջ: Ըստ որում, հետեղեռափոխական շրջանի ազգայնամոլական միտումները շատ արագ իրենց տեղը զիջեցին կոնստրուկտիվ զարգացումներին: Այդ զարգացումներից նախ և առաջ պետք է նշել ազգային շահերն արտացոլող քաղաքականությունը, ազգային իդեալների ճևավորումը: Վերջինս համարվում է ազգային ինքնագիտակցության զարգացման կարևորագույն մի փուլ, յուրահատուկ փարոս, որն արտացոլում է ազգային մոտակա և հեռակա նպատակներն ու զարգացման ուղղությունները[136]: Այդ ուղղություններից այսօր պետք է կարևորել ազգային ինքնագիտակցության երկատվածության հաղթահարման գործընթացը: Հնուց ի վեր մեզանից յուրաքանչյուրի ազգային ինքնագիտակցության մեջ առանձնացված են արևմտահայն ու արևելահայը: Այդ երկատվածությունը յուրահատուկ մենքի ու նրանքի արժեք ուներ՝ որոշակի անվտահության, հակադրվածության դիրքորոշումներով: Վերջին տարիներին այս երկատվածության որոշակի մեղմացում է նկատվում: Պատճառը մի կողմից արևմտահայության ու արևելահայության շփումների կտրուկ աճն է, որը պայմանավորված է արտերկրում ազատ տեղաշարժվելու, ինտերնետի միջոցով իրար հետ շփվելու հնարավորությունների ընդլայնմամբ: Օրինակ, ինտերնետում, ինչպես հայտնի է գործում են բազմաթիվ հայկական կայքեր, այսպես կոչված «չաթեր», որոնցում ամենատարբեր երկրների հայերն իրար հետ շփվում են, ծանոթություններ հաստատում, ներկայացնում միմյանց պրոբլեմները: Հայաստանի Հանրապետության կյանքում արևմտահայերի ներկայությունն այսօր նկատելիորեն մեծացել է: Այսօր արտերկրի հայության ներկայացուցիչները մեզանում ավելի ու ավելի մեծ տեղ են զբաղեցնում բիզնեսում, ակտիվորեն մասնակցում են քաղաքական կյանքում, ներկայացված են խորհրդարանում, բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցնում: Արվեստի, մշակույթի, գիտության ոլորտի շատ գործիչներ տեղափոխվել են Հայաստան ու իրենց կարիերան այստեղ են իրականացնում: Ազգային ինքնագիտակցության երկատվածության հաղթահարման մասին են վկայում խառը ամուսնությունները,

[135] Татаренко И.В. Национальная идентификация в переходных обществах. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата философских наук. М, 2003, с. 8.

[136] Նույն տեղում:

որոնք այսօր տասնապատիկ ավելացել են: Արտերկրի շատ հայեր, նույնիսկ զարգացած երկրներից տեղափոխվում են Հայաստան, ամուսնանում ու մշտական բնակություն հաստատում այստեղ:

Ազգային ինքնագիտակցության երկատվածության հաղթահարման ուղղությամբ շոշափելի ջանքեր է իրականացնում նաև պետությունը: Խոսքը համահայկական միջոցառումների՝ սպորտային խաղերի, գիտական ու մշակութային հավաքների, երիտասարդական միջոցառումների, տուրիստական արշավների և այլնի մասին է, որ կազմակերպվում է պետության հովանավորությամբ: Այս ուղղությամբ ընդունելի քայլ կարելի է համարել երկքաղաքացիության մասին օրենքի ընդունումը: Չափազանց կարևոր ենք համարում նաև այն, որ արևմտյան Հայաստանում իրականացված գենոցիդի ընդունման հիմնահարցը պետական մակարդակով է բարձրացվում, ինչն էլ ավելի է նպաստում այն որպես համահայկական հիմնախնդիր ընկալելուն (հարկե, նախկինում էլ արևելահայությունը գենոցիդն իր հիմնախնդիրն էր համարում, սակայն առաջ, պետությունը, հայտնի հանգամանքների բերումով չէր կարող բացահայտորեն բարձրացնել այդ հարցը):

Դրական կողմերի հետ միաժամանակ առկա են նաև ազգային նույնականության վրա բացասական ներգործություններ ունեցող հանգամանքներ: Դա նախ և առաջ այսպես կոչված գլոբալիզացիոն գործընթացներն են, ինչը ազգային նույնականության հետ կապված լուրջ տագնապներ է հարուցում ոչ միայն մեր, այլև համաշխարհային մակարդակում: Այդ կապակցությամբ Կ.Ռ. Բարեժևը գրում է. «...ազգային նույնականության փետրուարի գործընթացը ժամանակակից աշխարհում համընդհանուր պատմական և սոցիումշակութային միտում է, որը մտել է իր զարգացման ճգնաժամային փուլը»[137]: Կարծում ենք, որ մեզանում նման ճգնաժամի մասին խոսելն առայժմ վաղ է, սակայն այնուամենայնիվ, պիտի ենթադրել, որ համաշխարհային զարգացման գործընթացները մեզ էլ հանգեցնելու են դրան:

Ազգային ինքնագիտակցությանը և նույնականությանը սպառնացող մյուս վտանգավոր ներգործությունը մասնագետները կապում են աղանդավորական

[137] Барежев К.В. Современный российский кризис и проблема национальной идентичности // Человек постсоветсткого пространства: Сборник материалов конференции. Выпуск 3 / Под ред. В.В. Парцвания. — СПб.: Санкт-Петербургское философское общество, 2005, с. 99.

շարժումների հետ[138]: Դրանց գաղափարախոսությունների նույնիսկ մակերեսային վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ առաջնային նպատակներից մեկը հավատացյալների մեջ ազգայինի աղավաղումն է, վերացական կոսմոպոլիտիզմի սերմանումը, ազգային արժեքների, ծեսերի ու սովորությունների փոխարինումը օտարամուտ, հաճախ դեստրուկտիվ արժեքներով, ավանդույթներով, որոնց հիմնական նպատակը մարդուն լիակատար կախվածության մեջ պահելն է:

[138] Նույն տեղում, էջ 99-103: